Բարի

ԷՄՍԿԳԻՐ

Գրականա-թեմատ
և Արտ-էսպի

7629

ԺԳ. ՏԱՐԻ
ԹԻՎ 5
ՄԱՅԻՍ 1974

digitised by A.I.A.R.©

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

* * *	Խօսք՝ բարի գալուստի
Հ. ՍԱՀԵԱՆ	Բանաստեղծութիւններ
* * *	Վկայութիւններ Համօ Սահեանի մասին
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Փշալարացանկերի եզրերին
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Անցորդին
» »	Անյարուցեալ խաչելութիւն
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Սիրածիս մանչը
Մ. ԹԱՒՐԻԶԵԱՆ	Մտորումներ
» »	Թափուր է հոգիս
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Հորիզոնէ հորիզոն
* * *	Նոր տոմարներ եւ նախերգանք նորագոյն տոմարի
Շ. ՇԱՀՆՈՒՐ	Խորտակուած նամակատուփ
Բ. ԵՂԻԱՑԵԱՆ	Ժողովրդային հոգեբանութիւնը «Քաջ Նազար» հեքիաթին մէջ
Ն. ՁԱՐԽՈՒՏԵԱՆ	Ֆրանսական ժամանակակից բանաստեղծութիւնը
Ց. ԿԱՐԱՊԵՆՑ	Նիգոս Գազանճագիսի «Ճգնութիւն»ը ըստ Մարգար Շարապխանեանի
Ն. ԳԱԶԱՆՃԱԳԻՍ	Ցեղը
Խ. ԴԱՇՏԵՆՑ	Զարենցին
» »	Յիշողութիւններ Զարենցի մասին
* * *	Նշմարներ

162-2000

digitised by A.R.A.R.@

Բազմն

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԴ. ՏԱՐԻ. ԹՈՒՄ 5 — ՄԱՅԻՍ 1974 — ՊԷՅՐՈՒԹ

ԽՕՍՔ՝ ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ

Լիբանահայ Գրական Շրջանակի հրաւէրով՝ 20 Ապրիլին Պէյրութ ժամանեց հայերէնի բանաստեղծ Համօ Սահեան։

Համաշխարհային Երկրորդ պատերազմին ու պատերազմի ամենաքէմ պահերուն գրած իր բանաստեղծութիւններով՝ Համօ Սահեան մէկ օրէն միւսը դարձաւ տիրելի անուն մը եւ այսօր, ուելի հիշողը՝ երկու տասնամեակներէ ի վեր կը համարուի ներկայ Հայաստանի գրական բանաստեղծներէն մէկը։

Բարի, բուխ, լրջախոհ, կեանք քաշուած այս մեծ շնորհը չվատնելու տագնապով ալեկոծ, կեանքին վրայ բան չդառնալու նախանձախնդրութեամբ լեցուն, կեանքին բեռը չափով մը թեթեւցընելու մտադրութեամբ ճգնող, տառապող, արարող խառնուածքը եղաւ Սահեան, մեր բանաստեղծի ընդերքներէն բխած հարազատ ինքնութիւն մը, որ նոյն բանաստեղծին չարժուն ու անչարժ, լուռ կամ հնչող անհատականութիւններուն հետ բնական ներդաշնակութիւն մը կազմած ներկայացաւ էջերուն, գիրքերուն, հոգիներուն, ներկայացաւ հողին հետ, ու հողին պէս արգաւանդ սիրտ մը դրաւ տողերուն մէջ, հողակից քարին հետ, ու քարին տարբերից դառնալու յաւերժատենչ խորհուրդ մը յուշեց, ծաղիկին հետ, ու հոգեկան ուրիշ բուրում մը ծաւալեց, ջուրին հետ, ջուրէն թեւադրուած իմաստութեամբ, քարտիին հետ, կենսատու խշշիւնով, արեւին հետ, քարափին հետ, ամպին հետ՝ վառելով, վարարելով, փոխակերպելով չարունակ , փոխակերպելով իր տեսած, իմացած, չչափած նիւթերը։

Հարատեւելով բնութեան պատկերներով եւ խառնուածքային իր շնորհներով հարստացրելով բնութեան նոյն պատկերները՝ Սահեան կազմեց իր երկրորդ կեանքը, բանաստեղծական իր աշխարհը որ «Հայաստանոյ եղաւ ընդհանրապէս, քայլ երբեք գուրկ չմնաց մեր օրերու զգայնութիւններէն, հոգերէն, բարդութիւններէն ու հակասութիւններէն։ Իրարու լրացուցիչ այս երկու հմտարարութիւններուն շնորհիւ էր, որ անոր անունը հնչեց նաեւ տարբեր երկիրներու տակ, տարբեր լեզուներով։

Ցաւորդ էջերուն կու տանք իրմէ քանի մը բանաստեղծութիւն, նախքան անուններէ վերլուծութիւններու փունջ մը եւ իր մէկ գլուխ-գործոցին ծնունդի պատմէնը։

digitised by A.R.A.R.@

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բանաստեղծութիւնն — այդ սրբագործուած,
Ինձանից պոկուած իմ էութիւնն է,
Աշխարհի առաջ աշխարհով փորձուած
Իմ խստութիւնն ու իմ մեղմութիւնն է:
Այդ — արեան եռքն է իմ երակների,
Խոհերիս խորհուրդն ու խտացումն է,
Այդ — կրկնութիւնն է իմ անկրկնելի
Եւ իմ գոյութեան փոխհատուցումն է:
Բանաստեղծութիւնն — այդ մարդկանց հանդէպ,
Ու ծաղկանց հանդէպ իմ ջերմութիւնն է:
Հողմի, ամպրոպի, կայծակների հետ
Իմ քառատրոփ մտերմութիւնն է:
Այդ — իմ մէջ փրկուած ապնիւն ու բարին,
Իմ լացով կնքուած անմեղութիւնն է...
Բանաստեղծութիւն գրելու պահին
Ամբողջ աշխարհը իմ տեղ ու տունն է:

●

Ոտքիս տակ մի մեծ սար է սարսռում,
Եւ գլխիս վերեւ երկինք է մի մեծ...
Տիեզերքն իմ մէջ իրեն է փնտռում,
Եւ գրնգում է տիեզերքն իմ մէջ:

Տիեզերքի հետ խառնուել այսպէս, —
Իրար խառնելով դարերն ու տարին,
Տիեզերքով մէկ հաստատում եմ ես
Յաւիտենութիւնն ակնթարթային:

ԹԷ ՈՎ ԵՄ ԵՒ ԻՆՉ

Աչքն ու ականջն եմ ես մայր քնութեան,
Գիտակցութիւնը նրա մարմնաւոր,
Հասակակիցն եմ նրա հնութեան
Եւ ծլարձակումն ու ծաղկումը նոր,
Նրա այս մի բուռ պատկերն ու նրա
Յաւիտենութեան աղերսանքն եմ ես:

Շնչառութիւնն եմ ես տիեզերքի,
Փորձառութիւնը նրա շնչաւոր,
Մոլորակների փոխայցելութեան
Ու մտերմութեան հաւատամքը խոր
Եւ նրանց բոլոր հարսանիքների
Համալարկերի արձագանգն եմ ես:

Բայց քո՛ աչքերը հարցնում են դարձեալ
Թէ ո՞վ եմ ես ի՞նչ,
Եւ իմ ճանապարհն ո՞ւր է վերջանում:

(Հատուած)

digitised by A.R.A.R.@

Սանդուխ դալար բաղդի

Հանկարծ ես ու շարարում գրաբարի քո շարքում,
Դուք ասաս ձեռքի վրա նահանջության կնիքը արի,
Քո կյանքը գրքում է դի մի հոգու խոր ցավում,
Իմ հնում, հնում, հնում Հայության դալար բաղդի:

Այս, ասում խարդախ մեկն բանիս գնում կանաչ բաղդի,
Եվ հնումից մեզ ես գալիս կարդալու կրակ արի,
Գնում ես դարերի ամեն հարվածներ ու խոցում,
Իմ հնում, հնում, հնում Հայության դալար բաղդի:

Մի ազգության - տեսնելի ամեն խարդում է քո շարքում,
Քո քարերի հիշ է շարում շարքերում կոչած հոգի,
Դուք ասաս դրա կյանքին, հոր ձեռ գիտի ամենում,
Իմ հնում, հնում, հնում Հայության դալար բաղդի:

Եվ հիշիր հի, արի, դուն գրքեր քո սիրելի շուտ,
Մեզ ինչ կանաչ կարդալ մեզ հանար ելնում ցանի,
Ինչ ասեմ, Դարձի ու դու դարձում ասում խոսում,
Իմ հնում, հնում, հնում Հայության դալար բաղդի;

1942–1944 Զատիկ Հարությունյան

digitised by A.R.A.R.@

●

Մարմին է տուել իր հին երակին
Իմ հին Հայաստանն իր փրկուած հողով,
Բայց դեռ արցունք է խառնում Արակին
Իմ հին Հայաստանն իր կրկուած հողով:
Ա՜խ, ես ինչ ասեմ անսիրտ Արակին,
Որ սիրտս կիսած անցնում է միջով:

●

Ախր ես ինչպէ՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպէ՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրենիներ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկայ,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկայ,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկայ:

Ախր ես ինչպէ՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպէ՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ
Հողի մէջ այսքան օրհնութիւն չկայ,
Այսքան վաստակած յոգնութիւն չկայ:
Ախր ուրիշ տեղ ձիւնի մէջ՝ արեւ,
Եւ արեւի մէջ այսքան ձիւն չկայ:
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,
Եկած ուսերով Արագած սարի,
Ուսերին յենուած Սասնայ տուն չկայ:
Ախր ուրիշ տեղ
Ամէն մի քարից, առուից, ակօսից
Իմ աչքերով իմ աչքերին նայող
Մանկութիւն չկայ...

Ախր ես ինչպէ՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպէ՞ս ուրիշ տեղ մնամ,
Ախր ես ինչպէ՞ս ապրեմ առանց ինձ:

ԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՆ ԵՄ

Իմ արմատները...

Քարերի մէջ են
Իմ արմատները:
Նախաստեղծ ու բիրտ
Ցաւիտենութեան
Դարերի մէջ են
Իմ արմատները:

Իմ սաղարթները...

Սարերի մէջ են
Իմ սաղարթները...
Անաղարտ ու կիրթ
Ցաւիտենութեան
Արեւի մէջ են
Իմ սաղարթները:

Այս ես եմ: Այսքանն եմ:
Ես Հայաստանն եմ:

●

Քո շրթունքները Հայաստանում են,
Հայաստանում են քո շշուկները,
Քո ժպիտներն ու արտասուքները
Հայաստանում են:
Հայաստան հիւսող քո այդ ձեռքերը
Քո արդէն գրուած ու դեռ չգրուած
Բոլոր երգերը Հայաստանում են:
Հայաստանում են քո ապրած կեանքի
Բոլոր էջերն ու ելեւէջները:
Քո տանջանքներն ու երազանքները
Հայաստանում են...
Եւ դու այնքան ես հայ ու Հայաստան,
Որ մինչեւ անգամ Հայաստանից դուրս
Քո անցած բոլոր ճանապարհները
Հայաստանում են:

digitised by A.R.A.R.@

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

● Այս այն վարպետն է, որը «ոչ բանաստեղծական» նիւթից կարող է ստեղծել լիահնչուն արուեստի գործ:

Գ. ՄԱՀԱՐԻ

● Համօ Սահեանի պոեզիան բարդ է իր էութեամբ, որովհետեւ բարդ է ժամանակակից մարդու հոգին եւ հասարակ է (աւելի ճիշդ՝ հասարակ է թւում) ձեւով, որովհետեւ բանաստեղծը ոչ մի բան եւ ոչ մի անգամ չի մանրացնում:

Ա. ՏԱՐԿՈՎՍԿԻ

● Համօ Սահեանը բերում է քայլեր ու գոյներ, անմեկնելի տրամադրութիւններ, լացախառն ժպիտ ու կնճիռներ, անբռնազբօս ուժով ստեղծում կախարդական պատկերներ, որոնք ե՛ւ պատմութիւն են, ե՛ւ հասարակական բովանդակութիւն, եւ այդ բոլորի հետ միասին՝ մտերիմ ու սրտաշարժ անձնական ապրումներ:

Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ

● Մարդու հոգեւոր կրակներից մէկն էլ քնքշութիւնն է, որ Սահեանը կարողանում է հիւսել քարից ու ամպրոպից, որոտներից ու հողմերից, որոնց հետ նրա պոեզիան «քառատրոփ մտերմութիւն է հաստատել» դեռեւս երեսուն տարի առաջ, «Նայիրեան դալար բարդու» ծննդեան օրից:

Վ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

● Սահեանն օժտուած է պոետական սուր տեսողութեամբ, որից, թւում է, բնութիւնը գաղտնիքներ չունի: Որպէս իսկական արուեստագէտ, նա կարողանում է «նկատել աննկատելին, լսել անլսելին», որսալ դժուար ընկալելին:

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

● Սահեանը երգում է բնութիւնը՝ մարդկանց հետ, բնութիւնը ներկայացնում է գիւղաշխարհին ձուլուած, որպէս գեղեցկութիւնների միասնութիւն:

Ս. ԱՂԱԲԱԲԵԱՆ

● Համօ Սահեանի ստեղծագործութիւնները պարզ ու յստակ մտածողութեան արդիւնք են եւ աչքի են ընկնում բնական գեղեցկութեամբ: Սահեանի պոեզիան չի սիրում աւելորդ զարդարանքներ, նրան խորթ են ճչացող ու մոդայիկ նամարտակութիւնները:

Գ. ՀԱՅՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԳԵՏԻ ԵԶԵՐՔՈՎ

Լցուած աշխարհքով ու տիեզերքով,
Խոր գիշերուայ մէջ
Թափառում եմ ես գետի եզերքով:
Հալւում եմ, հիւսւում բնութեանը մեծ,
Կարծես թէ ես գետ, գետն է բանաստեղծ,
Եւ թափառում է գետն իմ եզերքով —
Լցուած աշխարհքով ու տիեզերքով:

●

Արարման կաւի նախաստեղծ գնդից,
Մարդկային տոհմի առաջին հունտից,
Աննշմարելի մպանոթներով,
Քո խռովքներով, քո կարօտներով,
Ցաւիտենութեան ճանապարհներին
Քեզ հետ կռուելով,
Ու մաքրուելով,
Եկել-մտել ես երակներիս մէջ
Եւ այսքան տարի վառում ես անվերջ:
Վառում ես անվերջ ու լոյս ես դառնում,
Հաւատ ես դառնում, արուեստ ու գինի...
Եւ չկայ ոչինչ,
Որ գէթ մի ժամով քեզ փոխարինի:
Բայց այս աշխարհի
Միջակութիւններն ամէն առիթով,
Երբեմն էլ, այնպէս, առանց առիթի, —
Թէ ինչի համար, սատանան գիտի, —
Պղտորում են քեզ
Եւ մինչեւ անգամ փորձում են քեզնով
Լուանալ իրենց ձեռքերը բռի:
Իսկ միջատները...
Հազար փորձանքով փորձուած իմ արի՛ւն
Միջատները քեզ խմում են ձրի:

●

Ծովն էր, գիշերն էր, ես էի եւ դու,
Զորս հոգով էինք, էլ ոչ ոք չկար,
Թէ իմանար մեզ ինչից է կրկում,
Առաւօտն ինքն էլ երեւի չգար:

Մենք մեզ իրար մէջ որոնում էինք,
Դաշնութիւնն էինք հիւսում մեր հոգու,
Աստղերից կախուած օրօրւում էինք...
Ծովն էր, գիշերն էր, ես էի եւ դու:

ԳՈՒՑԷ ՀԵՆՑ ԱՅՍՏԵՂ

Ինձ թւում է, թէ մի քանի անգամ
Հերքել եմ արդէն
Ես անդարձութեան օրէնքն անողոք:
Մի քանի անգամ գնացել-եկել,
Ապրել եմ այսպէս եւ ապրում եմ դեռ:
Ինձ թւում է, թէ մի քանի անգամ,
Ամենավերջին վերջինն եմ եղել
Եւ սպասում եմ վերջնական վերջին:
Ինձ թւում է, թէ մի քանի անգամ
Տեսել եմ արդէն յաւիտենութեան
Ամենավերջին ակնթարթը ես,
Որից դէնը դեռ
Կայ մի անսահման յաւիտենութիւն:
Ինձ թւում է, թէ մի քանի անգամ
Եղել եմ արդէն անսահմանութեան
Ամենավերջին սահմանի վրայ,
Որից դէնը դեռ
Կայ մի անվախճան անսահմանութիւն:
Եւ ի՞նչ իմանաս չենք հանդիպելու
Ամենավերջին յաւիտենութեան
Ամենավերջին ժամի ժամանակ,
Ամենավերջին անսահմանութեան
Ամենավերջին սահմանի վրայ,
Գուցէ հենց այստեղ եւ այս նոյն պահին:
— Խփիր, այս պահի կենացը խմենք,
Մի վայրկեան յետոյ գուցէ չլինենք:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

ՓՇԱԼԱՐԱՑԱՆԿԵՐԻ ԵԶՐԵՐԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆԴՈՒՆԴՆԵՐԸ

Ես մոռացել էի։ Մորոզովան էր, որ խօսեց անդունդների մասին։ Բայց ես կարծում եմ, որ նա միայն փասան ուզեց նշել։

Գիշեր էր։

Սենեակում հանելի տաք էր, մաքրութիւն, անդորր եւ մի երիտասարդ չգիտ կին։ Զորս տարի համատարած աղտոտութեան մէջ ապրելուց եւ տառապանքների բոլոր տեսակները կրելուց յետոյ, այդ առաջին անգամ էր, որ վայելում էի մարդկային մի այդպիսի ճոխութիւն։

Մենք նստած էինք դէմ դիմաց։ Նա ինձ չէր քննում եւ աչ էլ ուրիշների պէս գրչածայրով ծակծկում էր ձեռքերս եւ դէմքս։ Ընդհակառակն, թըւում էր, որ ես նրա հիւրն էի եւ մենք զրուցում էինք։ Միայն թէյն էր պակաս։

Նա զլում էր իմ հիացումն իրմով։ Գիտէր, որ այրւում եմ իր համար, եւ դէմ չէր։ Հրճւում էր։

«Ասուած իմ, — մտածում էի, — ինչպէս երեւում է, կալանաւորն էլ երջանկութեան մի օր է ունենում»։

Սակայն, նա խօսեց անդունդների մասին։

— Մի մոռացիր, — ասաց նա, — որ քո եւ իմ միջեւ անդունդներ կան եռացող լաւայով եւ մխացող ծծումբով լիցուն...։

Ես ցնցուեցի եւ յետ քաշուեցի սեղանից։

Նա նկատեց այդ եւ արդարացաւ չփոթուած։

— Բայց ես չեմ, որ փորել եմ այդ անդունդները...։

— Գիտեմ, — ասացի անտարբեր։

Ես թէեւ կալանաւոր էի, բայց հպարտ էի։ Ե՞տ։

Բայց նա նորից՝ ուզեց բացատրել։ Նա շատ էր ուզում, որ ես սխալ չհասկանայի իրեն։ Նա չէր ճանաչում իմ ստրկական հանգամանքը։

— Ես ուզեցի ասել, որ դու բանտերի հատ ու բարձր պարիսպների եւ երկաթեայ դռների յետեւում ես գտնւում... Արգելքը մեծ է եւ հեռաւոր քեզ պէտք չէ խորանալ քո զգացումների մէջ, — ասելի ու ասելի չփոթուելով ասաց նա։

digitised by A.R.A.R.@

— Ուզում էք ասել, որ ես անազատ եմ, եւ հետեւապէս մի գեղեցիկ կին ինձ համար չէ՞ — հարցրի դառնութեամբ։

— Ոչ, ես այդ չեմ ասում, — անկեղծութեամբ ուղեց արդարանալ նա, — ես ուզում եմ քեզ յիշեցնել բանաւոր պարիսպները, որպէս խուշընդոտ քո ազատութեան... Ես չատ կ'ուզէի, որ այդ պարիսպները չլինէին... Ես ատում եմ բանտերը։ Դրանք ամօթի բռնաւորներ են մարդկութեան համար...։

Ես նայեցի նրան եւ հասկացայ, որ նա չէր ուզում, որ ես այն տպաւորութիւնն ունենայի, եթէ ինքը կողմնակից էր մեր միջեւ գտնուող խորխորատներին կամ բանաւոր պարիսպներին։ Այդ, անշուշտ, նրա մեծհոգութիւնն էր ցուցադրում, այլ կերպ՝ նա կարող էր ամենեւին էլ չմտահոգուել, թէ ես ինչ տպաւորութիւն կը ստանայի նրա ասածից։

— Ես ձեզ հասկանում եմ, Աննա Մորոզովա, — ասացի ձայնի այնպիսի երանգով, որով ինձ մատնեցի, որ նորից սկսեցի խենթանալ նրանով, — եւ եթէ դուք ցանկանում էք, որ չլինեն բանտային պարիսպները, ապա ցանկացէք, որ չլինեն նաեւ փշալարացանկերը։

— Փշալարացանկե՞ր, — հարցրեց նա այնպէս, որ ցոյց տուեց, որ չը-գիտէր փշալարացանկերի մասին։

— Այո՛, — ասացի, — ինձ մօտ անազատութեան խորհրդանիշը միշտ միաձուլուում է բռնակալութեան խորհրդանիշի հետ։ Իսկ բռնակալութեան չարախնդ դէմքը միայն պարզօրէն փշալարերով ցանկապատուած ծանր աշխատանքային ճամբարներում է երեւում եւ ոչ բանտերում։ Ձեր նշած խորխորատները վերացական են։

— Ինչո՞ւ է այդպէս։

— Որովհետեւ ես կարծում եմ, — ասացի, — որ բանտերը հորիզոն չունեն եւ հետեւապէս ազատութիւնը մարմնապէս չի երեւում կալանաւորին, իսկ աշխատանքային ճամբարներն ունեն։ Ինձ համար ազատութիւնն երբեք այնքան քաղցր չի երեւացել, ինչպէս աշխատանքային ճամբարում, երբ ես կանգնել եմ փշալարացանկի եզրին եւ նրա արանքով նայել եմ հեռուում կապոյտին տուող հորիզոնին։ Նման դէպքերում, ինձ համար, հորիզոնը միշտ էլ ազատութեան խորհրդանիշ է թուացել, իսկ փշալարացանկը՝ բռնակալութեան... Եւ եթէ մի օր մի նկարիչ ինձ հարցնելու լինի, թէ ինչպէ՞ս պատկերացնել անհատի անազատութիւնը նկարի միջոցով, ես նրան կը թելադրէի նկարել փշալարացանկ եւ նրա յետեւում կանգնած մէկին, որը հեռաւոր հորիզոնն է նայում կարօտով եւ արցունքոտ աչքերով։

— Ինչպէս որ հիմա ես նայում։

— Հիմա ես ձեզ եմ նայում, ինչպէս կապոյտ մի հորիզոնի։

Նա ինձ նայեց եւ նրա դէմքը ցնցուեց յուզմունքից։

— Թող չլինեն բանտային պարիսպները եւ փշալարացանկերը, — սրբատանց ասաց նա։

1

ԶՄԱՑԼԱՆՔ ԵՒ ԱՆԱՐԳԱՆՔ

Աննա Մորոզովայի եւ իմ հանդիպումը տեղի ունեցաւ իմ երկրորդ ձերբակալութիւնից մօտ երեք ամիս յետոյ։

Ձերբակալութիւն բառը ես ծիծաղելով եմ գրում, որովհետեւ իմ երկրորդ ձերբակալման ժամանակ ես արդէն ձերբակալուած էի եւ դատապար-

digitised by A.R.A.R.@

տրված։ Այդ չորս տարի առաջ էր, երբ ինձ դատել էին առանց դատարան տանելու, եւ տասը տարուայ ծանր աշխատանքի դատապարտել, երբ ես կարծում էի, թէ իմ քննութիւնը դեռ չարունակւում էր։

Իմ երկրորդ ձերբակալութիւնը զաւեշտական կը լինէր, եթէ այն ողբերգական չլինէր։ Միաժամանակ, իմ նոր ձերբակալութիւնը թերեւս թեթեւութիւն բերէր ինձ, եթէ ժամանակը ձմեռ չլինէր։ Սիբիրում ձմեռը սպիտակ դժոխք է։ Սարկանոցը, ուր ինձ երկրորդ անգամ կալանաւորեցին, Սիբիրի հիւսիսային ծայրերում էր, իսկ քաղաքը, ուր ինձ քննութեան էին տանում, Սիբիրի կենտրոնական մասում։ Մօտ մէկ ամիս, վեց պահակներ եւ ես, մի մեծ դեռն ատոյգի վրայով հարաւ էինք քայլում։ Պահակները, ոչինչ, լաւ էին պաշտպանուած ցրտի դէմ, բայց ես, ամէն օր, ամէն ժամ, ամէն վայրկեան բառիս լայն իմաստով տառապում էի։ Մա՛նաւանդ որ՝ բաբրկանոցում ես արդէն հիւծուել էի ու սպառուել։

Ինձ տեղ հասցնելուց եւ սիբիրեան այդ քաղաքի քաղաքական ոստիկանութեան նորակառոյց չէնքի դիտայարկային բանտում երկու ամիս պահելուց յետոյ, մի գիշեր էլ կանչեցին քննութեան։

Եթէ մի հրաշքով, ասենք, պահակներն ինձ խուցից դուրս հանելուց ասէին, թէ իմ քննիչը կին էր, ես չէի գնայ։ Ցեւտ կը փախչէի խուցը, բայց չէի գնայ։ Ո՛չ։

Ճիշդ է, որ իմ առաջուայ քննիչները տղամարդիկ լինելով, ինձ ահռելի տանջանքների էին ենթարկել, բայց նորից ասում էին, որ աւելի լաւ էր տղամարդ քննիչ ունենալ, քան թէ կին։

Ինձ բախտակից այն կալանաւորները, որոնք կին քննիչներ էին ունեցել, զգիր բաներ էին պատմում նրանց մասին։ Անշուշտ, խոշոր տանջանքները նոյնն էին, բայց կին քննիչները նաեւ գրչածայրով ծակծկում էին իրենց դիմացը նստած կալանաւորների դէմքերը, ա՛յնպէս, որ կարծես իրենց գրիչները թանաքամանի մէջ էին թաթախում։ Գրչածայրի այդ խոր ծակոցներից կալանաւորների երեսներն ու ձեռքերը ուռչում էին, կարմիր-կապոյտ գոյն ստանում։ Շատերն աբեան վարակում էին ստանում։ Այդ բոլորից բացի, կին քննիչները, որոնք մէջտ էլ հարբած էին լինում, կալանաւորներին հայհոյում էին փողոցային ատահակների պէս։

— Ես քո...

Սենեակն, ուր պահակներն ինձ ներս տարան, մեծ չէր։ Սենեակի ձախ կողմի պատի վրայ լուսամուտ կար, որը ծածկուած էր երկու կողմից իրար վրայ քաշուած ծանր վարագոյրներով։ Սենեակի վերեւի աջ անկիւնում մի ծանրանիստ սեղան կար, որի առջեւ մի երիտասարդ կին էր նստել եւ ինչ-որ բան էր գրում արագ-արագ։ Կնոջ կողմից՝ սեղանի ձախ ծայրին գրուած լուսամփոփուած լամպայի լոյսը լուսաւորում էր նրա խարտեաշ հարուստ մազերը եւ դէմքի ձախ կողմի վերեւի մասը։ Նրա դէմքը լրիւ չէր երեւում։ Բայց շնորհիւ նրա ձիւնի պէս սպիտակ զարդաշապիկի փայլին, երեւում էր նրա գեղեցիկ ծնօտը, որը խրուել էր, ներքին կենսից պրկուած, եւ դէպի վեր սլացող, նրա բարձրագիր ու փարթամ կրծքերի ծայրերի արանքը...

Սիրտս խփեց։

Ես, մինչ այդ, կանացի մարմնային այդպիսի գեղեցկութիւն ու հրաշալիք չէի տեսել։ Թւում էր, թէ նա յատուկ մի պատուէրով էր ստեղծուած։ Գեղագէտ մի նկարիչի նախապէս պատրաստած մի ուրուագծի հիման վրայ։

Իրապէս, նա եզակի մի արարչագործութիւն էր, բնութեան արտակարգ պարգեւ։

digitised by A.R.A.R.@

Ես, որ տարիներով կնոջ դէմք չէի տեսել, նա հեթանոս աստուածուհու պէս երեւաց։ Ուրախացրեց ինձ, եւ տխրեցրեց։

«Բախտաւոր մարդ է այդ քնիչը, որ այդպիսի քարտուղարուհի ունի», — մտածեցի, ենթադրելով, որ այս սենեակը դեռ քնչարանը չէր, այլ առաջին սենեակը, ուր նստում էր նրա քարտուղարուհին։ Սակայն այդպէս չէր։

— Ընկեր քնիչ, կալանաւորն այստեղ է, — թեթեւ հպաց եւ զեկուցեց պահակներից մէկը։

— Դա, դա(1), — տղամարդ մի քնիչի ձեւով, բայց կանացի տաք ձայնով ասաց աղջիկը, շարունակելով գրել, եւ առանց գլուխը բարձրացնելու, ձախ ձեռքով պարզեց ինձ նախապէս պատրաստուած ստացման ստացականը, եւ նորից առանց գլուխը բարձրացնելու, կարգադրեց։

— Կալանաւոր, նստի՛ր։

Ես նստեցի սեղանի իմ կողմի առջեւում դրուած մի կոշտ աթոռի վրայ, առանց աչք կտրելու աղջկանից։

Պահակը, որ չէր ուզում թողնել սենեակը, եւ դիտաւորեալ դանդաղութեամբ ստացականը պահում էր իր համազգեստային բաճկոնի կրծքի դրպանում, նկատելով, թէ ես ինչպիսի ագահութեամբ եմ նայում աղջկայ կողմը, ձեռքը սեղմեց ուսիս, եւ թեքուելով վրաս, շշնջաց ականջիս։

— Նա քեզ համար չէ, հակայեղափոխակա՛ն չուն...

Ես ցնցուեցի։

Իմ բանտարկութեան շրջս տարիների ընթացքում, առաջին անգամը լինելով ես զգացի, որ ես ո՛չ միայն զրկուած էի ազատութիւնից եւ մատնուած անպատմելի թշուառութեան, այլեւ զրկուած էի դեղեցկութիւններ դիտելու իրաւունքից։

Իմ առաջին անդրադարձը եղաւ երնել տեղից ու հարուածել նրան։ Եւ երբ ելայ աթոռից ու շրջուեցի, նրա ձեռքում բռնած կապտափայլ ատրճանակի փողի ծայրը կպաւ կրծքիս ձախ մասին։

— Նստի՛ր, — ասաց նա դիւային ժպիտը դէմքին, — ընկեր քնիչը կարգադրեց, որ նստես։

Նա շատ էր ուզում, որ աղջիկը նրա վրայ նայէր։ Թերեւս եւ ժպտար նրան։ Բայց աղջիկը առանց մեզ վրայ ուշադրութիւն դարձնելու, գրում էր արագ-արագ։

Ես հառաչեցի եւ նստեցի։

Սակայն, պահակը երեւի շատ էր ուզում խօսել աղջկայ հետ։

— Ե՞րբ դանք կալանաւորին յետ տանելու, — հարցրեց նա։

— Ես կը կանչեմ...Ես կը կանչեմ, — արագ-արագ ասաց աղջիկը, եւ նորից չբարձրացրեց իր սիրուն գլուխը։

Պահակը մէջքիցը յետ քաշեց ատրճանակը, կրունկներն իրար խփեց ու հեռացաւ։

Պահակների հեռանալուց յետոյ, սենեակում հաճելի լռութիւն եղաւ։ Այդտեղ հաճելի տաք էր եւ մանրազնին մաքրութիւն։ Ջորս տարուայ մէջ, առաջին անգամ էր, որ ես այդպիսի մաքրութիւն էի տեսնում։ Բանտերն ու ուշխատանքային ճամբարները համատարած աղբանոցներ էին։

Կինը գրում էր ու գրում։ Ես այլեւս նրա կողմը չէի նայում, կասկածելով, որ յանկարծ գլուխը կը բարձրացնի, կը տեսնի իմ դիտումները, եւ պա-

1.— Այո, այո, — ձերս հրաւիրելու ձեւ։

digitised by A.R.A.R.@

հակի բառերով կ'ասի՝ «Ի՞նչ ես այդպէս նայում։ Ես քեզ համար չեմ, հակայեղափոխակա՛ն չուն...»։

Գահակի հացրած վիրաւորանքը չէի կարողանում մոռանալ։ Ընդհակառակն, այդ վիրաւորանքը գնալով խորանում էր ու խորանում եւ դառնում մտաբեւեռում։ Ցաւումը յորձանք էր տալիս մէջս։ «Մ՞ի եմ ես», — հարցնում էի ինձ, եւ իմ դոյութիճակի ահռելիութիւնից ուզում էի կանչել, գոռալ։

Ցանկացած ազատութեան կարօտից, մարդկային իրաւունքներ ունենալու կարօտից, մարդ լինելու կարօտից, աչքերս թացացան։

2

ԱՆՊԱՍԵԼԻՆ

Այդ յետոյ էր, որ երբ ես դեռ թաց աչքերով լուսամուտի կողմն էի նայում, զգացի, որ աղջիկը դադարել է դրելուց, եւ ինձ է դիտում ուշադիր։

Առանց մտածելու, հենց այնպէս, բնազդօրէն դէմքս նրա կողմը դարձրի, եւ ինձ վրայ յառուած տեսայ նրա մութ-կապոյտ աչքերը, որոնք լեցուն էին տխրութեամբ, համակրանքով ու վշտով։

Նա շփոթուեց ու կարմրեց։

— Ինչո՞ւ ես այդքան դունատ։

— Ես բանտարկեալ եմ, — ասացի։

Նա իր նեղ ափերով եւ երկար մատներով մէկ ձեռքը միւսի մէջ առաւ, եւ կարծես ինձ չէր, որ ասաց, այլ ինքն իրեն.

— Այո, այո...

Ես ուզում էի, որ նա խօսէր, բայց նա լուեց եւ սկսեց չտեսնող հայեացքով սեղանի վրայի թղթերին նայել։

Նրա դէմքը հին ու դունատուած ոսկու գոյն ունէր, փոքր էր ու նեղ։ Նրա աչքերի արտայայտութիւնը, դիմագծերի յղկուածութիւնը ցոյց էին տալիս նրա իմացականութիւնը եւ հոգեկան խոր ապրումներ ունենալու ընդունակութիւնը։ Հաճելի էր այդ դէմքը։ Շա՛տ։

Ես դիտում էի այդ աղջկան եւ մտածում, որ եթէ մի օր ես կին ունենայի, ինձ շատ երջանիկ կը զգայի, որ նա այդպիսի դէմք ունենար։

Նա զգում էր, որ ես իրեն դիտում եմ ազահութեամբ, եւ թուում էր, թէ ուզում էր, որ ես չարունակեմ դիտել։ Թեզում էր, այո։

— Դուք գեղեցիկ էք, — ասացի, զգալով, որ այդքան բան կարող եմ ասել նրան։

Նա գլուխը բարձրացրեց եւ իր նեղ աչքերի անկիւններում ժպտաց, ծեքծեքուն.

— Մի՞թէ...

— Այո, — ասացի, — եւ այդ ասում եմ, սրտանց, եւ ոչ թէ այն բանի համար, որ դուք օգորմածաբար վարուէք ինձ հետ... Վերջի ի վերջոյ մի գեղեցիկ կնոջ ձեռքից տառապելը այնքան էլ ցաւալի չի լինի։

— Տառապե՞լ։ Ինչո՞ւ ես պիտի տառապեցնեմ քեզ։

— Ա՛հ, — ասացի, — դուք այնպէս էք խօսում, որ կարծես չդիտէք ձեր պաշտօնը։ Դուք քնքիշ էք եւ ես իմ փորձից գիտեմ, որ դուք պիտի տանջէք ինձ, շարչարէք... Քնքէք...

Նա հասկացաւ ինձ եւ շփոթուեց.

digitised by A.R.A.R.@

— Ես քեզ ուրիշ մտքով հասկացայ... Ոչ։ Մարմնական տանջանքների մասին խօսք չի կարող լինել...

Սակայն, նրա ձայնը հաստատական չթուաց ինձ, եւ ես մտքով մարմնիս վրայ զգալով տանջանքի ցաւերը, ցնցեցի ուսերս։

— Ինչ ուզում է, թող լինի...

— Ի՞նչը, — չհասկացաւ նա։

— Տանջանքները...

— Քեզ տանջե՞լ են։

— Այո, — ասացի, եւ ամօթից կծկուեցի, փոքրացայ։ Այլեւս նրա կողմը չէի նայում։

Նա նկատեց այդ եւ հարցրեց.

— Դու ամաչում ես, որ քեզ տանջե՞լ են։

— Այո, — ասացի, — չա՜ռ...

— Բայց դու տանջուածն ես եղել, եւ ոչ տանջողը։

— Ճշմարիտ է։ Բայց ես միշտ էլ ամաչում եմ մարդ լինելուս համար, երբ մարդկանց ոչ-մարդկային արարքները տեսնում եմ, իմ վրայ ըզգում կամ էլ լսում այդ բաների մասին։

— Նոյնն էլ ես եմ, — ասաց նա։

— Ես այդ գիտեմ։

— Ինչէ՞ն գիտես։

— Ձեր դէմքից...

— Ի՞նչ է իմ դէմքը...

— Կարո՞ղ եմ գիտնալ ձեր ազգանունը, — հարցրի։

— Օ՛, մի՞թէ չեմ յայտնել։ Անն Մորոզովա։

— Բաղաքացի Մորոզովա, դուք ինձնից բաներ էք հարցնում, որոնց իմ կալանաւոր լինելու հանգամանքով չեմ կարող պատասխանել։

— Չեմ հասկանում, — ուսերը ցնցեց նա։

— Ես կալանաւոր եմ, իսկ դուք իմ ազատութեան մէկը։ Արդ՝ ի՛նչ էլ ասելու լինեմ, դուք իմ կողմից չոյանք պիտի ընդունէք ձեր հացէն, երբ ես չոյել չգիտեմ։

Մենք լռեցինք։

— Ի՞նչ ես այդպէս մտածում, — յանկարծ կրծքային ուռ ձայնով հարցրեց նա։

Այդ ձայնից ես կորցրի ինձ։

— Ձեր մասին, — ասացի շփոթուած։

— Ի՞մ։

— Այո։

— Որ ի՞նչ։

— Ա՜հ, — ասացի, — իմ մտքերն անհեթեթութեան չուրջ էին դառնում։ Ցանկութիւնների, որոնք երբեք չեն կարող իրագործուել... Մի կալանաւորի մտքեր են դրանք...

Նա մատները միմեանց մէջ անցկացրեց, յենարան պատրաստեց եւ իր, ինձ համար այնքան ցանկալի, ծնօտը դրեց այդ կամրջակի վրայ.

— Օրինա՞կ։

Այդ արդէն քննչական չէր։ Ամենեւին էլ քննչական չէր։ Թուում էր, թէ ես նրա հիւրն էի։

«Այս աղջիկը ծաղրում է ինձ», — մտածեցի։ Բայց, երբ նայեցի նրա աչքերին, տեսայ, որ այդպէս չէր։

digitised by A.R.A.R.@

— Երբ Տայգայում(2) ծառեր էի կտրում, թաւուտներ էի տնտում, որոնց միջով մարդ չէր անցել։ Մտածում էի, թէ ինչքան ես երջանիկ կը լինէի, եթէ այդ թաւուտներից մէկում իմ տնակն ունենայի եւ այնտեղ ապրէի մեն մենակ, առանց մարդու երես տեսնելու։ Բայց հիմա, երբ ձեզ տեսայ, փոխեցի ծրագիրս...

— Հիմա ուզում ես քաղաքո՞ւմ ապրել, — հարցրեց նա։

— Ոչ, նորից Տայգայում, բայց ձեզ հետ..., — ասացի, եւ տխրութեամբ ծիծաղեցի իմ ասած անհեթեթութեան վրայ։

Նա ժպտաց, բայց կարծեմ քաղաքավարութեան համար միայն, եւ յետոյ սկսեց ինձ այնպէս դիտել, որ կարծես ես մի շատ տարօրինակ մէկն էի նրա համար։

— Ես չափն անցուցի՞։

—Ոչ, հազա՛ր անգամ ոչ, — գուարթ ծիծաղեց նա, — միայն ուզում եմ գիտնալ, թէ ինչքան անկեղծ ես դու, որովհետեւ ես կարող եմ միայն հպարտ զգալ ինձ ընտրելուդ համար։ Բայց կարծեմ հնարաւոր չէ իրագործել Տայգայի քո տնակի ծրագիրը...

— Գիտեմ, — ասացի, — եւ հենց դրա համար էլ նախապէս ասացի, որ իմ մտածումները անհեթեթութիւններ են, կալանաւորի զառանցանքներ։ Բայց ես անկեղծ էի Տայգայի իմ առաջարկում։

— Գիտեմ, որ անկեղծ էիր, — ասաց նա տխրութեամբ, — բայց քեզ մի դատապարտիր, որովհետեւ ճշմարիտ ցանկութիւնների ու անկեղծութեանը միայն զառանցանքների մէջ կարելի է հանդիպել։ Ձե՞ռ կարծում։

— Այդպիսի մտքեր միայն ե՛ս կարող եմ արտայայտել եւ ոչ ոք։

— Ինչո՞ւ։

— Ես կալանաւոր եմ, հետեւապէս ինձ մնում է միայն երազել։ Երազելը կալանաւորի միակ մխիթարութիւնն ու իրաւունքն է, իսկ դուք...

— Ես ի՞նչ...

— Դուք ինձնից չէք։

— Այսի՞նքն...

— Դուք ազատ էք։ Դուք կարող էք ձեր կեանքը դասաւորել ինչպէս որ ցանկանում էք... Դուք վայելում էք կեանքն իրականութեան մէջ... Ձեզ համար երազելը ծիծաղելի է, կարծում եմ... Դուք երջանիկներից էք, հետեւապէս ոչ ինձնից...

Նա համբերութեամբ լսեց ինձ, եւ մոայլուեց։

— Երկրորդ անգամն է, ինչ ինձ մեղադրում ես եսասիրութեան մէջ, առանց մտածելու, որ ինձ վիրաւորում ես, — ասաց նա, եւ ինձ թըւաց իրապէս, վիրաւորուածի ձայնի երանգով։

— Դուք չէք կարող ժխտել, որ ես կալանաւոր եմ, եւ հենց այս մայրկեանին, դուք կարող էք ամէն կերպ վարուել ինձ հետ, բացի վանառելուց, որովհետեւ մեր երկրում ստրկատիրութիւնը միայն կառավարական է...

— Սը՛տա... Ցեչիր, թէ ուր ես գտնուում, — ասաց նա, — դու պատուհաս ես ստեղծում...

— Գիտեմ, — ասացի, — բայց հոգս չէ...

— Բայց ես իրաւունք չունեմ լսելու քո ասածները... Եւ եթէ արդէն լսել եմ, պէտք է խիստ միջոցների դիմեմ, այլ կերպ...

2.— Սիբիրեան անտառների անուան։

digitised by A.R.A.R.@

Ես ծիծաղեցի։

— Ձեզ համար, խօսք եմ տալիս այսուհետեւ զուսպ լինել իմ արտայայտութիւնների մէջ։

— Դո՞ւ ես ինձ պաշտպանում, թէ ես քեզ, — հարցրեց նա։

— Ես ձեզ։

Նա ծիծաղեց։ Երաւ տեղից, դնաց կանգնեց լուսամուտի առջեւ, վարագոյրները հեռացրեց միմեանցից եւ սկսեց դուրսը նայել։

Ինձ թուաց, որ նա այդ արեց ցոյց տալու համար իրեն ամբողջ հասակով։ Ամբողջովին։

Եւ իրապէս, թէեւ նրա կանգնած տեղում կիսամութ էր, բայց եւ այնպէս ես նոր միայն տեսայ նրա ամբողջ հասակը եւ մնացած մարմնամասերը։

Նրա մազերը, երեւի, շատ երկար էին, եւ ինձ զարմանալի թուաց, թէ ինչպէս էր նա առանց քորոցի եւ կեռ ասեղների այդ երկար ու հաստատ մազերը իրար վրայ ծալել ու պահել ծոծրակի ու գագաթի արանքում։ Իմ կողմից երեւում էին նրա ծոծրակի միմեանց դալարուած մազերը, որոնք մի կնոջ կնոջականութիւնն են յայտարարում, եւ այնքան խելքահան անում ինձ։ Ես տեսնում էի նաեւ նրա զէպի ծնօտը բարձրացող կրծքերը։ Այնտեղ, ուր նրա նեղ մէջքը միանում էր ծանր կոնքին, բաճկոնի վրայ մի նեղ ու խոր երակ գիծ էր առաջացել։ Ոտքերում նա կրում էր թխագոյն թաղիքեայ եւ մինչեւ ծնկերը հասնող կանացի տաք ոտնամաններ կամ ինչպէս որ կոչւում են վալենկոներ, առանց որոնց Սիբիրում ձմեռ ժամանակ անից դուրս դալ անհնար է։

Դրսում պէտք էր, որ սառնամանիք լինէր, իսկ այդ սենեակում հաճելի տաք էր, մաքրութիւն եւ կիսամութ։

Այդ կիսամութի մէջ, պատուհանի առջեւ կանգնել էր ռուս այդ երիտասարդ ու փարթամ մարմնով դեղեցկուհին։ Կանգնել էր, չէր խօսում եւ ոչ էլ շարժւում էր։ Բայց զգացւում էր, որ նա զգում էր, թէ սենեակում, այնտեղ, սեղանի առջեւում դրուած կոչտ աշխատանքի աթոռի վրայ նըստած, խառնիխուռն ու սեւ մազերով, մշատեւ սովից նիհար ու զունատ, եւ ծանր աշխատանքից սպառուած կալանուոր հայ տղան իրեն է դիտում ազահութեամբ։ Եւ նա ծեքծեքւում էր, առանց խօսելու եւ առանց նոյնիսկ շարժուելու։ Արհեստական ոչինչ չկար։ Ո՛չ։ Այդ կնոջ մօտ ամէն ինչ բնական էր եւ կանացի։ Կանացի՝ զարմանք պատճառելու չափ։ Նա մի եզակի հոգի էր։

Ես նայում էի նրան ու տառապում։ Տառապում, որ նա, կանացի այդ շքեղութիւնը, երբեք-երբեք ինձ չի պատկանելու։ Երբե՛ք։

3

ԱՆՑԱՆՈՂ ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ցանկարծ դուռը խփեցին։

Աննա Մորոզովան արագ շրջուեց, ինձ նայեց նշանակալից, եկաւ նստեց իր աթոռին, ժպտաց ինձ, եւ ասաց բարձրաձայն.

— Դու իմ հարցին պատասխանիր, եւ ինձ հեքիաթ մի պատմիր...

Ես հակացայ նրան եւ նոյնպէս բարձր ասացի.

— Այո՛ է եղելութիւնը, քաղաքացուհի քնիչ...

digitised by A.R.A.R.@

Դուռը նորից խփեցին։

— Ներս եկէք, — յոգնած ձայնով ասաց Աննան, եւ ընկաւ աթոռի յենակին։

Նրա սրածը թատրոն էր։

— Դարձիյ վէչէր(3), Աննիչկա, — լսուեց մի հոսա ձայն, եւ յետոյ տեսայ, թէ ինչպէս մի հսկայ երիտասարդ բոլորեց սեղանը, դնաց կանգնեց աղջկայ մօտ եւ ձախ ձեռքով թեթեւօրէն գրկելով նրա ուսերը, համբուրեց նրա մազերը։ Աննա Մորոզովան գաղանօրէն ինձ նայեց մեղաւոր հայեացքով, ցնցեց գլուխն ու այն հանեց եկուորի թեւից։

Այդ երիտասարդը անգոյն աչքեր ունէր, կարմիր այտեր եւ լայն ուսեր։ Նրա կուրծքը այնքան ուռած էր, որ թուում էր, թէ հենց քիչ առաջ, փուքսով այնտեղ ահագին քանակութեամբ օդ էին լցրել։ Նրա համազգեստը շատ նեղ էր գալիս նրան եւ հենց այդ պատճառով էլ նրա շարժումները բոլորտային տպաւորութիւն էին թողնում։ Նա ինչքան ժամանակ որ եղաւ մեզ մօտ, ոչ մէկ անգամ իմ վրայ չնայեց եւ միշտ ցոյց տուեց, որ ինձ չի տեսնում, որ այն աթոռի վրայ, ուր ես էի նստած, ոչ ոք չէր նստած։ Աթոռն ամայի էր։

— Աննիա, ես տուն եմ գնում, գնանք, ես քեզ ճանապարհ կը դնեմ, — ասաց եկուորը, աչխատելով որքան որ կարելի էր սիրալիր լինել երիտասարդ կնոջ հետ։

— Օ՛, ոչ Վանիա, ես դեռ պիտի մնամ, — ասաց դեղեցկուհին։

— Ինչո՞ւ, — թուաց, թէ վրդովուեց եկուորը։

— Ձի՞ս տեսնում, կալանաւոր ունեմ։

— Կալանաւորները սպասելու համար են։ Գնա՛նք, — պնդեց Վանիան։

— Ոչ, Վանիա՛, խնդրում եմ, — աղերսեց Աննա Մորոզովան։

Ես կարծում էի, որ եկուորը կը հեռանար, կը գնար, բայց նուռեց սեղանի անկիւնին, մէջքը դէպի ինձ, դէմքը դէպի աղջիկը։ Նստեց, թէ չէ ծռուեց աղջկայ վրայ, եւ նրա ականջին մի բան ասաց եւ յետոյ, երբ ուղղուեց, հարցրեց բարձր.

— Ի՞նչ ես ասում, թանկագինս...

— Ցաւում եմ, Վանիա՛... Բայց ասում եմ՝ ո՛չ, — ասաց աղջիկը սեղանին նայելով։

— Դու ոչ ես ասում, երբ ամբողջ մեր այս հիմնարկը համոզուած է, որ մեր միջեւ համաձայնութիւնը կատարեալ է եւ մնում է միայն ձեւականութիւնը, — ասաց նա խղճուած ձայնով։

— Վանիա՛, — ասաց աղջիկը, — ամբողջ մեր հիմնարկը համոզուած է, որ համաձայնութիւնը կատարեալ է նաեւ իմ եւ Լորանովի միջեւ, իմ եւ Սմիրնովի միջեւ, իմ եւ Բոնդարենկոյի միջեւ, ո՛ր մէկը թուեմ, նրանք շատ շատ են... Անթիւ...

— Դրանք ամէնքն էլ անպիտան մարդիկ են եւ երբեք արժանի չեն քեզ, — բարկացաւ Վանիան։

— Իսկ մեր Խոզեաիմը(4), — հեգնեց Աննան, — դու նրա հետ չես կարող մրցել... Ասա՛, կարո՞ղ ես... Նա մէկ սառրագրութեամբ քեզ քո պապերի մօտ կ'ուղարկի... Ես չեմ ուզում այդ...

Խոզեաիմի մասին լսելով, Վանիան այնպէս վեր թռաւ սեղանից, որ

3.— Բարի երեկոյ։

4.— Տէր, տնօրէն։

digitised by A.R.A.R.@

կարծես նրա տակը կրակ վառեցին։ Մոռանալով, որ իր համազգեստը նեղ է իր վրայ, նա մէջքը ծռեց անպոյլ, որից նրա հագուստի կարերը ճրճռացին տառապալից։

— Դու ասում ես Խոզեաի՞նը նոյնպէս, — Աննայի վրայ թեքուած եւ աչքերը լայն-լայն բացած հարցրեց նա։

— Այո, — հեգնանքով ժպտաց Աննան։

— Վա՛յ, ես քո..., — Խոզեաինն ուզեց հայհոյել նա, բայց անմիջապէս խօսքը փոխեց, — բայց այդ բարի մարդը կին ունի, երեխաներ...

— Այո, Վանիա՛։ Բայց, ընկեր Զլատոգորան ասում է, որ այն օրը, երբ ես համաձայնեմ իր կինը լինել, այն օրն էլ նա իր կնոջն ու երեխաներին սատանայի մօր մօտ կ'ուղարկի։ Գիտես, որ նա մեր այս քաղաքի ամէնից մեծ իշխանութիւն ունեցող մէկն է եւ ինչ որ ցանկանայ ա՛յն էլ կ'անի։ Դու զգուշացիր նրա հետ մրցման մէջ մտնելուց, — իր երկրպագուին ժպիտով խորհուրդ տուեց Աննան։

Վանիան մէջքն ուղղեց եւ Զլատոգորայի նկատմամբ յարգանքի դիրք ընդունեց։

— Այո՛, այո՛... Այնտեղ, ուր ընկեր Զլատոգորան կայ, ես ի՞նչ... Ոչինչ... Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, այդ մեր երկուսի գործն է, բայց, Աննա՛, չէ՞ որ նա երկու անգամ տարիքով մեծ է... քեզ... քեզանից... Այդ ասում եմ հենց այնպէս... Անշուշտ։

Աննան ծիծաղեց.

— Վանիա՛, Վանիա՛։ Գիտես, որ զլատոգորա մեր լեզուով նշանակում է ոսկէ սար։ Արդ՝ նա ո՛չ միայն իր ոսկեսար անունն է ինձ նուէր բերում, այլեւ իսկական ոսկեայ սարեր է խոստանում։ Այ, օրինակ, այն օրը, երբ մենք ամուսնանանք, նա իր գնակարանը թողնելու է նախկին կնոջը եւ երեխաներին, իսկ մենք պիտի գնանք ապրելու քաղաքային պարտէզի այն դրդեակում, որի նորոգումը շուտով կը վերջանայ։ Ցեռոյ...

— Սպասի՛ր, — ընդհատեց Վանիան, — չէ՞ որ քաղաքային պարտէզի այդ դղեակը ժողովրդի տուն է լինելու...

— Վանիա՛, Վանիա՛, — նորից ծիծաղեց Աննան, — մի՞թէ չգիտես, որ ընկեր Զլատոգորան հենց ինքը ժողովուրդն է։ Մի՞թէ չգիտես, որ ընկեր Զլատոգորային, ժողովրդի այդ անկուն պահապանին, հանգիստ է պէտք, է՛լ աւելի լաւ ծառայելու իր կողմից այդքան շատ սիրուած ժողովրդին...

— Այո՛, այո՛, — շտապեց համաձայնել Վանիան։

— Խորոշо(5), — ասաց Աննան, — յետոյ, ընկեր Զլատոգորան ինձ խոստանում է արտասահման տանել։ Արտասահմա՞ն։ Վանիա՛, արտասահման, երբ մեր երկրի սահմանների վրայով թռչուն անգամ չի կարող թռչել արտասահման գնալու համար։ Փարի՛զ, Հռո՞մ, Լոնդո՞ն։ Գնումներ, Վանիա՛, գնումնե՛ր։ Հագուստ, զարդարանք, կօշիկներ... Ի՞նչ են մեր տարիքների տարբերութեան այդ քանը-հինգ տարիները, նիւթական այդ առաւելութիւնների հետ համեմատած.. Ա, նի՛ւթ, նի՛ւթ...

Զգացւում էր, որ Վանիան թէեւ վախենում էր ամենազօր Զլատոգորայի հետ մրցման դուրս գալու, օր նրան կը ընկնի՝ ինչպէս պատին թառած մի ճանճի, բայց նորից կիրքը լափում էր նրան, եւ նախանձը մոռացնել տալիս նրա զգուշութիւնը։

5·— Լաւ։ Լաւ է։ Համաձայն եմ։

digitised by A.R.A.R.@

— Տակ, տակ(6), — ասաց վշտացած, — այս է կինը: Վազում է այնտեղ, ուր նրան ճոխութիւն են առաջարկում եւ ոսկեայ լեռներ խոստանում:

— Այդպէս չէ, — ասաց Աննան, — ես այդ բոլորի մասին խօսելով, չասացի, թէ անպայման պիտի ամուսնանամ ընկեր Զլոտոդորայի հետ: Մեր ամուսնութիւնը միայն առվարիչ Զլոտոդորայի ծրագիրն է...

— Այն ժամանակ ո՞ւմ հետ, — ուրախացաւ Վանիան:

— Ես չդիտեմ, Վանիա՛, չդիտեմ: Ես ինձ ամէնից երջանիկ կինը կը զգայի, եթէ ես կարողանայի ամուսնանալ իմ սիրած տղայի հետ:

— Ա՜հ, — հառաչեց Վանիան, — այդ տղան ի՞նչ է խոստանում քեզ:

— Ոչինչ, Վանիա՛, ոչինչ: Թերեւս մի խրճիթ Տայգայում, որը դեռ չի կառուցել, — ասաց Աննան, եւ Վանիայից թաքուն, աչքերի անկիւններով ժպտաց ինձ:

«Արդեօք ծաղրո՞ւմ է ինձ այդ դեզեցկուհին, թէ լուրջ է: Եթէ լուրջ է, ապա ես բախտից գանգատուելու պատճառ չունեմ: Հէրն էլ անիծած ըստորկութեան», — մտածեցի:

— Ցոյց տուր ինձ, ցոյց տուր Տայգայից եկած քո այդ տղային, որ ես ձեռքերիս մէջ առնեմ նրան ու ջարդուփշուր անեմ, եւ յետոյ հիւսիսային բուեռ ուղարկեմ, — տաքացաւ ձախողած սիրահարը:

— Դու վախկոտ մէկն ես, Վանիա՛, — ասաց Աննա Մորոզովան, վրդովուած:

— Վախկո՞տ: Ը՞ս, — մտաը ուռած կրծքին տարաւ հսկան, — այդ որտեղի՞ց վերցրիր, որ ես վախկոտ եմ...

— Այդ այնտեղից, որ երբ խօսքը ընկեր Զլոտոդորայի մասին էր, դու չասացիր, որ նրան էլ ջարդուփշուր կ'անես, ինչպէս որ ուզում ես անել Տայգայի տղային: Թերեւս ե՛ւ ես սխալւում եմ, ե՛ւ դու...

Վանիան վախեցաւ: Նրա կարմիր այտերը անմիջապէս թօշնեցին: Ինքը տեղում, ոտքերը վեր ու վար արեց այնպէս, որ կարծես մի անտեսանելի ձեռք դաւազանով հարուածում էր նրա հաստ սրունքներին: Յետոյ կմկմաց.

— Դէ՛հ, ընկեր Զլոտոդորայի վրայ ինչպէ՞ս կարելի է ձեռք բարձրացնել, չէ՞ որ այդ հակայեղափոխութիւն է...

— Իսկ Տայգայից եկած անմեղ տղայի վրայ ձեռք բարձրացնելը յեղափոխութի՞ւն է: Ա՜հ, ինչքան ստոր ես դու, Վանիա՛, — արգահատանքով ասաց Աննան եւ ձեռքերով ծածկեց կրծքերը, որովհետեւ Վանիան աչք չէր կարում նրանցից:

Հսկան նայեց ոտքին եւ յետոյ գլուխը բարձրացնելով՝ ասաց չատ մեղմ, աղաչական.

— Ա՜հ, Աննա՛, Աննիա՛, Աննիչկա՛, դու երբեք այդքան չար չէիր եղել ինձ հետ, ինչպէս այս դիշեր: Ի՞նչ է պատահել, Թանկագինս... Ցցնա՛ ինձ ... Ցցնա՛ խեղճ Իվան Նիկիֆորովիս, որը գլուխը կորցրել է քեզ համար...

— Ես ասացի քեզ, որ սիրահարուած եմ, — ասաց Աննա Մորոզովան եւ նորից գաղտնօրէն նայեց ինձ:

— Տայգայի աղայի վրա՞յ, — հարցրեց Վանիան:

— Տայգայի տղայի վրայ, — հաստատեց Մորոզովան:

— Հա՜, հա՜, հա՜, — հեգնանքով քրքջաց հսկան եւ առանց բարի գիշեր ասելու, շրջուեց ու դուրս գնաց:

6.— Այսպէս, այսպէս:

digitised by A.R.A.R.@

4

ԱՆԴՈՒՆԴՆԵՐԸ

Վանիայի գնալուց յետոյ, Աննա Մորոզովայի հետ իրար նայեցինք յաջողած գաւադիրների պէս, եւ ծիծաղեցինք սրտանց։ Մեր այդ փոխադարձ հայեացքը, սրտանց ու ներդաշնակ ծիծաղը քանդեցին այն պատը, որ ես մինչ այդ զգում էի այդ աղջկայ ու իմ միջեւ։ Մենք տարեկիցներ էինք, ուրեմն եւ շատ մտերմացող։

— Այդ մարդն ինչպէ՞ս է իրեն թոյլ տալիս մի երրորդ եւ այն էլ իրեն միանգամայն անծանօթ անձի ներկայութեամբ սէր արտայայտելու, ամուսնութիւն առաջարկելու, — ասացի։

— Որովհետեւ նա քեզ բացակայ էր համարում։ Եւ, թերեւս՝ իր, առարկայ... Առարկաներից մենք չենք քաշւում։

— Նա անասուն է։

Գեղեցկուհին ծիծաղեց.

— Դու հիմա մի պատանու պէս խօսեցիր։

— Ես քսաներկու տարեկան եմ, եւ ոչ թէ մի պատանի։

— Իսկ ես՝ քսանըհինգ... Ինձ հետ համեմատած, դու պատանի ես։

— Ինչո՞ւ չեշտեցիք մեր տարիքների տարբերութիւնը, — հարցրի։

—Որպէսզի ցոյց տամ, որ ես քեզնից մեծ եմ։

— Եթէ ես ազատ լինէի, ինձ համար նշանակութիւն չէր ունենայ, եթէ դուք նոյնիսկ երեսունըհինգ լինէիք...

— Իրա՞ւ։

— Այո։

— Մեր այս խօսակցութիւնը վիպային է թւում։

— Այո։ Իրապէս։ Մանաւանդ ինձ համար։ Երբ պահակներն ինձ այստեղ էին բերում, սարսափով էի գալիս։ Մտածում էի, որ բերում են հաւատաքննական առնչանքների համար։ Իսկ հիմա նստած խօսում եմ յունական հեթանոս մի աստուածուհու նմանող մի գեղեցկուհու հետ...

— Չեմ կարծում, — ծիծաղեց նա, — ես երբեք Ոդիմպիոս լեռան վերայ չեմ ապրել։

— Մոռացել էի, — ասացի, — դարեր են անցել այդ ժամանակներից ի վեր։

Նա էլ աւելի ծիծաղեց եւ փոխեց խօսակցութիւնը։

— Ես ուզում եմ քեզ առանց մօրուքի տեսնել, — շփոթուած ինձ նայեց նա։

— Առանց մօրուքի՞, — զարմացայ ես եւ ձեռքս տարայ դէպի դէմքս։

Ճիշդ է, ես դիտէի, որ մօրուք ունէի, բայց որովհետեւ շորս տարի ես հայելի չէի տեսել, չգիտէի, թէ ինչ փոփոխութիւն է կատարուել իմ արտաքինի հետ։

Իմ հարցումի եւ ձեռքս դէմքս տանելու շարժման վերայ, նա ծիծաղեց սրտանց, բայց զուսպ։ Նրա զսպուած ծիծաղից, նրա պիրկ ու եզակի ստեղծագործութեան կրծքերի ցանկայարոյց վեր-վերումներից ես գլխապտոյտ ունեցայ։

— Դու երեխայ ես, կատարեալ մի երեխայ, — ծիծաղի միջից ասաց նա։

Այնտեղ, ուր նրա վիզը միանում էր կրծքի հետ, այնտեղ, վզի հիմքի

digitised by A.R.A.R.@

կենտրոնում, մի փոս կար, երեւի նրա գրաւչութիւնը է՛լ աւելի մեծացնելու համար։ Մօտ մէկ սանտիմ խորութեամբ եւ երկու սանտիմ տրամագծով այդ փոսը կախարդել էր ինձ, եւ ես աչք չէի կարողանում կտրել նրանից, եւ նա զիտէր այդ եւ հրճւում էր իմ զիտումներից։

«Եթէ ես ազատ լինէի, եւ նա իմ կինն լինէր, ես իմ բոլոր ազատ ժամերս կը յատկացնէի մեր սիրախաղերին նրա հետ», — մտածում էի ես։

Նկատելով իմ զիտումները, նա սկսեց ինձ աւելի դրդռել իր զուսպ ու հիւթեղ ծիծաղով, իր անդիմադրելի հմայքով։ Եւ բոլոր ժամանակ, նրա աչքերում մշուշ էր երեւում, որը գալիս էր ու գնում, եւ նորից յետ գալիս։ Նա խենթացնում էր ինձ։

— Ես գիտեմ, թէ դու ինչ ես մտածում, — ասաց նա ծիծաղկոտ։

— Գիտէ՞ք, — յանկարծակիի գալով կարմրեցի ես, բայց աւելացրի, — ուրախ եմ, որ գիտէք...

Նա նորից սկսեց ծիծաղել։ Իսկ ես հմայուած նրա սքանչելի աչքերով, նրա դեղագիծ բերանով, շաքարագոյն ատամներով, նրա բարակ ու երկար վզով, վզի հիմքում ընկած փոսով, նրա վերաբաց կրծքերով, նրա ամբողջական էութեամբ, նրան էի դիտում կրքոտ ու երջանիկ, մոռանալով իմ թշուառ իրաւիճակը։

— Ուրա՞խ ես, որ գիտեմ, — կարմրեց նա, բայց նորից զուսպ ծիծաղեց, — ինչո՞ւ ես ուրախ...

— Որովհետեւ, գիտէք եւ չէք ատարկում...

— Բայց դու գիտես, որ մեր միջեւ անդունդներ կան, լեցուն եռացող լաւայով եւ այրուող ծծումբով։

— Գիտեմ։ Եւ գիտեմ, որ դրանք անանցանելի են։

— Գիտես, եւ չարունակում ես քո մտածումնե՞րը...

Ես հառաչեցի.

— Ինձ համար կարեւորը հանդիպումն է ողնիւ ու գեղեցիկ մի հոգու հետ... Մի իրաւ կնոջ հետ... Ինձ համար կարեւորը վայրկեանն է... Հոգիների փոխադարձ համակրական շրշիւնը...

Նա զգացուեց։ Բայց փորձեց ժպտալ։

— Օ՛, ես չգիտէի, որ դու ատոյիկ ես, — ասաց նա միայն իր զգացումները ծածկելու համար։

— Ո՛չ, չեմ։ Ընդհակառակն...

— Դու հենց նոր ասացիր...

— Դուք խօսեցիք եռացող լաւայի եւ այրուող ծծումբի մասին, իսկ ես երջանիկ եմ, որ հանդիպել եմ ձեզ... Այս վայրկեանին, անդունդներ չկան մեր միջեւ...

Առաջին անգամ լինելով, մեր հայեացքները մի ուղիղ գծով, առանց որեւէ խոտորումի, երկու իրար բախուող գնացքների պէս դէմ դէմի եկան եւ ես հրդեհուեցի տառացիօրէն։ Նա նորից փորձեց զուարթ երեւալ։

— Ո՛չ, դու ատոյիկ չես։

— Ասացի, որ չեմ... Մա՛նաւանդ՝ երբ դուք կաք... Ես միշտ էլ սիրել եմ աշխարհիկ կեանքը, միշտ մեզ նկատի ունենալով...

— Առանց ինձ տեսնելո՞ւ...

— Ես ձեզ միշտ երեւակայել եմ, որովհետեւ զգացել եմ, որ դուք կաք...

Նրա ծնօտն ու բերանի անկիւնները թրթռացին եւ ինձ թուաց, որ նա ուզեց հեկեկալ, բայց զսպեց իրեն։

digitised by A.R.A.R.@

— Շնորհակալ եմ... Քո ասածն ամէնից թանկագին բանն է, որ մի կին պիտի ցանկանար լսել մի տղամարդուց... Բայց քո աչքերում, քո դէմքի վրայ ես հոգեկան տրտաց՝ոլում եմ տեսնում, որ զարմացնում է ինձ...

Մենք այլեւս չէինք ծիծաղում։ Աննա Մորոզովայի հետ մենք տարեկիցներ էինք, ուրեմն եւ իրար ներդաշնակող, իրար լաւ հասկացող։ Աննան եւ ես շատ երիտասարդ էինք, ուրեմն եւ շատ զգայուն, շատ խանդավառ, եւ միեւնոյն ժամանակ շուտ յուսահատուող։ Աննան թէեւ քսանն անց էր, բայց երբեմն իրեն պահում էր տասնեօթ տարեկան մի աղջկայ պէս։

— Իմ աչքերում, իմ դէմքի վրայ քո տեսածը կեանքի եւ մարդկանց նկատմամբ իմ ունեցած յուսախաբութիւնն ու դառնութիւնն է, որպէս հետեւանք իմ ներկայ ոչ-մարդկային գոյավիճակի, — ասացի չարացած ու դրգռուած։

— Ինչո՞ւ չես փախչում, — առաջարկեց նա։

— Այստեղի՞ց։ Բանտի՞ց։

— Ո՛չ։ Կենտրոնացման ճամբարներից։

— Ճամբարներից շատ աւելի դիւրին է փախչելը, քան փախչել ազատելը։

— Ձեմ հասկանում։

— Ձէք հասկանում, — բարկացայ ես, — այնպէս էք հարցնում, կարծես չգիտէք, որ ճամբարների շուրջը տեղացի Թուրք-մոնղոլական ցեղերից մարդասէր են շրջում, եւ սրանք բռնում են մեզ, փախչողներիս, եւ յետ փոխառում մեզ, մի քանի ռուբլու կամ մի կիլոգրամ ալիւրի համար։

Նա ինձ լսում էր անկեղծ զարմանքով, բայց այդ հանդամանքը չէր թեթեւացնում իմ վիճակը։ Գնալով ես աւելի ու աւելի էի բորբոքւում։ Ես այդ աղջկան չպիտի հանդիպէի, իսկ եթէ հանդիպել էի, նա այդքան սիրալիր չպիտի լինէր ինձ հետ։ Զարմանալի բան։ Զորս տարուայ իմ կալանաւորի կեանքում, յանձինս այդ գեղեցկուհու, ես առաջին անգամ լինելով բաց աչքով տեսնում էի եւ հասկանում իմ վիճակի ահաւորութիւնը։ Աննա Մորոզովան այն փորձաքարն էր, որի միջոցով ճշդուեց իմ իրաւիճակը։ Այդտեղ, այդ սենեակում իրար էին հանդիպել գեղեցկուհին եւ կալանաւորը, որոնք իրար էին ձգտում, բայց որոնց միջեւ անդունդներ կային։

— Ես ուզում եմ քեզ երկար պահել այստեղ... Նախ՝ յաճախ տեսնելու համար... Յետոյ էլ՝ որպէսզի որոշ ժամանակ հեռու մնաս ճամբարային ծանր աշխատանքներից։ Եւ վերջապէս... Ես ուզում եմ քեզ հնարաւորին չափ կերակրել։ Օրինակ, վաղը ես չոր ուտելիք կը բերեմ այստեղ քեզ համար։ Քեզ հարկաւոր է գոնէ մի քիչ կաղդուրուել...

Նրա գեղեցկութեան անհասանելիութիւնը ինձ չարացնում էր եւ վէճի մղում։

— Գիտեմ, — ասացի միանգամայն անտեղի, — դուք ուզում էք կազդուրել ինձ, որպէսզի մի օր էլ հաւատաքննական տանջանքների ենթարկել տաք...

Վիրաւորանքից նա կարմրեց.

— Ո՛չ։ Տանջանքն ինձ համար քննչական ձեւ չի հանդիսանում, — ասաց նա հաստատապէս։

— Ինչո՞ւ էք ժխտում, — ասացի, — տանջանքը քննչական ընդունուած ձեւ է մեզ մօտ, եւ դուք բացառութիւն չէք կարող կազմել։ Ես մեծ փորձ ունեմ որպէս տառապեալի։

— Գիտեմ, — ասաց նա, — բայց ես չեմ կարող տանջանքի ենթարկել մէկին...

digitised by A.R.A.R.@

— Այն ժամանակ դուք չէք արդարացնում ձեր պաշտօնը, եւ ես չեմ հասկանում, թէ ձեզ ինչպէս են պահում այստեղ, — ասացի նորից անտեղի։

— Նախ՝ ես կենտրոնում ազգական ունեմ... Յետոյ էլ՝ ինձ գեղեցիկ են համարում, եւ սկսած մեծաւորից մինչեւ վերջին պահակն ամէն ունի վրաս եւ յոյս... Դրանցից մէկ քնելի եւ երկու պահակների դու տեսար արդէն... Դեռ շատերին կը տեսնես... Յետոյ էլ իմ պաշտօնն այլ է... Ես բոլոր հնարաւորութիւններն ունեմ ինձ անկախ զգալու...

— Ի՞նչ է ձեր պաշտօնը։

— Ես նոր կալանաւորներին քննութեան չեմ ենթարկում, այլ այլեւս դատապարտուածներին, բայց մոլորուածներին, ինչպէս քեզ, ուզարկում եմ աւ որ անկ է...

— Հրաշալի մարդասիրական պաշտօն է ձեր պաշտօնը, — հեգնեցի ես, — բայց դուք ինչու չէք ասում, թէ ինչո՞ւ են ինձ համակենտրոնացման ճամբարից այստեղ բերել, եւ թէ՝ ինչո՞ւ եմ ես մոլորուած։

Նա վիրաւորուեց, բայց հաւաքեց իրեն։

— Քո մասին ես ոչինչ չեմ կարող ասել։ Քեզ ճամբարի պետը ձերբակալել է եւ ստիպել ուղարկել առանց քո անձնական հին թղթածրարի եւ իր մեղադրականի։ Ես սպասում եմ այդ թղթերին։ Բայց ես գիտեմ, թէ դու ինչու ես շարացել...

— Ինչո՞ւ եմ ես մոլորուած համարւում, եւ ինչո՞ւ եմ ես շարացել, — հարցրի։

— Դու անձնապէս չէ... Դու չես կարող մոլորուել, որովհետեւ դու իր ես, առարկայ... Առարկան ինչպէ՞ս կարող է մոլորուել։ Բայց դու կարող ես կորչել... Ես զբաղւում եմ կորած-դատուածների գործերով... Իսկ հիմա դու շարացել ես, որովհետեւ դու քո եւ իմ միջեւ անդունդ ես տեսնում... Դրանում ես մեղաւոր չեմ... Ես դէմ եմ անդունդներին...

— Բայց ինչպէ՞ս է պատահում, որ կալանաւորները կորչում են, — խօսքը փոխեցի ես։

— Դուք շատ էք, շա՛տ, շա՜տ... Զեղմով զբաղուող «հիմնարկներ»ի թիւն էլ շատ մեծ է... Քառս... Դուք մնում էք փոխանցիկ բանտերում, ընկնում էք սխալ վայրեր, եւ կամ էլ կալանաւորական գնացքները ձեզ յետ ու առաջ են փոխադրում... Գիտես այդ մասին...

— Այո, գիտեմ, — ասացի, — գիտեմ իմ փորձից։ Սկզբում կալանաւորական գնացքներն մէկ ամբողջ տարի ինձ անծայրածիր Սիբիրի արեւմուտքից արեւելք էին փոխադրում եւ արեւելքից արեւմուտք։ Ինչպէս երեւում էր իմ թղթերի մէջ անճշդութիւն կար, որովհետեւ բանտերն ինձ չէին ընդունում եւ երբ ստիպուած ընդունում էին, անմիջապէս ճանապարհ էին դնում։ Այդ ամիսներին ես նման էի մի ապրանքի, որի առաքման վայրը յայտնի չէր։ Ես ինձ միշտ մի ագիւսի էի նմանեցնում։ Սակայն ագիւսը չի զգում, իսկ ես զգում էի եւ տառապում թէ՛ մարմնապէս եւ թէ հոգեպէս։ Բայց որո՛ւ հոգ։ Ագիւսը կարող է ճամբորդել այնքան, մինչեւ որ մի օր էլ անձրեւից, ցրտից, ձիւնից, փոխադրութիւններից կը փչրուի եւ այն կ'աւելին մի կոզմը կը նետեն։ Սակայն, ես զարմացել էի իմ դիմացկունութեան վրայ, որովհետեւ եթէ աշխատանքային ճամբարը դժոխք է, ապա կալանաւորական գնացքներով փոխադրուելը դժոխքների դժոխք է։ Ո՛չ հաց ու ո՛չ ջուր, եւ ոչ էլ մի որեւէ մաքրութիւն։ Ինձ մի վայրից միւս վայրն էին փոխադրում ապրանքատար վագոններով, որոնց վրայ հին էշխանութիւնները գրել էին՝ «ութ ձիու կամ քառասուն մարդու համար», իսկ մեզ այնտեղ լե-

digitised by A.R.A.R.@

ցընում էին մինչեւ հարիւր յիսուն մարդ։ Լցնում էին այնքան, որ դուռը չէր ծածկւում եւ պահակները դրսից ուժով էին փակում այն։ Ցեռոյ էլ այդ գլուխներն էլ չէին ուզում բացուել։ Պահակները հայհոյում էին։

Այդ մի այլ աշխարհ էր, մի այլ «կեանք», որը երեւակայելն անգամ անհնար է։

Մինչեւ վերջ խցկուած ապրանքատար վագոնների մէջ, ինչպէս ազի հարիւղները տակառներում, կալանաւորները, սովից, ծարաւից, օդի պակասից, ազիքային հիւանդութիւններից սմքուած ու կիսամեռ՝ լուռ էին մրնում, քանի գնացքը շարժւում էր։ Բայց երբ գնացքը մտնում էր մի մեծ կայարանի ասրածութիւն եւ կանգնում հեռաւոր ու ամայի մի գծի վրայ, կալանաւորները շարժւում էին, եւ կիսամեռ կառուների նման մլաւում.

« — Դայտէ վադրի···»։(7)

« — Դայտէ խլեբա···»։(8)

« — Դայտէ վոզդուխա···»։(9)

Ցեռոյ նրանք հնծեծում էին եւ ձիւնի վրայ նետուած չան լակոտների նման կաղկանձում.

« — Վուա··· վուա,·· վուա···»

— Այո՛, ես այդ գիտեմ··· Ես այդ գիտեմ իմ փորձից··· Բայց, քաղաքացուհի Մարոզովա, մարդկային լեզուն աւելի շատ ընդունակ է լաւ ու բարի բաներ նկարագրելու, քան թէ գէշն ու չարը։ Դիւրին է, օրինակ, դրախտը նկարագրել, քան դժոխքը։ Այդ փոխադրութիւնների ժամանակ ես մօտ յիսուն բանտ եմ մտել ու դուրս հանուել։ Գիտէ՞ք, թէ ինչ է նշանակում յիսուն բանտ տարուել ու դուրս հանուել···

— Ո՛չ, չգիտեմ, — ասաց նա անկեղծութեամբ։

Ես ծիծաղեցի։ Ցեռոյ, մենք լուեցինք։

5

PARADOX

Նա ուզում էր, որ մենք հաշտուէինք։ Ես էլ։

— Վաղը քեզ համար ածելի եւ օճառ կը բերեմ, որպէսզի սափրուես, — հոգատարութեամբ ասաց նա, եւ մենք հաշտուեցինք։

— Օճառը սիրով կ՚ընդունեմ, բայց ածելին՝ ո՛չ։

— Ինչո՞ւ։ Շա՞տ ես սիրում մօրուք պահել։

— Ես չէ, այլ բանտային իշխանութիւնները։ Մեզ արգիլուած է դանակ կամ ածելի ունենալ···

— Իսկ սափրի՞չ։

— Բանտային իշխանութիւններ գտնում են, որ կալանաւորն առանց սափրուելու էլ նորից կալանաւոր է։ Այդ հանգամանքն ինձ չի խանգարում, որովհետեւ ինչքան գիտեմ ազամարդիկ այդ անում են կանանց համար միայն, իսկ բանտերում եւ համբարներում պարահանդէսներ տեղի չեն ունենում, որ ես մտահոգուեմ···

— Դու հիմա նստած ես մի կնոջ հետ, որին մօտ երկու ժամ է մեծարում ես, — ծիծաղեց նա։

7·— Ջուր տուէք։

8·— Հաց տուէք։

9·— Օդ տուէք։

digitised by A.R.A.R.@

— Ես ասացէ, որ ես ձեզ չտեսած երեւակայել եմ..., եւ եթէ ես ազատ լինէի, ինձ շատ երջանիկ կը զգայի, եթէ դուք իմ կինը լինէիք... Բայց...

— Բայց ի՞նչ:

— Ա՛յն, որ եթէ դուք իմ կինը լինէիք եւ ցանկանայիք ձեր ներկայ դործով զբաղուել, ես ձեզնից կը բաժանուէի, եթէ նոյնիսկ ինձ բանտարկել ասէիք...

— Բանտարկել, ինչո՞ւ համար:

— Ինձնից վրէժ լուծելու համար:

Նա ծիծաղից սրտանց.

— Գիտե՞ս, թէ ինչու եմ քեզ հաւանում...

— Մի՞թէ դուք ինձ հաւանում էք...

— Այո, — ասաց նա հապիւ լսելի:

— Բայց ինչո՞ւ...

— Հաւանում եմ, որովհետեւ դու ուրիշներին նման չես... եւ մէկ էլ, քո աչքերում նստած այդ տխուր տխրութեան համար, եւ յետոյ էլ... Եւ յետոյ էլ շատ լաւ բաների համար...

Ես սպասեցի, բայց նա չլրացրեց իր խօսքը:

— Տխրութիւնը ես ժառանգութիւն եմ ստացել իմ ցեղից, եւ մէկ էլ ես հիմա կալանաւոր եմ: Բայց ես շատ եմ ուզում գիտնալ ձեր հաւանութեան այլ պատճառները, որ չասացիք:

— Մոռացիր, — ասաց նա չփոթուած:

— Ասացէք ա՛յն, որ չասացիք, — պահանջեցի ես:

Նրա սիրուն դէմքի վրայով տխրութեան հով անցաւ, եւ նա մի աղջնակի պէս խօսեց, երբ ասաց.

— Լաւն ասելու համար, պէտք է այդ լաւն արդէն պատրաստ լինի կամ էլ հնարաւոր լինի այն իրականացնելու... Այլ կերպ՝ լաւ է չասել... Յետոյ էլ մենք չգիտենք, թէ ինչքան մեր գիտցածը պատրաստ է ասուելիք լաւն ընդունելու... Մենք մեր կեանքում աւելի շատ յուսախաբ ենք, քան յուսակատար...

Ես նորից սարսռացի, եւ նա նկատեց այդ.

— Մի՞թէ ճիշդ չեմ...

— Անձնապէս ի՞մ վերաբերեալ, — հարցրի:

— Ո՛չ, ճիշդ չէք... Բայց դուք, որ իսկական կին էք, պէտք է հասկանաք ինձ...

Նա թեքուեց եւ սեղանի վրայով գլուխը մօտ բերեց ինձ: Երբ այդպէս արեց, ես նոր միայն տեսայ, որ նրա աչքերը աւելի շուտ մութ կանաչ էին, քան մութ կապոյտ: Այդ աչքերում տխրութիւնը եւ կանացի իմացականութիւնը միմեանց են խառնուած: Եւ ես զգացի, որ նա այնքան տենչալի էր ինձ, ինչքան ինքն՝ ազատութիւնը:

— Դուք քանդհինդ տարեկան չկաք, — ասացի մի բան ասած լինելու համար, ազատութեան եւ նրա կարօտից չդադարելու համար:

— Կամ, կա՛մ, — ասաց նա ու գլուխը դարձուցին վերից վար շարժեց հաստատական:

— Թէեւ ձեր քանդհինդ տարիները վիճելի են, բայց անվիճելի է, որ դուք շատ զեղեցիկ էք, — ասացի:

digitised by A.R.A.R.@

— Նորի՞ց։ Բայց ես քո ասածը չեմ։

— Է՛ք։

— Դու ինձ մեծարում ես։

— Ո՛չ. եթէ մեծարել նշանակում է լաւ խօսել մի կնոջ մասին, որն իրականութեան մէջ լաւ չէ, այդ նշանակում է կեղծել, որն իմ բնաւորութեանը մաս չի կազմում։

— Գիտեմ։

— Ինչպէ՞ս գիտէք, — հարցրի։

Մեր դէմքերն դեռ իրար մօտ էին, եւ ես վայելում էի այդ մօտիկութիւնը, նրանից եկած ջերմութիւնը, նրանից հոսող կանացիութիւնը եւ համակրանքը, երբ նա ասաց.

— Ես քեզ հիմա աւելի լաւ եմ ճանաչում, քան ինքդ քեզ։

— Օ՛, — բացագանչեցի ես, եւ ծիծաղեցի։

— Զե՞ս հաւատում։

— Հաւատում եմ։ Ես քեզ չեմ կարող չհաւատալ։

— Ինչո՞ւ։

— Որովհետեւ դեղեցկութիւնը ճշմարտութիւն է, իսկ դուք, նորից եմ ասում, գեղեցիկ էք, ուրեմն եւ ճշմարիտ... Ճշմարտախօս... Մի՛ հեռացրէք ձեր դէմքն ինձնից...

— Ինչո՞ւ...

— Այդպէս ազատ եմ զգում ինձ...

— Իսկ անդունդնե՞րը, լցուած եռացող լաւայով եւ միացող ծծումբով...

— Նրանք չկան այս սենեակում։

— Դու անկեղծ չես ինձ հետ...

— Ի՞նչ, — զարմացայ ես։

— Դու չես կարող ժխտել, որ դու ատում ես իմ պաշտօնը։

— Այո, ես ատում եմ ձեր պաշտօնը։ Դուք ուրիշ էք։ Այդ պաշտօնը ձեզ համար չէ։ Հեռացէք այդ պաշտօնից։

— Ես կը հեռանամ, բայց անդունդները նորից կը մնան։ Մէկ է, քեզ չեն ազատի կալանքից։

— Ես կը փախչեմ... Խօսք եմ տալիս, որ կը փախչեմ...

Նա դոցեց աչքերը եւ սկսեց մտածել։ Եւ ես տեսայ, թէ ինչպէս ցնցւում էին նրա շքեղ բերանի անկիւնները։

— Ո՛չ, քո փախչելով անդունդները աւելի կը խորանան... Փախչելը դարման չէ։ Քեզ պէտք է ազատել ամբողջովին։ Այո, այո, ամբողջովին։ Այն ժամանակ ես կը հեռանամ այս պաշտօնից, որը ես ինքս ատում եմ... Այո՛, քեզ ազատել տալուց յետոյ միայն...

— Այդ անհնար է։

Նա աչքերը բացեց եւ ժպտաց, հիացած իր մտքից.

— Կենտրոնի իմ ազգականի միջնորդութեամբ։

— Նորից հնարաւոր չէ, որովհետեւ քաղաքական ոստիկանութիւնը միայն «Արեւափայլին» է լսում։ Գիտէք, որ քաղաքական ոստիկանութիւնն «Արեւափայլ»ի անձնական ոստիկանութիւնն է։

— Իմ ազգականն «Արեւափայլի» «սիրելիներից» մէկի սիրելին է։

— Շնորհակալ եմ, բայց խնդրում եմ մոռանալ ձեր այդ ծրագիրը։

— Ինչո՞ւ։

digitised by A.R.A.R.@

— Այդ ձեւով ես չեմ ուզում ազատուել։

— Դու խենթ ես, կատարեալ խենթ..., — բարկացաւ նա։

— Թերեւս։ Բայց, ամբողջ կեանքումս ես պիտի տառապեմ, եթէ, ասենք, «Արեւափայլն» ինձ «ներում շնորհի»։ Ես յանցանք չեմ գործել, որպէսզի «ներուեմ»։ Ես պիտի փախչեմ։

Նա ուզում էր մի բան ասել, երբ դուռը բախեցին։

— Մենք այդ մասին դեռ կը խօսենք։ Ես կարծում եմ, որ դու սխալ ես քո հպարտութեան մէջ, — ասաց նա եւ տեղից ելնելով, դնաց բացեց դուռը։

Երեւացին երկու զինուորներ, որոնք եկել էին ինձ բանտը տանելու։ Նրանց դէմքերից երեւում էր, որ նրանք շատ ուրախ էին ծառայելու համար Աննա Մորոզովային։ Նրանց դէմքերի վրայ եւ աչքերում սիրային փայլ կար, երբ նրանք իրենց աչքերը Մորոզովայի դէմքին յառած, միատեղ շարժումով իրենց ձեռքերն իրենց քունքերին տարան, եւ կրունկները շրխկացրին։

— Ներս եկ եւ ստորագրիր կալանաւորի ստացման թուղթը, — ասաց Աննա Մորոզովան ձախից առաջինը կանգնած զինուորին։

Զինուորը, երջանկութեան փայլը դէմքին, ներս եկաւ եւ գրչածայրի մեծ ճոխնչով ստորագրեց իրեն ցոյց արուած թուղթը, ապա ուղղուեց, մէկ աչքը յառեց Աննա Մորոզովայի վեր սլացող կրծքերին, միւսը՝ նրա դէմքին եւ նոքից ահագին աղմուկով իրար խփեց իր «սապոգներից» կրունկները։

Սակայն, Աննա Մորոզովան դէմքը չրջեց, իսկ զինուորը բարկացած այդ բանից, հրամայեց ինձ.

— Դաւայ, դաւայ...!(11)

Սենեակից դուրս գալուց առաջ, ես ուզեցի Աննա Մորոզովայի կողմը նայել, բայց զգուշութիւնից չարեցի այդ, մտածելով, որ կարող եմ զինուորի մօտ կասկածներ առաջացնել։

Միջանցքում հազիւ էինք շարժուել, երբ երկրորդ զինուորը հարցրեց առաջինին.

— Հը՛, ինչպէ՞ս էր այսօր յաջողութիւնդ...

— Աւելի վատ, քան երբեք։ Այս գեղեցկուհին մի՞շտ էլ շատ վերեւից է թռչում, իսկ այսօր նրա թռիչքն ամենեւին չէր երեւում...

— Ամէն մարդ նրա եռեւից է ընկած... Ես քնիչներ եմ տեսել, որ պատրաստ են եղել նրա ուշիւ ծնկի գալու, — ասաց երկրորդ զինուորը։

— Ես քնիչների..., — անլուր հայհոյանք տուեց առաջին զինուորը։

Ցանկարծ զգացի, որ պէտք է յետ նայեմ։ Եւ թէեւ ես իրաւունք չունէի այդ անելու, չրջուեցի։ Աննա Մորոզովան կանգնել էր իր սենեակի չեմին եւ ինձ էր հետեւում՝ տխրութիւնն իր սիրուն դէմքի վրայ։

— Գոլանաւո՛ր, քեզ կարգադրուած է յետ չնայել, — շատ խիստ դիտել տուեց երկրորդ զինուորը։

Որպէսզի Աննա Մորոզովայի ներկայութեամբ նրանք ինձ չհարուածէին, իմ կալանաւորութեան ամբողջ ընթացքում, առաջին անգամը լինելով, ներողութիւն խնդրեցի։

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

10.— Տուեալ դէպքում՝ շուտ-շուտ։

digitised by A.R.A.R.@

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՆՑՈՐԴԻՆ

Կորուսեալ ժամանակի
Կրկներեւո՞յթն ես արդեօք
Առօրեայիս ճանապարհին վերակոչուած.
Կ'եղբայրանաս օրերուս քայլափոխին
Ցուշերով՝
Գաղնէնը վերակենդան՝
Մտածումիս էջերուն գրաֆնուած...:

Ժամանակի՛ տազարան,
Որ կը բացուիս վերթ ստ վերթ
Ընծայելով՝
Զգայութիւնը վերաեռուչ
Ապրումներուս կորուսեալ...:

Ժամանակի անշրջիկ վերադարձ,
Ոգեգաւրման սիրակէզ արցունք,
Ուր երազիս երանգները թիապարտ
Վերընծայուած՝
Շնորհներով պատարուն՝
Առօրեայիս կը կառչին:

Լռութեան կալանքէն ձերբազատ՝
Պերճախօս Սփինքս,
Կը լուծես
Ճակատագրիս բարդոյթներն անլոյծ,
Դիմափոխելով
Կիսանքս պարագրող
Լոյսի եւ ստուերի
Խազերը խենդ...:

Ժամանակի ախտաճանաչ հայելի,
Նայուածքիդ ընկալող ուշքին՝
Ես՝
Շիթաբար մը կարօտ,
Հառաչանք մը հրայրք.
Դուն՝
Մատեանը կենդանագիր
Զգտումներուս հաղմացրիւ...:
Ես՝
Ակնթարթ մը անձկութիւն
Ու ճշխար մը յիշատակ.
Դուն՝
Մեծագրութիւնը դիւրընթերց՝
Ափոսանքիս հայեացքներուն...:

digitised by A.R.A.R.@

Դարերու ե՛րգը կայ քու մէջ,
Ցաւերժի բուրմունքը թովիչ.
Գալիքի իմացումն անհատ,
Անհունի հո՛ւնը կայ քու մէջ:
Դուն՝ Անյայտի ձայնն ազատահունչ,
Լուսէ աւիշն իմաստութեան.
Դուն՝ բնագիրն անեղծելի՝
Թոքուն մտքին Մարդեղութեան...:

Առաւել անեղծ քան կեանքն իրական,
Կրկնութեա՛մբ ճշմարիտ,
Նայուածքիդ շողերէն զազանայայտ,
Բառերուդ մրմունջէն քանիմաց՝
Կը զգա՛մ
Վերայառնո՛ւմը կենսախայտ
Բազմանքներուս աքսորեալ,
Ցանգաւորուող
Իմաստութիւնը անվանկ՝
Օրերուս աւազագիր քերթողութեան...:

Էութիւնս
Շնչաւորող դերասատար,
Երբ ճանապարհն օրերուս
Թեւաթեկուի
Ցնորքներու քարափին
Եւ շուրջերէն ժամանակի
Լուռ տատանի առօրեան՝
Պիտի զգա՞նք
Տուայտանքով ապաժամ
Մէկզմէկու այսքան մերձ,
Այսքան օտար մնալուն...:

ԱՆՑԱՐՈՒՑԵԱԼ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ

Խաժամուժին մէջ օրերու
Կը մահանայ իզմ մը հեռուն
Ցաւոտ հեւքով հառաչանքի.
Ժամանակի հունձքէն խզուած
Պահ մը կալերգ՝
Կը գալարուի դէռ բեւեռուած,
Հորիզոնի մը հեռանիստ
Երազանքով քնարական...:

digitised by A.R.A.R.@

Խաչելութի՜ւն,
Մոռացման լերկ առագաստ,
Որուն սիրոյն
Կը քաղցրանան
Տեսլականներ ակամայ՝
Ապառնիի սերնդագործ լանջին տակ:
Խաչելութի՜ւն,
Մտածումի գրաքննիչ բանսարկու,
Զգտումներու կառափնարան...:
Ո՞ւր է արդեօք,
Երազաբոյր ո՞ր ափունքէն պիտի գայ
Մագաղինէն գթառատ,
Ցաւն այս անանց
Իր արցունքով մեղմելու...:

Խժամուժին մէջ օրերու
Խաչելութեան մենք եօթնակայք ճանապարհ,
Անցիտակից Գոգգոթայ,
Ուր կ'ապրինի
Մարդեղութեան ոգին անմեղ...:

Գաղափարի յաւերժալոյս սեղանին՝
Ուխտը մեր բորբ՝
Անդրժելի հաւատագիր
Եւ դաւադիր ծառացում...:

Երազներու ձիթենաբոյր պարտէզին՝
Մեր հոգին՝
Լացի գիշեր,
Տենչայոյզ կռունկ,
Գիշատիչ ուրացում:
Պիղատոսի անյարիր խիղճ,
Ձեռնածալ հայեացք,
Եւ խաչեալի մորմոքող Սէր,
Անզօր պաղատանք:

Զգայութեան յարափոփոխ լարախաղաց...:

Քեզմով մենք խինդ ու թախիծ,
Քեզմով անլոյծ առեղծուած.
Խաչափայտին մեր բնութեան՝
Խաչելութի՜ւն,
Ե՞րբ թեւեռուիս պիտի դուն
Անյարուցեա՛լ խաչելութեամբ...:

ՑԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ն. ՎԻՐԱՊԵԱՆ

ՍԻՐԱԾԻՍ ՄԱՆՉԸ

•

Տիկին Սաթենիկ ուրախ տրամադրութեամբ հիւրասենեակը կը մաքրէր։

Երկու շաբաթ կ'ընէր, որ խօսած էր իր հոգեւոր քոյրերուն աղօթաժողովին ու քոյրերը իր չինչ խօսքերը նիւթ ընելով՝ տակաւին կը գովէին զինք։ Իր վերկայութիւնը տուած էր, թէ ինչպէս հոգեւոր ընտանիքի մը մէջ մեծցած ըլլալով՝ իր ամբողջ կեանքը Աստուծոյ Ներքեր ած էր, ու հիմա ալ եղած էր կատարելագործուելու։

Քոյրերէն մէկը ըսած էր.

— Երանի թէ բազմահազար ժողովուրդին առջեւ խօսուէր ասիկա ու շատերուն կեանքի օրինակը ըլլար։

— Գոնէ ձայնագրուէր, — ըսած էր ուրիշ քոյր մը։

Սաթենիկ յիշեց այս բոլորը, խնդաց եւ ուրիշ ալիքոյժով շարունակեց մաքրութիւնը։ Սիրտը ամերիկեան սուրճ ուզեց, գործը վերջացնելէ ետք պատրաստեց զայն, ու գրան առջեւ շուքին մէջ նստաւ։ Բակին մէջ հինգ երեխաները կը խաղային։

Անոնցմէ մէկը, միջնեկ տղան, յանկարծ, մամա ըսելով՝ վազեց ու նեռուեցաւ գիրկը ու համբուրեց երեսը։ «Օ՜, սիրածիս մանչը», ըսելով՝ ձեռքերով ամուր մը սեղմեց պզտիկը գրկին մէջ, պլլուեցաւ անոր ու ապ-տաք համբուրեց։

***

—Որքա՜ն նման է հօրը, անոր պէս տաք սիրտ ունի, մարդամօտ է։ Միւսներն ալ գեղեցիկներս են, բայց անոնք կը շարունակեն իրենց խաղը, առանց ինծի ուշադրութիւն դարձնելու, բայց այս մէկը տարբեր է, ահա վազելով եկաւ ու փաթաթուեցաւ վզիս։

Ինչպէ՜ս սիրելի զինք, ո՞վ չէր սիրած, ո՞վ հոգի չէր տուած անոր համար. Գուրգէն կ'ըսէին ու բերանին բաց կը մնար. գեղեցիկ մարմին մը ունէր ու գանգուր մազեր. ամէն ուղղութեամբ կատարեալ տղայ մըն էր. հապա՞ բնաւորութիւնը. հաճելի, մարդամօտ, ժամերով քովը նստէիր չէիր կշտանար. քանի աղջիկներու սիրտը այրեց. օ՜, ա-

digitised by A.R.A.R.@

նոնք որքա՞ն ախ կը քաշէին իր ներկայութեան խակ։ Մաքրուհին կ'ազօթէր, որ իր ձեռքը խնդրէ։ Բայց միայն ազջիկնե՞ը։ Տիկին Սրբուհին, օր մը, Գուրգէնին ոտքերուն առջեւ ինկաւ, նուաղեցաւ, ու Գուրգէն տարաւ զինք ու պառկեցուց մահճակալին վրայ...

Ջղայնութենէս ինքզինքս կերայ. հոտա՛ծ, դուն ատիկա մանաւոր ըրիր, ամուսնացած վիճակի՛դ ալ չես նայիր, անկի՛րթ։ Կը ջղայնանայի, երբ տեսնէի զինք Գուրգէնին հետ։ Ինչպէ՞ս ալ կը շաղակրատէր։ Ես չէի կրնար այդպէս լեզու թափել, բայց հոգիէս ո՛երթար, այնքան կ'ուզէի Գուրգէնին ժամիկութիւնը վայելել։ Շատ անգամ տունս ճայի կը հրաւիրէի, չէ՞ որ առանձին կ'ապրէր. թէպէտ հագիւ երկու տարի եղած էր Ամերիկա գալուն, բայց կրցած էր անմիջապէս մեծ շրջանակ կազմել եւ շատ ժամանակ չէր ունենար մեր տունը գալու, բայց երբ կու գար, այնքան կը խնդացընէր, մթնոլորտ կը ստեղծէր։ Ամուսնիս ըմբռութիւնը երկաթեայ պաղութեան մը տպաւորութիւնը կու տար, մինչդեռ Գուրգէնը չէնչող, հաճելի, կատակասէր էր. ամէն անգամ որ մեկնէր՝ մտքնիսի նման բան մը կը քաշէր–կը տանէր զիս եռուէն. կը փնտռէի զինք սենեակներուն մէջ, դուրսը, չուկան. ո՛ւր ալ երթայի կը խորհէի, որ յանկարծ դիմացս պիտի ելլէ, «հա՛յ», Սաթենիկ ըսելով զիս պիտի առնէ թեւերուն մէջ ու գդուէ...

— Գուրգէն, — կ'ըսէի, — Աստուած քեզ շատ սիրած է, քեզ ստեղծած է հարիւր առ հարիւր կատարեալ, երանի անոր, որ քեզի բաժին պիտի իյնայ։

Բայց կը դողայի ասանկ ըսած առաջնս, կը նախանձէի այդ բաժին իյնալիքին։

Ամուսինս յաճախ կը հարցնէր.

— Անհանգի՞ստ ես։

— Այո, գլուխս կը դառնայ, — կ'ըսէի։

Իրապէս հիւանդ էի, տարուած էի Գուրգէնով. ի՞նչ կրնայի ընել, գոնէ մէկ անգամ առնէր զիս գիրկը...

— Գուրգէ՞ն, Գուրգէ՞ն, — կը պոռայի, — եկուր, հիմա՛ եկուր, հիմա՛։ Ա՛ռ մարմինս, ամբողջութեա՛մբ առ։

Տունը բանտի պէս կու գար։ Գոտիկներուն լացը կը ջղայնացնէր զիս։ Կ'ուզէի փախչիլ, հեռանալ. ի՞նչ վիճակ էր։ Չէի գիտեր, որ օրերը ինչպէս կ'անցնէին։ Կը կենայի դրան առջեւ, կը խորհէի, թէ պիտի դայ։ Որեւէ ինքնաշարժ որ կենար, կը խորհէի, որ ինքն է։ Տունը առանձին եղած ատենս կ'ըսէի. հիմա թող դայ, հիմա՛։

Ամուսինս թուքէ կը տառապէր։ Ամէն անգամ, որ անոր չապիկները արիւնած տեսնէի, կ'ըսէի.

— Դուն գործողութեան պէտք ունիս։

Ատիկա կ'ըսէի առանց յետին մտքի. բայց միայն վերջին անգամ յանցաւոր ըլլալս զգացի։ Ուղղակի չէի կրնար ամուսնիս աչքերուն նայիլ, կը վախնայի։ «Ո՛վ Տէր, ներէ ինծի», կ'ըսէի։ Սիրտս կը տառապէր։ Կը բերեմ զինք տունս կ'ըսէի ու սիրտս կը հրճուէր։ Պահ մը կը մոռնայի ամէն ինչ ու ինքզինքս հրանութեան ալիքներուն կը յանձնէի։

Օր մը, Գուրգէնին քով բացի նիւթը ու կշտամբեցի ամուսինս, ըսելով, որ գոնէ մարդ ինքնիրեն հանգէպ անտարբեր չ'ըլլար։

Գուրգէնն ալ համամիտ գտնուեցաւ։

Ամուսինս դնաց բժիշկի։ Բժիշկը քննեց եւ ըսաւ, որ գործողութեան պէտք ունի։

Գործողութեան օրը որոշեցինք։ Սրբատարուն այդ օրուան կը սպասէի։ Հիւանդ վիճակ մը ունէի, տեսակ մը շուարած։ Ամուսինս կը խորհէր, որ իր հիւանդութիւնն է զիս այդչափ տառապեցընողը։ Այո, այդ մէկն ալ կը տառապեցրնէր զիս. ես հաւատացեալ ու աստուածավախ մէկը եղած եմ. որեւէ յարգանք չեմ զլացած իրեն, բայց չեմ գիտեր, այն ատեն հոգիս, միտքս Գուրգէնին հետ էր։ Գիշերները կ'արթննայի, «ո՞ւր է Գուրգէնը», կ'ըսէի ինքնիրենս, ի՞նչ կրնայի ընել, կը փնտռէի զինք։

— Գուրգէ՞ն, Գուրգէ՞ն, — կը պոռայի, — եկուր, հիմա՛ եկուր, հիմա՛։ Ա՛ռ մարմինս, ամբողջութեա՛մբ առ։

Տունը բանտի պէս կու գար։ Գոտիկներուն լացը կը ջղայնացնէր զիս։ Կ'ուզէի փախչիլ, հեռանալ. ի՞նչ վիճակ էր։ Չէի գիտեր, որ օրերը ինչպէս կ'անցնէին։ Կը կենայի դրան առջեւ, կը խորհէի, թէ պիտի դայ։ Որեւէ ինքնաշարժ որ կենար, կը խորհէի, որ ինքն է։ Տունը առանձին եղած ատենս կ'ըսէի. հիմա թող դայ, հիմա՛։

Ամուսինս թուքէ կը տառապէր։ Ամէն անգամ, որ անոր չապիկները արիւնած տեսնէի, կ'ըսէի.

— Դուն գործողութեան պէտք ունիս։

Ատիկա կ'ըսէի առանց յետին մտքի. բայց միայն վերջին անգամ յանցաւոր ըլլալս զգացի։ Ուղղակի չէի կրնար ամուսնիս աչքերուն նայիլ, կը վախնայի։ «Ո՛վ Տէր, ներէ ինծի», կ'ըսէի։ Սիրտս կը տառապէր։ Կը բերեմ զինք տունս կ'ըսէի ու սիրտս կը հրճուէր։ Պահ մը կը մոռնայի ամէն ինչ ու ինքզինքս հրանութեան ալիքներուն կը յանձնէի։

Օր մը, Գուրգէնին քով բացի նիւթը ու կշտամբեցի ամուսինս, ըսելով, որ գոնէ մարդ ինքնիրեն հանգէպ անտարբեր չ'ըլլար։

Գուրգէնն ալ համամիտ գտնուեցաւ։

Ամուսինս դնաց բժիշկի։ Բժիշկը քննեց եւ ըսաւ, որ գործողութեան պէտք ունի։

Գործողութեան օրը որոշեցինք։ Սրբատարուն այդ օրուան կը սպասէի։ Հիւանդ վիճակ մը ունէի, տեսակ մը շուարած։ Ամուսինս կը խորհէր, որ իր հիւանդութիւնն է զիս այդչափ տառապեցընողը։ Այո, այդ մէկն ալ կը տառապեցրնէր զիս. ես հաւատացեալ ու աստուածավախ մէկը եղած եմ. որեւէ յարգանք չեմ զլացած իրեն, բայց չեմ գիտեր, այն ատեն հոգիս, միտքս Գուրգէնին հետ էր։ Գիշերները կ'արթննայի, «ո՞ւր է Գուրգէնը», կ'ըսէի ինքնիրենս, ի՞նչ կրնայի ընել, կը փնտռէի զինք։

digitised by A.R.A.R.@

Հիւանդանոցի օրերը որքան մտեւնայինն, դաղտնի ուրախութիւն մը կու դար դիս դարուրելու։ Ամուսինիս կ'ըսէի.

— Պիտի բժշկուիս, այլեւս քնաւ ցաւ պիտի չունենաս։

Նոր գիշերանոց մը գնեցի, ոսկեկազեռուռ մը, մուշակ, ամէն ինչ պատրաստեցի ու որոշեալ օրը ամուսինս տարի յանձնեցի հիւանդանոց։ Այդ օրը մինչեւ իրիկուն քովն էի ու գիշերը վերջին անգամ համբուրուեցանք ու բաժնուեցայ իրմէ։ Կ'աճապարէի առն։ Ոտքերս կը դողային ինքնաշարժը քշելու ատեն։ «Ա՛խ, — կ'ըսէի, — Գուրգէն, հիմա ազատ է, եկո՛ւր, եկո՛ւր։ Ո՛վ Տէր, ներ՛ինծի»։ Քանի՞ անգամ ըսի այդ նախադասութիւնը։ Աստուա՛ծ իմ, ի՞նչ կրնամ ընել, միայն կը տառապէի։

Տուն հասնելուս, առաջին գործս եղաւ պզտիկները անապարանոց ներս առնել, կերակրել, լուալ, պատրաստել ու անկողին դրկել. կարծես դիս հալածող կար։

— Պառկեցէք, — ըսի, — պապան հիւանդանոցն է, հիւանդ է, լուռ կեցէք, քնացէք։

Մարեցի լոյսը։

Սիրտս դողալով բացի հեռաձայնը։ Իր ձայնն էր։

— Հա՛յ, Գուրգէն, ի՞նչ կ'ընես։

— Հա՛յ, տարի՞ր ամուսինդ։

— Այո։

— Առողջութիւն կը մաղթեմ։

— Շնորհակալ եմ, կու գա՞ս։ Եկուր միխթարէ դիս։

— Օ՛, անշուշտ պիտի գամ, բայց այսօր չեմ կրնար գալ։

Կարծես դլուխս պիտի պայթէր։ Կը հեւայի, հաղիւ հաւասարակշռութիւնս քունած՝ հարցուցի.

— Վաղը կրնա՞ս դալ։

— Հա, միասին ալ հիւանդանոց կ'այցելենք։

— Ես հոն պիտի ըլլամ, եթէ ուզես հոն եղիր, յետոյ միասին տուն կու գանք ու կը ճաշենք։

— Կ'ըլլայ, — ըսաւ ու գոցեցինք հեռաձայնը։

Ուրախ էի խենթի պէս։ Զկրցայ քընանալ։ «Ա՛խ, — կ'ըսէի, — պիտի ընդունիմ դինք, պիտի վայելեմ անոր մտերմութիւնը»։ Բայց յանկարծ կը վախնայի, կը դողայի, կը սարսռայի. եթէ դիտնա՞ն... բայց ո՞վ պիտի դիտնայ, չէ, մէկն ալ չի դիտնար, ես պիտի ըլլամ եւ Գուրգէնը, առանձին, միա-մինակ, այո, միա-մինակ։ Զեռքս չէ, ի՞նչ կրնամ ընել, կը տառապիմ, ներեցէք ինծի. Աստուած, սատանայ, մարդիկ, բոլո՛րդ ներեցէք ինծի. կը սիրեմ Գուրգէնը, կը սիրեմ ամբողջութեամբ, ա՛խ, Գուրգէ՛ն, Գուրգէ՛ն։

Առտու կանուխ կերակուր պատրաստեցի, տունը մաքրեցի, լոկեցի ու կերակուրէն մաս մը ալ ամուսինիս տարի։ Մինչեւ իրիկուն քովը կեցայ։ Կը դուրդուրայի վրան, բարձը կը շտկէի, կը համբուրէի զինք, բայց ներքնապէս սիրտս կը դողար. միեւնոյն ատեն մարմնիս մէջ խլրտումներ կը զգայի. կարծես մարմինս կը սպասէր, կը զգար, որ մէկը պիտի ընդունի։ Երբեմն պատուհանին կոթնած՝ կը սպասէի իր գալուն։

Եկաւ Գուրգէնը, խօսեցաւ, խնդացուց, տրամադրութիւն փոխեց, նոյնիսկ քովի հիւանդները ուրախացան իրմով։ Որքա՞ն տարբեր էր... Որքա՞ն...

Ժամանակը կ'անցնէր, օրը կը սկսէր մթնալ։ Գուրգէնին աչքերուն կը նայէի, սիրտս կ'ալեկոծէր։ Համբուրեցի ամուսինս, յաջորդ օրուան գործողութեան համար յաջողութիւն մաղթեցի, դուրս ելայ. կը քալէի եւ կարծես պատերը չուրջս կը պարէին. գինո՞վ էի. կ'ուզէի զսպել ինքզինքս. չէի կրնար. վերելակը հանդարտեցուց դիս։ Ինքնաշարժին մէջ, քանի մը վայրկեան Գուրգէնին ապասնցի, հաղիւ երեւցաւ դրան առջեւ, քշեցի. հայելիին մէջէն Գուրգէնին կը նայէի. հասանք տուն։

Գուրգէնը հիմա տունս էր, հիւրասենեակը, պզտիկները կը խօսեցնէր, մինչ ես հագուստս կը փոխէի։ Պաշտօ-

digitised by A.R.A.R.@

նական հագուստս հանեցի, կրծկալս ալ, ու այդպէս սենեկազգեստ մը հագայ։ Տաքութիւնը կ'ինչխէր հոգիս, կարծես պիտի հալէի, սիրտս կը հեւար, ակնարկս չէի կրնար հեռացնել իրմէ, կուրծքերս կը խաղային ամէն քայլափոխի, մեծ պղտիկս այնպիսի նայուածքով մը կը նայէր ինծի, կարծես կը զգար, թէ տարբեր, խորհրդաւոր բան մը պիտի պատահի. առն-ատեն Գուրգէնին ալ կը նայէր. կը վախնայի աչքերէն։ Կերակրեցի դիրենք ու գիշերանոցները հագցնելով՝ անկողին զրկեցի։ Սիրտս կը թփրտար, ի՛նչ կ'ըլլայ, թող ըլլայ, կ'ըսէի, պիտի յանձնուիմ իրեն։

— Գուրգէն, — ըսի երբ ինքն ալ վերջացուց ընթրիքը, — ամբողջ օրը քեզի հետ կը խօսիմ, աչքիս առջեւէն չես հեռանար, առանց քեզի դատարկ կը զգամ կեանքս, եկուր ու լեցուր պարապութիւնը։

Գուրգէնը լուռ կը լսէր զիս, ձեռքերը գլխուն ետեւ՝ կոթնած իր աթոռին։ Այնքան առնական էր իր կեցուածքը։ Աչքերուն խորը կը նայէի. յանկարծ կարծեցի, թէ պիտի իյնամ, բռնեցի Գուրգէնին ծունկերէն, անմիջապէս բռնեց զիս, տարաւ անկողինս, փաթթուած էի իրեն, չէի ծդեր։ «Ա՛խ, Գուրգէ՛ն, Գուրգէ՛ն, հասկցիր զիս», կ'ըսէի։ Ցանձնուեցայ իրեն...

***

Առտուն, երբ աչքերս բացի, կը հագուէր։ Համբուրեց զիս ու գնաց։ Ամբողջ դիշերը վայելած էի անոր մտերմութիւնը, մերկութիւնը, ամբողջութիւնը։ Որքան յապեցած ու բաւարարուած կը զգայի. աշխարհը ամբողջութեամբ ինծի տրուած էր կարծես. թեթեւցած էի, պառկած էի այն դիրքով, որ ընդունած էի գինք. այնպէս կը զգայի, որ կարծես տակաւին հետս էր. հպումները հեշտանք մը կ'արթնցնէին մէջս, երանութեան ոլորտներուն մէջ։ Նորէն քնացեր եմ, բայց եաքը պղտիկներուն ձայնէն արթնցայ։

Այդ օր ուշ գացի հիւանդանոց։ Ամուսինս յաջող գործողութիւն մը անցուցած ըլլալով՝ հանգիստ էր։ Ես ալ ուրախ էի, հանգիստ, կարծես թէ հիւանդութենէն նոր ելեր, ապաքիներ էի։

Ամուսինս կը խորհէր, թէ գործողութեան յաջողութիւնն էր հանգստութեանս պատճառը։

— Հիմա ուրա՞խ ես, — հարցուց։

— Անշուշտ, — ըսի, — եթէ երկու տարի առաջ ըլլայիր, երկու տարի առաջ ցաւերդ պիտի ազատուէիր, այդպէ՞ս չէ։

Ամուսինս կը խնդար, ու այնպիսի նայուածքով մը կը նայէր ինծի, որ կարծես ըսել կ'ուզէր, — ահաւասիկ պարկեշտ ու առաքինի կինը։

Ամչցայ աչքերէն։

Քանի մը շաբաթէն, ամբողջովին առողջացաւ ամուսինս։ Հապա ե՞ս, ես աւելի առողջացած չէի՞։ Ուրախ էի, կայտառ, առաջուան գործերուս կրկինը կ'ընէի ու չէի յոգներ։

Կը զգայի, թէ արգանդիս մէջ բան մը կը սազմնաւորուի, ամուսինս բնաւ պիտի չկասկածէր, հիւանդանոցէն հլլելէն ետք, իրեն հետ աւելի խանդով կը մտնէի անկողին։ Փորս կը կլորնար։ Ան Գուրգէնն է՝ կ'ըսէի մտքովս, երջանիկ էի որովայնիս պտուղով։

Ծնաւ երրորդ մանչս։ Կը հիանայի վրան, կը գուրգուրայի, ամէն գգուելուս՝ կարծես Գուրգէնը կը գգուէի։

***

Բայց ո՞ւր է ան հիմա, ի՞նչ կ'ընէ, որո՞ւ հետ ամուսնացած է։ Որչ է, որ իմ բնական քաղաքս չի բնակիր. սակայն մինչեւ հիմա ալ, ամէն անգամ, որ ինքնաշարժ մը կենայ մայթին քով, կը խորհիմ, որ Գուրգէնն է։ Ինքնաշարժէն պիտի իջնէ, ու Աբարեւ ըսելով ներս պիտի մտնէ։ Ա՛խ, այդ բարեւը միայն կը բաւէր հոգիս հալեցնելու. ո՞վ դրած էր այդ սէրը մէջս. ես, օրինակ, ազատ եմ ուզած եկեղեցիս երթալու, ուզած կիրակիս. ազատ եմ երթալու նախընտրած

digitised by A.R.A.R.@

մարքէթս, որեւէ դրամատան մէջ հաշիւ պահելս կամքէս կախեալ է. օրինակ, մօտս դրամատուն մը կայ, բայց ես երկու մղոն կը քշեմ, ուրիշ դրամատուն կ'երթամ, ինչո՞ւ, անոր համար որ այդպէս նախընտրած եմ, կամքս իմս է: Ուզեմ՝ կ'երթամ, չուզեմ՝ չեմ երթար: Ասոնք բոլորը իմ որոշումէս կախեալ են, բայց հոգիիս մէջ սէր դնելը ձեռքս չէ, եթէ Աստուած կ'ըսէ, որ առանց իմ հրամանին տերեւ չի շարժիր, առանց ինծի մազ մը գլուխէն վար չ'իյնար, ուրեմն այդ սէրը մէջս դնողը Աստուած էր, ու ես ի՞նչ կրնայի ընել եթէ Աստուած Գուրգէնին հանդէպ սէր մը դրած էր մէջս: Այն ատեն, խենթի պէս էի, բայց յետոյ, աչարքէն եաք, բաւարարուեցայ, հանգըստացայ...

⁂

Ի՞նչ, հեռաձա՞յնը կը հնչէ: Արթընցաւ տիկին Սաթենիկ իր անորոշ յիշողութիւններէն, այո, հեռաձայնն էր, վազեց ներս, առաւ ընկալուչը.

— Ալո:

— Աղջիկ, ո՞ւր ես, — լսուեցաւ հեռաձայնին միւս կողմէն:

— Արփինէ, դո՞ւն ես, ի՞նչ կայ, — հարցուց Սաթենիկ:

— Աղջիկ, այս երրորդ անգամն է, որ կը հեռաձայնեմ. դիտէի, որ տունն ես, մէկ անգամ փորձեցի, բացող չեղաւ, երկրորդ անգամ նորէն փորձեցի, զարկաւ-զարկաւ, բացող չեղաւ, այս անգամ երկար զարկի, ո՞ւր էիր:

— Դուրսն էի, դրան առջեւ նստած՝ ստրճ կը խմէի, — ըսաւ քիչ մը տրրտմած՝ այնքան դեղեցիկ յուշերը ընդհատած ըլլալուն համար, յետոյ, կարճ կապել ուզելով՝ հարցուց.

— Ի՞նչ կայ:

— Կ'ուզէի քեզ նորէն հրաւիրել, կեանքիդ վկայութիւնը տալու համար:

Մերժեց:

— Չէ, չեմ կրնար, — ըսաւ, ու դոցեց հեռաձայնը:

Գնաց աթոռին, ուզեց շարունակել ընդհատուած յուշերը, բայց ո՞ւր կանգ առած էր, աչխատեցաւ յիշել, չկրցաւ. տեղ մը կանգ առած էր, ինչո՞ւ կանչեցին զիս, «Խոֆածնե՛ր», պոռաց յանկարծ, «Կ'ատեմ ձեզ, դացէք ձեր մեռելները թաղեցէք»:

Այդ ինչ անուշ մտածումներու մէջ թաղուած էր: Ցիչեց ստրճի գաւաթը, նայեցաւ, չէր խմուած. սիրածին մանչը պատճառ եղած էր, որ չխմէր, բայց միլիոն համով ստրճ կ'արժէր: «Օ՛, յիշատակներ, սիրեցի ձեզ, դեղս դուք էք, ցաւերս մոռցնել տուող դեղդ, — ըսաւ ու յուղուեցաւ:

Ընդհատած էին զինք, ու հիմա կը փնտռէր ընդհատուած տեղը. ո՞ւր ձգած էր, չկրցաւ յիշել, սիրտը նեղուեցաւ, ինչո՞ւ կը խանգարին զիս:

Ծանկարծ ըսաւ.

— Հարիւր տոլար կու տամ անոր, որ զիս գտրձեալ կը կապէ յիշողութեանս ընդհատուած տեղը...

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Մ'ՏՈՐՈՒՄՆԵՐ

Կարծեցին մարդիկ,
Թէ գինով ես դուն,
Սի՛րտ իմ, ինչո՞ւ ես
Դուն հիմա պրթուն:

Դուրսը քամին է՝
Կ'ուզեայ անդադար,
Աչքերդ փակէ՛՝
Սիրտ իմ խելագար:

Ասուածն է կեանքին՝
Գիշերապահը,
Թող հնչը հսկէ՝
Կեանքին այս պահը:

Իսկ դո՛ւն, ա՛լ փակէ՝
Աչքերդ, ո՞վ սիրտ,
Եւ մոռցիր կեանքին
Քամչքները քիրտ...

***

Թափուր է հոգիս՝ գահի մը պէս ցուրտ,
Որուն տէրն, աւա՜ղ, մեկնեցաւ անփոյթ
Իմ անձը լքած՝ ցաւերու ափին,
Իսկ հոգիս յանձնած՝ սիրոյ քամչքին...

Սէ՛ր, դուն այդ ծովն ես՝ որուն հունին մէջ
Փարձեցիր խեղդել երազներս անվերջ,
Ցանձնած էի քեզ սիրտս անսակարկ,
Բայց խոցեցիր զայն ցաւերով անարգ:

Հիմա կը նայիմ քեզ այնպէ՛ս՝ ինչպէս
Պիտ՝ նայիմ դեղին օձի մը աչքին,
Միամիտ չեմ որ սիրտս յանձնեմ քեզ,
Որպէսզի խայթես դուն զայն վերստին:

Ա՛լ մնաս բարով, սէ՛ր՝ հի՛ն բարեկամ,
Հին հոմանուհի, եւ հի՛ն դրուժան...

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՀՐԻԶԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՀՈՐԻԶՈՆԷ ՀՈՐԻԶՈՆ

ԺԱ.

ԱՌԱՒՕՏԸ, ՈՐ ԲԱՑՈՒԵՑԱՒ

Խաւարէն դէպի լոյս-առաւօտ շարժող, լոյսը տեսնելու ներքին տա-ռապանքով վերապրող հայ ժողովուրդը, վերջապէս, կ'ողջունէր լոյսը, որ կը բացուէր ՄԱՅԻՍ 28ին։

Լոյսը մեզի կեանք կու տար։ Աւելի կենսուակ կեանք մը, քան բոլոր տեսակի անուղղներէն ուռճացած կեանքը։

Թափուած արեան հեղեղներուն միակ բուժիչ դեղահատը՝ ՄԱՅԻՍ 28ը։

Արտաքին քաղաքական ապրումներուն հետ՝ ներաշխարհային ապրումները աւելի շատ էին։ Ուրախութիւնն ու մտահոգութիւնը միասին քայլ կ'տանէին այդ օրերուն։

Լոյսի ուրախութիւնը չէր փարատեր խաւարի տխրութիւնը։

Կ'ուրախանայինք, որ կանք եւ հայկական պետութիւն ունինք։

Կը տխրէինք ու կը մտահոգուէինք, երբ ամէն օր մահուան վտանգը մեր դէմ կը ցցուէր, երբ նորակերտ Հայաստանին կը սպառնար։

Մեզի հետ հաշտութիւն կնքող Թուրքին ներքին մտածումը հայութեան ոչնչացումն էր։ Ու այդ օրերուն ապրող հայութիւնը դերազանց ճշգրտութեամբ այս երեւոյթը կը տեսնէր եւ կ'ըմբռնէր։ Մահուդ այս ժողովուրդը, սակայն, իրեն սպառնացող վտանգի առաւելագոյնը կը ծանկէր։ Հայաստանի վերակերտումը ժպիտ մը արձանագրած էր հայ ժողովուրդի դէմքին, ժպիտ մը, որուն բնոյթը մտածման ու մտահոգութեան մշուշը իր մէջ կ'ամփոփէր։

Երբեմն ալ յաղթականի ուրախութիւնը կը ծաւալէր դիմի սեղաններուն շուրջ։ Երիտասարդ մարտիկները կ'երգէին ու կը վիճէին։ Կեանքի հոլովոյթը իր ճամբան կը գտնէր։

digitised by A.R.A.R.@

կայի՛նք։ Մեր ոտքը հին Հայաստանի հարազատ հողին վրայ էր։

Հայաստան մը ունէինք...

Ամէն հայ դարերով Հայաստան մը ունենալու երազանքով ապրեցաւ։ Ժամանակները թաւալումով անցան։ Հալածանքներն ու արեան հեղեղը տեղէ տեղ փոխադրուեցան։ Բայց հայ ժողովուրդի արմատական մէկ զանգուածը հայրենի հողին եւ ժայռերուն կառչած մնաց։ Կորուստները ոգբաց։ Մնացածով մխիթարուեցաւ, միշտ այն յոյսով, որ օր մը արեւը պիտի ծագի հայոց մթամած հորիզոններուն վրայ։

Այդ օրերու մտահոգութիւններուն կ'անդրադառնամ, երբ այսօր արդէն ութսունըհինգ տարիներու ծերութիւնը կայ ուսերուս։ Կը վկայեմ, թէ ամէնօրեայ վտանգը շատ աւելի մեծ էր, քան մենք կը զգայինք։ Կը հաստատեմ նաեւ այն իրողութիւնը, որ կար արձանագրուած հայ մարդոց ճակատին, կար ապրելու, տեւելու, Հայաստանը պաշտպանելու, բոլոր զոհողութիւններուն յանձնառու բլլալու կամքը, միայն թէ՝ փրկուին Հայաստանն ու հայ ժողովուրդը։

Այդպէս լարուած էինք այդ օրերուն։

Այդպէս արիւնոտ կեսպարանք ստացած էր նաեւ Լեռնահայաստանի շրջանը, որ, բարեբախտաբար, կը ՀԱՑԱՆԱՐ մեր ցիր ու ցան գունդերուն եւ խմբակներուն շնորհիւ։ Խմբապետ... երէկ՝ Ֆեստայի։ Ապա՝ ժողովրդական բանակի հրամանատար։ Ապա՝ զօրավար։ Եւ ցեղային կռիւ։ Կեանքի դաժան ուօրեայ։ Կա՛մ հայը, կամ Թաթարը պիտի տիրէր Լեռնահայաստանին։

Արիւնոտ մարտերէն ետք, Լեռնահայաստանը կը հայանար...

Նոյն վտանգաւոր երեւոյթները Լոռիի, Ղարաքիլիսէի եւ Դիլիջանի մէջ։ Հայը կրցաւ կառչած մնալ իր ժայռերուն, ինչպէս կառչած էր Մայիս 28էն քանի մը օր առաջ Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Աբարանի ճակատամարտի օրերուն։

Ճակատամարտերը վերջացած էին Մայիս 28ի յաջողութեամբ։

Բայց ԼԻՆԵԼ-ՁԼԻՆԵԼՆԻ ճակատամարտը կը շարունակուէր Թրքական գազանի գաւազրութեանց դէմ։

1918 Յունիսէն մինչեւ Նոյեմբեր, ամէն օր ու ամէն ժամ, ճգնաժամային այս լարուած օրերը ապրեցանք մենք։ Ճգնաժամը միշտ մնաց, բայց հայ ժողովուրդի եւ ղեկավարներու կամքն ալ պողպատուեցաւ։

ԿԱՆՔ ԵՒ ՊԻՏԻ ՄՆԱՆՔը վճռական կամքի մը վերածուած էր եւ դրոշմուած կը մնար հայ ժողովուրդի դէմքին։

**

Թուրքերը՝ Վրաստանի վրայով՝ սառաջացած էին դէպի Բագու։

Հայ-Թրքական հաշտութեան պայմաններէն մէկն այն էր, որ Հայաստանը Թոյլ պիտի տայ Թուրք բանակին անցք մը, Ղարաքիլիսէի եւ Դիլիջանի վրայով՝ դէպի Բագու։ Անշուշտ հայկական բանակի պատուարներէն անցնելով։

Այս վտանգն ալ մեր ամէնօրեայ մտահոգութեան առարկան էր։ Ու մենք մեր ուժերուն մեծ մասը կեդրոնացուցած էինք այդ պատուարին վրայ, որպէսզի կարենանք դիմակալել Թշնամիին ներթափանցումը։

Անկախութիւն։ Մայիս 28։ Հպարտանք՝ Հայաստան ունենալու։

Մտահոգութիւն։ Մշտայլ մթնոլորտ։

digitised by A.R.A.R.@

Ամէն օր, յաղթական ռուրը մերկացուցած՝ ցեղասպան դահիճը մեր հորիզոններէն կ՝անցնէր։

Եւ սակայն, հայ ժողովուրդը իր արեան գնով Հայաստան մը ունէր։ Կառավարութիւն եւ Ազգային Խորհուրդ կար։ Թերթեր կը հրատարակուէին, ու մտաւոր շարժումն ալ մեզմ հոլ մը կը բերէր Ազգային Խորհուրդի շէնքէն ներս։

Ուրախ ապրումները, վանդն ու վախը եւ լարուած ջիղերով կեցուածքը զումարեցէք իրարու վրայ։ Հոգեբանական լաւ ու վատ տուայտանքները հաշուի առէք մեր ներաշխարհի հորիզոններուն մէջ, որպէսզի կարենաք ըմբռնել այդ օրերու ապրումներն ու փոթորկումները։

Այս տողերը կարդացած ժամանակ կը խնդրեմ, որ հրաժարիք թուղթին վրայի մեր կարդացածէն եւ ըմբռնումէն, ու հոգեկան դիրքը բանաք մեր ներաշխարհին մէջ, որպէսզի հասկնաք, թէ հայը ինչպիսի փոթորկումներէն դուրս նկաւ եւ վերստեղծեց այդ զանձը՝ ... ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ։

Հայը կրցաւ այս նորածինին գուրգուրանքը եւ արեան գնով զայն պահպանելու վճռական կորովը պահել, գոնէ իր մնացորդով։

Ապրումներու այս մթնոլորտին մէջն էինք, երբ զանգը հնչեց...

⁂

Զանգը հնչեց։ Զանգերը ձայն բռնեցին աշխարհի բոլոր անկիւններէն։

Գարուածները յաղթական կը դառնային։ Գերուած երկիրները կ՝ազատագրուէին։

Զանգերու ձայները բազմաթիւ երկիրներու ազատագրումը կ՝աւետէին երկիր երկիր։ Ուրախութեան ալիքները աշխարհէ աշխարհ կը տարածուէին։

Թշնամիները իրենց որջերը կը քաշուէին կորուստեամբ։ Եւ ահա, ազատարար բանակները այդ որջերուն ալ կը տիրէին։

Ու մենք, լարուած ականջով, մթնոլորտի խուլ աղմուկը միայն կը լսէինք...

Մեր աչքերը Մասիսի գագաթին, մեր ձեռքը զէնքին՝ մթնոլորտը կը հոտոտէինք։

Լեռներով շրջապատուած Արարատեան շրջանը հազիւ կը լսէր որոտացող աշխարհին ձայները։ Ու ահա, կայծակները շառաչումով հասան Արարատեան աշխարհի բարձունքները։

Կայծակները, ընդհանրապէս, բան մը կ՝այրեն։ Հայաստանը չայրեցաւ այդ կայծակներէն։

Կայծերը մութը լուսաւորեցին, ու լոյս իջաւ մեր հայրենիքին վրայ։

Գարուած ու քայքայուած՝ թուրքը կը հեռանար մեր աշխարհէն, երբ Հայաստանի դաշնակից մեծ պետութիւնները կը մտնէին Գալիս, Կիլիկիա ու Կովկաս։

Հայաստանի բանակները արագ թռիչքներով կը հասնէին Մասիսին։ Կ՝ազատուէր Հայոց Արքան, Մասիսի գագաթը։

Հայկական դունդերը, Շէրակէն անցնելով՝ կը վերագրաւէին Կարսը, Կազզուանն ու Սարըղամիշը։

digitised by A.R.A.R.@

12·000 քառակուսի քիլոմեթր Հայաստանը կը դառնար 45·000 քառ. քիլոմեթր տարածութիւն մը։ Ու մեր ժողովուրդը, հայ բանակին հետեւելով՝ կը տեղաւորուէր իր հայրենի կտուրին տակ։

Այս անբեւեւակայելի յեղաշրջումը կը կատարուէր մէկ ամսուան ընթացքին։

Կրնա՞ս, ըմբռնէ՛ այս ալեկոծումը։

Կրնա՞ս, հաւատա՛ այս իրողութեանց։

Կրնա՞ս, բացայայտէ՛ ուրախութիւնդ։

Ժպիտն ու արցունքը, իրար գրկած՝ կ'օրօրուէին ղէմքերուն վրայ։

Հայաստանը մերն էր։

Զինեալ ուժերը՝ կորովի ու անձնուրաց։

Մեր ժողովուրդը չունչ առաւ։

Հանդիստ կրցաւ ուտել իր առօրեայ հացը եւ քաւ.

— Փա՛ռք Աստուծոյ, փա՛ռք հայ ազգին...

*
**

Փառքի օրեր...

Աչքիս առջեւ կը տողանցեն այդ օրերը, ու ես կը վկայեմ, թէ ոչ ոք փառքի պատմութեանը ուսին առած՝ երեւցաւ հրապարակին վրայ։

Բոլոր մեծերն ու պատասխանատուները իրենք զիրենք Հայաստանի զինուոր կը նկատէին։

Համահայկական երջանկութիւն...

Հայաստանը մերն էր։

Այս կարճ նախադասութեան հոգեկան ծովացումն ու ալեկոծումը ըմբռնողը միայն կրնայ կշիռքի առնել այն օրերու մեր ապրումները, որոնց ուժով ժայռակերտ հիմքը կը դրուէր նորագոյտ Հայաստանին։ Երկար դարերու անհուն բաղձանքին իրագործումը վերականգնութիւն մըն էր, սր նոր ու վճռական կամք մը կը փոխանցէր ամբողջ հայութեան։

Եթէ Քրիստոսի յարութեան հաւատացող չկայ, թո՛ղ չլլայ։

Երկինքի մէջ այդ խնդիրը կը լուսաբանուի...

Բայց Հայաստանի եւ հայ ժողովուրդի ՑԱՐՈՒԹԵԱՆ պիտի հաւատայ, ուզէ կամ չուզէ։ Որովհետեւ, յարութիւն առածը կայ ու կը մնայ մեր աչքերուն առջեւ։ Ու մենք եթէ աչքին չենք հաւատար, ձեռքով եւ ոտքով կրնանք զայն շօշափել, ամէն օր, գիշեր թէ ցերեկ...

Այս ապրումները, թերեւս, ներկայ սերունդներուն հասարակ թուին։ Հայաստան անունը միշտ լսած են։ Հայ ժողովուրդը տեսած են ու անոր ծոցին մէջ ապրած։ Կռուած ու ազատութիւնը հետապնդած։ Աշխարհի շատ մը ժողովուրդներն ալ, այդ ճանապարհով, իրենց հայրենիքին տէր դարձած են։

Քաղաքական պարզ ու ըմբռնելի երեւոյթներ։

Բայց «ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵՆՔ ԵՒ ՍՓԱՆՁԵԼԻ»ն այդպէս պարզ չէ, երբ խնդիրը հայ ազգին չուրջ կը դառնայ։

Հայ ժողովուրդը բնաջնջելու, վերջին բեկորն ալ մէջեռեղէն վերցնելու

digitised by A.R.A.R.@

եւ փոշի դարձնելու ընթացքին մէջ գտնուող Թուրքը աշխարհէն այնքան չէր վախնար, որքան հայուն գոյութենէն։

Բայց հայը ապրեցաւ։ Արիւնով իր հայրենիքը կերաւեց։ Մնացորդով մխիթարուեցաւ։ Միջազգային ժողովներուն մասնակցեցաւ։ Իր

Գալիք սերունդները միայն՝ հանգարտած սրտով, պիտի կրնան ըմբռնել հը-բալչքին մեծութիւնը։ Ու Հայաստանը իր լեռներով զանոնք պիտի օրհնէ, ոգ-բիւրները անոնց ծարաւը պիտի յագեցնեն, ու անցած օրերու փառքը անոնք հպարտութեամբ պիտի գովերգեն...

Այս վերապրումները կը փակեմ այն յոյսով, որ ընթերցողը հոգեկան բարդ հանգոյցներով պիտի ըմբռնէ հայութեան վերապրումները։

Այդ օրերու պատմութիւնը արձանագրուած եւ հրատարակած եմ 1200 էջերուն մէջ։ Բայց հոգեկան ապրումները, այն օրերուն, լինե՞լլինելու ա-բիւնոտ ճամբաներու մէջն էին։ Իսկ այժմ, հանդարտ նայուածքով, Հայաս-տանի անմահութիւնը կը տեսնեմ ա՛յլ միայն այս օրերու հորիզոնին, այլեւ պալիք դարերու ծիածանուած հորիզոններուն վրայ։

Մարդկային եւ անհատական քաղաքաթիւ ապրումները մնացին հոգիիս ծալքերուն մէջ։ Ծիածանի ծածանումները հոգեղէն ժպիտ մը տարածած են նեբալիտարհիս մէջ։

Անհատականը վարագոյրին տակ կը պահեմ։ Ազգային եւ համամարդ-կային ծիածանը երջանկութեամբ կը գունաւորէ հոգիս։

Մասիսի գագաթին նստած ծերունին ուրիշ զարդարանքի կարիք չու-նի...

Կ. ՍԱՍՈՒՆԻ

digitised by A.R.A.R.@



ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐ
ԵՒ
նախերգանք նորագոյն տոմարի

Շնորհիւ «Հնախանցը առանց երգի» վէպին, «Ցարալէզներու դաւանանութիւնը» անուն պատմուածքներու հատորին եւ քննադատական ու հրապարակագրական իր լարգ մը յօդուածներուն պարբերական վերհրատարակութիւններուն՝ Շահան Շահնուր, ինչպէս կը պատուի գրական ասկուն դրամագլուխի տէր մարդոց, ինքնաճիւռացման իր տարիներուն եւս չդադրեցաւ ներկայութիւն մը ըլլալէ մեր գրականութեան ասպարէզին մէջ։ Տոմարին մուտքի բաժինին մէջ գրանցուած յիշեալ գործերուն հետ, գրանցուածներուն ներգոյակ ուժի՛ն իսկ բերումով՝ ընթերցողը միշտ արթուն հետաքրքրութեամբ մը ապասէց իր սիրելիին ներկայացուցչական գէմքերէն մէկը համարուող այս քանարարուին, որ ամբողջ մէկուկէս տասնամեակ էլեկտ. որդեգնագոյնին հետ իր պարտին կապը խզած պահելէ ետք, վերջին մէկուկէս տասնամեակին գործեալ սեռաս երեւելի հայ գրականութեան մէջ, վերախմբագրելով երեսնեակ թուականներուն հրատարակութեան տուած յօդուածներէն ոմանք եւ գրելով բոլորովին նորեր, որոնք լոյս տեսան տասնեմի գրքոյկներով, հետեւեալ խորագիրներուն տակ, վայրերուն մէջ ու թուականներուն.

1·— «Թիրիա կիրակնօրեայ թիւեր», Պէյրութ, 1958
2·— «Զայգ մը կարմիր տեսրակ», Պէյրութ, 1967
3·— «Բաց տոմար», Փարիզ, 1971
4·— «Կրակի հոգիս», Փարիզ, 1973

Անմիջապէս փոկագրի մը բանանք հոս։

Տպագրական առումով, ցաւօք, հրատարակիչները շատ փոյթ չեն ըրած հեղինակը չափով անխոցելի գործեալ այդ գործերը։ Ուղղագրական, կէտադրական, ապաթարցի թէ յարաբերական գերահաւասներու գործածութեան տեսակէտով միատեսակութիւնը խախտող վերջապէս ու վերջապէսական պատկեր մը կը ներկայանայ մա՛սնաւորաբար Փարիզ հրատարակուածները։ Ճիշդ է, մեր պայմաններուն մէջ բնախնդրութիւնը կրնայ մանրախնդրութեան տպաւորութիւնը ձգել, բայց եւ այնպէս պէ՛տք է առնուազն յիշեցուի, որ փնտռուած գրագէտներուն ասիթով ունելի բնախնդիր ըլլալու հարկադրանքի մը տակ կը գտնուինք բոլորս։ Ի վերջոյ անոնք են լեզուն սիրելի եւ ուսանելի դարձնողները եւ անոնց գրութիւններուն մէջ անուշագրութեան մատնուած որեւէ սխալ կրնայ անօրինակելի մնալ ընթերցողին մտքին։

digitised by A.R.A.R.@

Զիլիսասկենք հասկնալի վրէպները, կարճ ըլլալու համար հրաժարինք գլխովցուած պարբերութիւններու մասնաբաժնէն եւ կանգ առնելով միայն յիշուածներու հետեւանք սխալգրութիւններուն առիթ, ըսենք, որ Շահնուր չի կրնար գրած ըլլալ եւ Շահնուրի գործերուն մէջ ներելի չէ թոյլ տալ սա ձեւի ուղղագրութիւն մը.— քանՏասել, հաՁել, ծայրաՁեղ, հուլորէն, արիւնաՁեղութիւն, խոսոսիանութիւն, հեց, սանիդրուազ, Թեղերել, եւայլն։

Վերջաբանագոյնն ազազակող Շահան Շահնուրի գիրքերուն մէջէ՝ «՝շ, ներելի չէ արդարագոյնին վրայ չուշ նեռոց արեւէ թերացում։

Գոցենք փակագիծը։

Մինչեւ ծանոթով յանձրգաբար 150, 98, 170 եւ 142 էջ հաշուող եւ չուրջ 25 խորագիր պարփակող այդ գրքոյկներէն իւրաքանչիւրը գրական առանձին նկարագիր մը չի պարզեր, Շահնուր գրագէտին ծանօթ կողմերը ցոլացնող տարբեր գրութիւններու ժողովածուներ են անոնք, ուր պատմուածքը, ազատաբարոյական էջը, քննադատութիւնը, հրապարակագրութիւնը, յուշն ու ակնարկը արուած են կոգեր կոգեր, երբեմն նոյնիսկ նոյն կտորին մէջ յուշ, պատում թէ քննադատութիւն կարդացած ըլլալու տպաւորութիւնը կ'ունենայ ընթերցողը, ու կը հրճուի, ու կը պայծառանայ, ու կը լիանայ պարզուած պատկերներուն, կատարուած դիտողութիւններուն եւ ազատարծուած մշակութային բացերուն դիմաց։

Այս էջերուն մէջ հոս Շահնուրը ի՛նքն է ու ինքը, — խելացի, յուզիչ, յանդուգն, իրատեսական, հանելի, վիճելի՝ մարդա՛ն բնոյթը թէ բնութեան խորհուրդը պարզած առեն, մեր հարցերուն անդրադառնալ թէ միլիոնոյին, գրական ըլլան չօրափուած նիւթերը թէ ընկերային, անցեալը պեղած առեն թէ առօրեային մէջ մերթուած պահերուն։

Քանիմ են վերջերս գրի առնուած գրական էջերէն «Վարար չուրերը», «Ոգը», «Բոցը», մնայն բացը» եւ «Ռակախ կամուրջները». մինչ յիշելով միայն նորերը, հրապարակագրական ու քննադատական բնոյթ ունեցողներէն կարելի չէ մոռնալ «Գրականութենէն անդին եւ այլուրեղ» եւ «Ընտանիկան ճամանգիտ», մինչ առանձին երախտագիտութեամբ մը պիտի յիշենք անձնական ուղղակի ծանօթութիւններով ոգեկոչած, ընթերցումներու լոյսին տակ բերուցուած ու տեսական դատումով կենդանացուած իր դէմքերն Տէմիրճիպաշեանը, Զրաքեանը, Թէոդիկը, Շաւարշ Մխաքեանը, Թէքէեանը եւ ուրիշներ, որոնք ներկայացուած են իրենց արտաքին գիծերով ու մասնագոյն պատկումներով, կսկիծներով, կարօտներով, մինչ իւրայատուկ անկիւններէն գիտուած, չահնուրեան արժանարժումներով։ Օրինակ մը տալու համար, կարդացէք, ու մի՛ աք պահեցէք, Թէքէեանի արտասանը քնարչող սա սահմանումը.

«... Բայց բանաստեղծութեան մարգին մէջ, կատարելագործութիւնը գինիէ մեղր խոտակրօնութեան, եւ իր խօսքը բրա ձիշդ՝ փախանակ ընելու իրաւ, յանձնեց՝ փախանակ ցայց տալու, ու բառ՝ փախանակ թելադրելու»։

Կարդալով վերոյիշեալ գիրքերը, կամ անոնցմէ որեւէ հատուած, կարելի չէ երբեմն անդամ չզգալ այն զրկանքին կսկիծը, զոր Շահան Շահնուր պատճառեց հայ ընթերցողին, իր նշանաւոր վէպին հերոսներուն հաճելիական վարքագիծին հետեւելով, հետեւելով Մեծատքանչէն ու Ֆրանսական գրականութեան մէջ փորձելով իր բախտը։ Ֆրանսերէնով գրած իր գիրքերը քնարութեան նիւթ չեն հոս, կրնայ մեծ ըլլալ անոնց արդէն, եւ՝ արդէն, անոնց լեռհի Շահնուր նոյնիսկ մրցանակներ խլեց գժուարահաճ Ֆրանսացիներէն, բայց այդ հանգամանքը պիտի համարենք իր յաղթանակը եւ ոչ թէ հայ գրականութեան մէջ չահնուրեան ներդրում մը։ Անպայման հիւր կ'ըսէր Վնտանեցոյ գլխաւոր հերոսը Ֆրանսերէն գիրք գրած իր բարեկամին.

«Գրածներդ ոչ մէկ հայու կրնան խօսիլ, որքան ասենք որ անոնց մէջ «Ինքօսա» բառը չկայ... Այո՛, մի խեղաթ, որովհետեւ միայն այդ չէ որ բերի է. դուն արդէն գիտես, բայց թող որ յիշեցնեմ, թէ Ֆրանսերէնը գայութիւն չունի ասելու «Մա՛յր» բառին, «հա՛յ» բառին, «հայրս» բառին... Ֆրանսերէնը չկայ մի՛ր «զայրակնելի», մի՛ր «հարբ»ին...

Զկա՛յ...

Հետագայ էջերուն կը ներկայացնենք Շահնուրի վերջին դրութեան («Վերակը կոգիս») հատուած մը, որուն մէջ յայտնուած մտքերուն լոյսին տակ մեր յաջորդ թիւով պիտի խօսինք Վնտանցոյ առանց երգի» վէպին երեւանեան հրատարակութեան մասին, հետեւեալ խորագրին տակ.

«ՎՆՏԱՆՑՈՅ» ՆԵՐՔԻՆ ՍԳԱՄՄԱՆ ԱԳՐԱՆՔ...

digitised by A.R.A.R.@

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մեր արեւմտահայ գրականութիւնը շատ աւելի բարդ է, իր լաւագոյն արտայայտութեան մէջ, քան ինչ որ կը կարծուի։ Կարելի չէ այդ գրականութեան մասին խօսիլ հանգամանօրէն, երբ մարդ ստիպուած է հպատակիլ կանխորոշ հայեցակէտի մը, ինչպէս պարտաւոր են ընել հայրենի գրադատները։ Այդ հայեցակէտը լաւատեսութիւնն է։ Դժբախտաբար, գրականութիւնը ո՛չ լաւատեսութիւն է եւ ոչ ալ յոռետեսութիւն։ Այդ բաներէն աւելի՛ անդին է ան։

Հայրենի գրադատութիւնը թանկարժէք է ամէն անգամ, որ լոյսին կը բերէ անյայտ վաւերաթուղթեր, չնորհիւ այն բարեզէպ խմբաւորումին, զոր կը կրեն թրքահայ մշակոյթի տարասփիւռ բեկորները։ Ցայտնութեան այդ շրջանակէն դուրս, յանձնարարելի չէ նկատի առնել հայրենի գրադատութիւնը եթէ չուզուիր դուռ բանալ հակամարտ դիրքաւորումներու փուռ բախումին։ Հայրենի գրադատութիւնը է՛յն՝ ինչ որ է, ներքին սպառման ապրանք։

Սովետական Հայաստանի մէջ, ուր նոր աշխարհ մը կը կառուցուի, կը տիրէ այն համոզումը, թէ ամէն ինչ, մէջն ըլլալով բնականաբար գրականութիւնը, պարտաւոր է ծառայել վերականգման հայ ճիգին, այլ խօսքով՝ ենթարկուիլ կաշկանդումի մը։ Այդ կաշկանդումը կը դժուարացնէ գրականութեան բնական յառաջընթացը, առանց սակայն զայն կասեցնելու կամ խափանելու։ Հարկադրանքը կրնայ նոյնիսկ բեղմնաւոր ըլլալ։ Իրողութիւնը ծանօթ է։

digitised by A.R.A.R.@

Գալով արեւմտահայ գրականութեան, երբ պատահի որ ան մերժէ հը-պատակել ծառայութեան հարիւրամեակներուն, ներեւան կը ներողէն դայն, այլապէս թէ դայն կը մղէ ծառայութեան հասանելիին մէջ: Ազնուագոյն ու վրա՛ժ մը, որուն համար քիչ խոկ է գրական երկի մը ժամանակաւոր ձեւա-փոխումը, եւ բոլորովին անհնարելի՝ անոր յարուցած վէճերը նման այն վէճ-ին, որ ծագեցաւ ասրիներ առաջ Կոստան Զարեանի «Նոտաչուն ասքիւ»: Վէճ-ին փոփոխուած կը պատասխանէր ներքին պահանջի մը, առանց բնաւորը եղծանելու: Ան կը մնար ներքին ապառնան ապրանք:

Երբեմն կը պատահի ասկոյթ, որ արտասանուի ան: Այսինքն թէ գրի առնուին ուսումնասիրութիւններ, յատկապէս Սփիւռքի համար, եւ մեր բա-ցեմիա խմբագիրը կը հրատարակէ դայն «Մատնաւոր իմ թերթիս համար» ինքնագրի վերնագրով, որպէս թէ գրութեան հայրենի ծագումը գրուածոն բլլար անոր արժէքին: Հոս այլեւս ոչ միայն պատճառ չունինք շնորհաւորա-բլլալու հայրենի գրագէտին, այլեւ ամէն իրաւունք՝ ուզղելու ինչ որ ուզ-ելի է բան մեզի: Վերա Ցարութիւնեան եւ Շահէ Տասուրեան մեզ են ա-ռեր Վահան Թէքէեանի ճամպեները, առանց որ կարիանին իրենց կոնդակ թ-թիկները: Մինչդեռ Սփիւռքը յուրիւն կը պահէ այդ գրաւուղի ճամպե-ներուն հանդէպ, անոնց մը ակնածանքով եւ իրական կարեկցութեամբ, հայ-րենի գրագէտները առաջ կը նետուին ապառ համարձակ եւ ոչ իսկ հարց կու-տան իրենք իրենց, թէ հրատարակելի՞ էին մերթ այդ ճամպեները:

Ամէն անանք, որ փոփոխի պատասխանատուութիւնը առանձնաձ են Վ. Թ-ի ճամպեները հրատարակելու, անոնք (բոլորն ալ Թրքահայ գրիչներ) ծնունդ տուած են, առաջին իսկ օրէն, հիմնական հարցի մը, որ մինչեւ օրս կը գրգռէ Սփիւռքի գրասէրները: Մինչեւ ա՞ր ասանման արդարանալի է մաքրիմ ճամպեներու հրապարակումը, երբ դիտենք, թէ անոնց հեղինակը դիտի ընդդիմանար, իր էութեան ցաւագին ցասումով, եթէ անխորհուրդ (indiscret) հրատարակութեան մը, ինք՝ որ բարձր բարոյականի լուսապսակն էր եւ միշտ վերապահ, չրջահայեաց, խոհեմ եւ, ուրիշ է ըսել՝ գերզգայ: Ան՝ որ կը գրէր («Ի՞մ կուրութիւնը սիրագեղ սիրային») — «Ինչ բաները միայն քեզի՛ է ար կը գրեմ... Ոչ ոքի չեմ բացած սիրտս... Եռ իմ գիտցիմ անգամ չեմ բացած»: Անուանի ա՛յս է հարցը, որ կը կիրէ ու կը մրիէ: Պէ՞տք էր հրատարակել թէ ոչ:

Հարցումին պատասխանը կարելի է փնտռել գիրքի յառաջաբանին մէջ, որ մտանուր յոյս մը կը սփռէ ճամպեներուն վրայ: Ան կ'ըսէ, ամէն բանէ առաջ, թէ երկու թղթակիցներուն միջեւ գանուող հոգեկան-իմացական կա-պը խզուած է: Թէքէեան կապուած էր ալեկերպին, ինչպէս ինք կ'ըսէ, հայ-բական գուրգուրան սէրով, եւ կրասերը իր կողմէ ընդառաջ գացած է անոր զգացումներուն, դայն «Հայրս» կոչելու ասանման: Ահա այս արդիական սի-բոյ խզումն է, որ կարելի կը դարձնէ յաշս արդիին, նուիրական մաքրմու-թեան խոչառնդումը:

Մենք մեր առջեւ ունինք բաց կուրծք մը, ուր դիւրավառ սիրտ մը կը շարունակէ արոտիլ ու բարեբերել, բայց յառաջաբանին մէջ չունինք անոր արուած պատասխանին համարգրը: Այլ խօսքով՝ մէջտեղը կայ խոսովա-նութիւն մը, ըսենք՝ համարձակութիւն մը, որ ասրուած է փարոնեարու լու-սեղէն խուրձին տակ, բնազդասութեամբ, երբ յառաջաբանին հեղինակը կը մնայ հեռու՝ անխորհուրդ լոյսէն: Այս զգուշաւոր մեկուսացումը արդեւք չ'ըլլար, որ ան չմնայ հիացող, ուրիշ քան երբեք համարձակ գրականու-թեան: Ա՛յս պարմանու միայն, որ մերկացող գրագէտը խոսովանութիւն-

digitised by A.R.A.R.@

ներու ժան-ժաղը ըլլայ։ Ուրիշ մէկը։ Դժբախտաբար այդ ուրիշը նոյն ինքն հայրն է։ Բաց ասոր, արդար չէ դեղեցիկ որակումով սահմանափակել համարձակ գրականութիւնը։ Գեղեցիկէն տարբեր եւ աւելի բան մըն է։ Անշուշտ արդար է, որ համարձակ գրականութիւնը, որ մեծ ծառայ առացած է մեր ներկայ դարուն, մեր մէջ եւս ունենայ իր համեստ անկիւնը։ Գէտք է դիտնալ սակայն, որ համարձակութիւնը մեզի չէ տրուած իբրեւ յաւելեալ պարգեւ։ Գէտք է վճարել զայն։ Եւ անձնա՛պէս։ Ոմանք կը վճարէ (ի՞նչ առատաձեռնութիւն) հօրը կուտակած ակներով։

Այս առթիւ աւելորդ չըլլայ բսել, թէ ոչ մէկ հարստութիւն այնքան դիւրաւ կ'ենթարկուի արժեզրկման, տգիտաց հոգիներու եւ անհորիզոն իմացականութիւններու կողմէ, որքան համարձակ գրականութիւնը։ Կը բաւէ, որ առաջ դերազանցուի ոգիէն եւ մահկանացու ձեռքը՝ նեսի անհիմնական ալացքին, որպէսզի քաղքենի դատարանի առջեւ քաշուին Ֆլօպէր եւ Պոտլէր։ Համարձակ գրականութիւնը սահմանուած չէ անասնային տարրերու, Նոյնիսկ եթէ անոնք սոխակ են։ Ժիւլ Ռենար կ'ըսէր. «Եթէ սոխակը կը թռիչտարդենին վրայ, անոր վարդին համար չէ, այլ լուիճներուն (pucerons)»։

Վեսա Տարուիւնեան եւ Շահէ Տատուրեան կը լծուին արժեզրկման տխուր աշխատութեան, մանաւոր մակարդակի մը վրայ, ուր դիրքին նիւթը, որ ողբերգութիւն մըն է, կը փոխարինուի ազգային ընթացիկ փրոփականտով։ Գիրքը ունի հիմնական նիւթ մը, որ իր գոյութեան միակ իրաւունքն է եւ արժէքը։ Այդ նիւթը երգի մը ծնունդ է, անոր փթթումը եւ հուսկ ուրեմն արիւնոտ ջախջախումը, բանէ՝ որ կը պարզուին նամակներուն մէջ, հոգեբանական հանդրուաններու ճշգրիտ առաջադրութեամբ։ Երգի կողքին տեղ գտած են ազգասիրական ջերմ զգացումներ, զորս հայրենի գրիչները օգտագործած են շրջադարձելու եւ տեղափոխելու համար նամակներուն ծանրութեան կեդրոնը, այնպէս որ՝ ազգասիրութիւնը անցած է առաջին գիծի վրայ եւ ամբողջովին քողարկուած բո՛ւն նիւթը։

Անոնք կատարած են, միշտ ի նպաստ իրենց փրոփականտին, բազմաթիւ մէջբերումներ, թէ՛ արձակէն եւ թէ չափածոյէն, եւ յիշատակած են նոյնիսկ գպրոցականի թատրած ծաղիկներ, Լոյս Զուարթ, զոր նոյնինքն հեղինակը, որ հեռու է կոյր ըլլալէ, իջեցուցած է իրենց ճշգրիտ ատիճանին։ Վերոյիշեալ մէջբերումները կանոնաւորաբար չեչտած են ազգասիրական երակը, եւ լուութեամբ անցած, ըստ խնդիր ուշադրութեամբ, բո՛ւն նիւթին վրայէն, որ առաւելապէս մարգկային է։ Այլ խօսքով՝ հայրենի գրիչները խեղաթիւրած են զանցառութեամբ (par omission)։

Այսպէս է, որ մարդկայինը փոխարինուած է հայկականութեամբ։ Շահագործուած է այն իրողութիւնը, թէ թղթակից գրագէտները ակր եւ համարում յայտնած են Սովետական Հայաստանի հանդէպ, հոգ չէ թէ այդ ակրը մեռցած ըլլայ պղատոնական ակր եւ յիշուած՝ անցոգակի կերպով, իբրեւ լուսանցքային արժէք։ Դանիէլ Վարուժան ըսած է ուրիշներու կարգին. «Ազգասիրութիւնը մեր գրականութեան մէջը կուտրեց»։ Երբ խոստաւորութիւնն ունինք սիրանալու մարդկայինի երկի մը, հայրենի գրագէտները զայն կ'իջեցնեն հասարակ խմբագրականի մը մակարդակին, դիտնալով հանդերձ, թէ Վահան Թէքէէան իր եռեւ թողած է հարիւրաւոր ազգասիրական էջեր, զորս կարելի էր օգտագործել, առանց երբեք խեղաթիւրելու գիրքին ոգին։ Անոնք կը նմանին այն մարդուն, որ կը կոտրէ եւ կը ջարդէ տարաշխարհիկ (exotique) եւ գեղատեսիլ ծառ մը, վառելանիւթ ունենալու համար, երբ իր առջեւ դիզուած կար գիւրավառ առաղձը։

digitised by A.R.A.R.@

Անհասկացողութիւնը կոպիտ է։ Գիրք մը, որ սրտառուչ ողբերգութիւն է մեզի համար, որ դիծէ գուրս ոգի մըն է աննախընթաց, որ հրաշէկ երկաթ է եւ պայթուցիկ, եւ տեսակը, հայրենի գրագէտներու գրչին տակ կ'ըլլայ, իմացական գերազոյն մոլորանքով (aberration) երկ մը՝ հանրամատչելի, օրինակելի եւ չինարար։ Ան՝ որ կոչ մըն է դէպի անհունը, ան՝ որ գինովութիւն է եւ արիւն-արցունք, ան կը վերածուի պատի զարդարանքի, սեսակ մը դամասկոսեան նրբագործ հրացանի, ուր փամփուշտ չկայ։ Կը մոռցուի, թէ գրականութիւնը ունի իր խաւարի տապեռները, եւ թէ գրականութիւնը միշտ անմահ չէ եւ ոչ ալ գրագէտը՝ անմեղ։

Մեր զարմանալի գրադատները կը փորձեն մեզի հաւատացնել, թէ հակիրթը, զոր պարպած են իր ներքին պարունակութենէն, կը շարունակէ մնալ կենդանի ամրոզչութիւն մը։ Եթէ ճիշդ է, որ հակիրթ մը կայ մէջտեղը, ան բոլորովին արտասովոր հակիրթ մը պէտք է եղած ըլլայ, քանի որ անկէ դուրս թռած է կապոյտ թռչունը, որ ազատօրէն եւ անխոհեմաբար սըլացած է դէպի անհաս անուրջներ, որ իր սիրազեղ երդը արձանագրած է ամպերուն վրայ թէ աստղերուն, եւ որ եղած է կրակի զոհ։ Ահա այդ նոյն կապոյտ թռչունն է, որ ապրած է գահավէժ անկումը պատրանաթափութեան, ան է, որ վերածուած է Պրոմեթէոսի անդղին, որ բանաստեղծին ուչինչ կը ներէ կովկասեան լեռներուն մէջ, այն բանաստեղծին, որ կը խոստովանի իր մեղքը, թէ՛ երականը եւ թէ երեւակայականը, եւ կը կրէ վերքերու ամէնէն անբուժելին, բանաստեղծին այդ յաւիտենական թափառականին, մենաւոր, հաշմանդամ եւ աներգիք անցորդին, որ կը կերտէ պալատը դաշնաւոր պատրանքներուն, որ կը մնայ ծարաւի, թարմագեղ միսերու ջերմութեան եւ մայր հողի ճակատագրական գրկախառնութեան, անոր՝ որ, վերջ ի վերջոյ, կը խոնարհի, կը տապալի, կը սողայ խաչին առջեւ, եւ կը կարծէ տեսնել Ան՝ որուն ոչ ոք կրնայ նայիլ բաց աչքերով։

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

digitised by A.R.A.R.@

Բ. ԵՂԻԱՑԵԱՆ

Ժողովրդային հոգեբանութիւնը «ՓԱՋ ՆԱԶԱՐ» հեքիաթին մէջ

Դ.— «ՓԱՋ ՆԱԶԱՐ» ՀԵՔԻԱԹԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հարկ է նախ լսենք «Փաջ Նազար» հեքիաթը։ Թէեւ շատ ծանօթ նիւթ մըն է, բայց թարմացնենք զայն մեր մտքին մէջ։ Ընդհանուր հեքիաթի դրուագները վրայ կ'ուզենք հիմնել մեր դատումները։

Արդ՝ կը ներկայացնենք «Փաջ Նազար»ը հետեւեալ սեղմ տարազին մէջ։

Կար ու չկար անշնորհիք մարդ մը կար, անունը՝ Նազար, ա՛յնքան վախկոտ, որ մինակը տունէն դուրս չէր ելներ. կնիկը դուրս երթալուն՝ հետը դուրս կ'երթար, ներս գալուն՝ ներս կու գար։ Այս պատճառով ալ գիւղացիք զայն կոչած էին «Վախկոտ Նազար»։ Կինը կ'աշխատէր, ինք նստած կ'ուտէր։

Այս վախկոտ Նազարը ամառ գիշեր մը, կնիկին հետ տունին սեմէն դուրս կոխելուն, կը տեսնէ լոյս-լուսնակ գիշեր, կ'ըսէ.

— Ա՛յ քէ կնի՛կ, ի՞նչ քաղուան կտրելու գիշեր է սա։ Միրտս կ'ըսէ՝ գընա՛ Շահին քարուանը հնդկաստանէն գալուն կտրէ, քեր տունդ լեցուր...

Կինն է.— Ձայնդ կտրէ, նե՛րս մըտիր։ Հելէ սա քարուան կտրողի՛ս մտիկ ըրէք...

Նազարն է.— Անզգա՛մ կնիկ ինչո՞ւ չես թողուր, որ երթամ քարուանը կըտրեմ, տունը լեցնեմ։ Ալ ի՞նչ տղամարդ եմ ես, որ դուն համարձակիս դէմս խօսիլ...

Որ էրիկը երկար ըրաւ՝ կնիկն է դուռը երեսին կը փակէ.

— Դեհ, հիմա գնա՛ քարուանդ կըտրէ...

Վախկոտ Նազար կը պազատի, կ'աղաչէ, կինը դուռը չի բանար։ Ճարը կտրած՝ կը կիր, պատին տակ գիշերը կ'անցընէ դողով։

Առաւօտուն, կողը արեւուն տուած, մինչ կը սպասէ, որ կնիկը գայ գինի ներս առնէ, ճանճեր կու գան կը լեցուին քիթին-պռունգին։ Որ շատ նեղացուցին,

digitised by A.R.A.R.@

ձեռքը երեսին կը զարնէ: Ճանճերը ափով վար կը քափին:

— Զա՜հ, աս ի՞նչ պատահեցաւ:

Կ'ուզէ համրել ինկած գոհերը, ու չի կրնար. կը մտածէ՝ հազարէն պակաս չէ:

— Վա՜յ, ես որ կարող եմ մէկ զարկով հազար շունչ ջարդել, ալ ի՞նչ եմ այս անպիտան կենկան փէշին կապուեր...

Վեր կը կանգնի. կ'երթայ գիւղին հրապարակը: Բախտէն՝ հոն են տէրտէրն ու ղէմի գիւղի բեհիան, եւ մարդիկ՝ հաւաքուած քախտասաց գնչուի մը շուրջ: Բախտագուշակը խօսքը նորեկին կ'ուղղէ.

— Դուն մեծարախտ մարդ ես. քու քաջ քաղուածքէդ կը տեսնեմ:

Քաջը կը դառնայ տէրտէրին.

— Բա՛, Տէր Հայր, չե՞ս ալ հարցներ... էսպէս ու էսպէս...

Կը պատմէ լուսնակ երեկոն դուրսը անցընելը եւ առաւօտեան քաջագործութիւնը, եւ թէ՝ ա՛լ տունը պիտի ձգէ հեռանայ, որ մարդիկ իմանան իր անունը...

Որ տէրտէրը լուռ-լուռ կը ծիծաղի, բեհիան կ'ըսէ.

— Բերէք, անունը գրենք տանք, քաջին մուրազը չմարի:

Եւ անոր գլուխէն կը քաշէ փաթթոց լաթը, ու հանաքի ծաղրի համար վրան կը գրէ.

«Ինչպէս հերոս Քաջ Նազար,
Որ մէկ զարկով ջարդէ հազար»:

Նազարն է՝ լաթի կտորը փայտի մը ծայրը կը կապէ, դրօշակ կ'ընէ: Երկու երիտասարդներ կը վազեն, ագարակի մը ետեւի բակի անկիւնէն, խոփի երկաթի կտորներու մէջէն ժանգոտ սուր մը կը գտնեն, կը բերեն ու կը կապեն քաջին մէջքին, գովքով-գոչումով զայն ճամբայ կը դնեն:

Նազար կ'երթայ, գիւղին եզերքը արտածող էշ մը անհոգ-համարձակ կը քաշէ, վրան կը նստի, կը քշէ.

— Դե՛հ, ո՞ւր ես աշխարհ...

Կ'երթայ թէ չ'երթար, ետին կը նայի, որ գիւղէն շատ է հեռացեր, ամայութեան մէջ ինկեր: Վախ մրն է փորին մէջ կը մեծնայ: Ինքնիրեն սիրտ տալու համար՝ կը սկսի մմռոալ, խօսիլ, երգել: Քանի հեռանայ՝ այնքան սարսափը կը սաստկանայ, ու քանի սարսափի՝ այնքան ձայնը կը բարձրանայ, կը սկսի գոռգոռալ, էշն ալ անօթութենէն՝ կը զբռայ... աղմուկէն՝ թռչուն ու նապաստակ փախուստ կու տան: Ու երբ անտառուտ ձորը կը մտնէ, ամէն ծառի ետեւէն աւազակ մը տեսնելու իր վախէն՝ այնքան կը գոռգոռայ, որ լեռներ կ'արձագանգեն:

Դուք գիտցէք, այն պահուն քաղաքէն փերեզակ մը իր ձին քաշելով կու գար ձորէն: Զարհուրելի ձայները, որ կը լսէ.

— Վա՜յ, — կ'ըսէ, — միթէ իմս ալ տե՞ղ պիտի հատնէր... Կայ թէ չկայ, այստե՞ղ պիտի հատնէր... Կայ թէ չըկայ, այստեղ աւազակախումբ մը կայ...

Ու ձին կը թողու ու կը փախի սարն ի վեր:

Նազարն է — այ բախտի հանդիպիս — կու գայ կը տեսնէ ճամբուն մէջտեղ կանգնած քամբով ձի մը, խուրքը լեցուն գոյն-գոյն զգեստներով: Շուտով նոր շոր, նոր մուճակ կը հագնի, իշուկը կ'արձակէ, ձին կը նստի, կը քշէ:

Շատ կ'երթայ թէ քիչ, կը հասնի գիւղ մը: Ինքը գիւղին անծանօթ, գիւղը՝ իրեն. ո՞ւր դիմէ, ո՞ւր չդիմէ: Ականջ կու տայ, որ տունէ մը տաւուզգուռնայի ձայն կայ: Կը քշէ ու կը մտնէ ներս:

Եւ ի՞նչ տուն ըլլայ. հարսնիքի ու քէյֆի:

— Բարով, հազա՞ր բարով...

Հիւրը կ'առնեն սոփրայի գլուխը կը նստեցնեն, այնպէս գոյն-գոյն հագած, դրօշակը ձեռքին, թուրը մէջքին:

Ալ ի՞նչ համադամ բան որ կայ՝ կը լեցնեն առջեւը:

Կ'ուտէ, կը խմէ. հարսնիւորները կ'ուզեն իմանալ ով է իրենց նորեկ հիւ-

digitised by A.R.A.R.@

բը: Նստողներէն մէկը կը մշտէ իր ֆովինի կոդէին առ կը հարցնէ, աս ալ իր ֆովը նստոդին, եւ այսպէս իրար մշտելով հարցումը կը հասնի միւս ծայրը նստող տէրտէրին: Տէրտէրը աչքը կը քթէ, հիւրին դրօշակին վրայ կը կարդայ.

«Անյաղթ հերոս Քաջն Նազար,
Որ մէկ զարկով Ջարդեց հազար»:

Կը կուրդայ ու զարհուրած կը յայտնէ իր կոդէին նստոդին, ոա ալ իր կոդէին նստածին. ան ալ՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին, եւ լուրը կը հասնի մինչեւ դուռը նստոդին: Ամբողջ հարսնեստունը կը դղրդի, թէ՝

— Բա՛, չասե՞ս, նորեկ հիւրն է, ինքը՝ Քաջն Նազարը...

— Հա՛... Քաջ Նազա՞րը, — կը բացագանչէ խոփած պարծենկոտին մէկը,— ինչէ՞ւ է փոխուեր, է՞հ, մէկ անգամէն լաւ չճանչցայ:

Ու մարդիկ կը սկսին իրարու բերնէն խլել ու պատմել անոր քաջագործութիւնները, հին օրերուն՝ հետը անցուցած էյֆերը...

— Հապա, այդ ինչպէ՞ս կ'ըլլայ, որ հետը ծառայ բան չունի, — հարց կու տայ հիւր երիտասարդ մը:

— Է՞հ, այդպէ՛ս է անոր սովորութիւնը. ծառաներով շրջիլ չի սիրեր: Անգամ մը ես իրեն հարցուցի, ըսաւ. «Ծառա՞ն ինչ ընեմ, ամբողջ աշխարհիս իմ ծառան է»:

— Հապա այդ ինչպէ՞ս կ'ըլլայ որ շնորհիով սուր մ'իսկ չունի:

— Շնորհիքն ալ արդէն ատոր մէջն է, որ այս ժանգոտ սուրով հազարը ջարդէ: Լաւ սուրով՝ ո՛վ ըլլայ կրնայ կռուիլ...

Եւ ապշած ժողովուրդը ոտքի կը կանգնի, կը խմէ քաջին կենացը: Իրենց մէջէն խելացի մէկն ալ առաջ կու գայ, ճառ կը խօսի.

— Մենք վաղուց լսեր էինք քու հրաչակը. կարօտ էինք քու տեսքին. եւ ահա բախտաւոր ենք քեզ մեր սեղանին գլուխը ունենալու:

Նազար ձեռքը օդին կու տայ կը հառաչէ: Ժողովականները իրարու աչքը կը նային, ու խորհրդաւոր՝ կը հասկնան, թէ այդ հառաչն ու շարժումը ինչ՞ան բան կը նշանակէր...

Ու ցրուելով, հարբած հարսնեաւորները ամէն տեղ կը տարածեն հռչակը, թէ ահա կու գայ «Անյաղթ հերոս Քաջն Նազար»:

Աւել-աւելիով կը պատմեն անոր զարմանալի գործերը, կը նկարագրեն անոր ահռելի կերպարանքը: Գուսան-աշուղ գովերգ կը հիւսեն անոր անունին.

«Բարով եկար, հազար բարի,
Հզոր արծիւ մեր սարերի.
Թեզմ տակարին զուն ապաւէն,
Մեզ կը փրկես անիրաւէն.
Մատաղ ենք մենք քու գրօշին,
Մէջքիդ թուրին, ասկիդ հեծին.
Անյաղթ հերոս Քաջդ Նազար,
Որ մէկ զարկով Ջարդես հազար»:

Ու մարդիկ ամէն տեղ իրենց նորածին մանուկներուն անունը կը մկրտեն Քաջ Նազար:

Ա՛լ գիւղերէն հեռու Նազարն է կը շարունակէ իր անյայտ ճամբան:

Կ'երթայ, կը հասնի կանաչ դաշտ մը: Ձին կը թռցնու, որ արածի, ինք դրօշակը կը տնկէ, շուրին կը քնանայ, այլայլումէն գինովցած:

Դուք ըսէք, այդ արօտավայրը կը պատկանի եղեր հօթնեղբայր հսկաներու, իրենց ամրոցը՝ դէմի տարի գլխուն: Կը նային, մարդ կայ իրենց արտին: Կ'ըսեն՝ այս ի՛նչ սրտոտ մարդ պիտի ըլլայ, որ համարձակի մեր արօտին իր ձին արձակ թողուլ...

Ամէն մէկը ծանր մէկ բիր բռնած՝ կ'ելնեն դաշտ: Կը մօտենան եւ ի՞նչ տեսնեն. քնացողի գլխուն վերեւ տնկուած դրօշակին վրայ գրուած է.— *«Անյաղթ հերոս Քաջն Նազար...»:*

Վա՛յ... Քաջ Նազա՞րն է... Հսկաները իրենց մատները կը խածնեն... Ո՞վ պիտի հաւատար, թէ հարբած հարսնեւորներու տարածած լուրը ասոնց ալ հա-

digitised by A.R.A.R.@

սած ըլլար: Թուքը իրենց բերնին մէջ չորցած՝ հսկաները կը սպասեն միւնչեւ որ քաջը քունէն արթննայ:

Որ արթնցաւ, Նազարը շուրջը կը տեսնէ հսկաները, ամէն մէկուն ձեռքին տեղ մէկ բիր: Սարսափէն դող կու գայ վրան: Հսկաներն ըսես, երբ կը տեսնեն որ զուսնատեցաւ, դրօշակի ետին ծուռրեցաւ, կ'ըսեն. «ահա բարկացաւ, հիմա կը ցատկէ եւ մէկ գարկով մեր եօթն ալ կը սպաննէ»: Եւ առջեւը գետին կը փռուին.

— Անյապաք հերոս, մեռնիք յսեր էինք քու տատուր անունդ: Քու տեսութեանդ կը փափաքէինք: Բախտաւոր ենք, որ քու ոտքովդ եկեր ես մեր հողին: Մեռնիք քու խոնարհ ծառաներդ եօթ եղբայրներ ենք: Կ'ազատենք, շնորհք ընես, գաս մեր հացը կտրես...

Նազարին սիրտը դող կուգայ. կ'ելլէ, կը նստի ձին. հսկաներն ալ դրօշակը առջեւէն բռնած՝ կ'երթան ամրոցը: Այնտեղ գայն կ'ընդունին վայել պատիւով, կերուխումով, եւ այնքան գովք կը պատմեն, որ իրենց գեղեցիկ քոյրը կը սիրահարի վրան...

Բայց խօսիլ-խօսակցի՞լ կ'ըսէք. ի՛նչ բան ալ խօսի՝ յարգն ու պատիւը հետը կ'ուզեցայ...

Այդ ժամանակներուն, երկրին կատաղի վագր մը իջած՝ սարսափ կը ձգէ ժողովուրդին մէջ: Ո՞վ կը սպանէ վագրը, ո՛վ չի սպաններ. ի հարկէ փեսայ Նազարը կը սպաննէ: Ուրիշ ո՞վ սիրտ ունի, որ վագրին դէմ ելլէ:

Վագրը սպաննելու խօսքը որ կը լսէ, Նազարը վախէն դուրս կը վազէ: Եօթ եղբայրները կը կարծեն, որ ահա կ'ուզէ շուտ հասնիլ վագրին ու ճիտը ոլորել: Նշանածը կը գոչէ. «ո՞ւր այդպէս առանց գէնքի, գազանի մը դէմ...»:

Նազար ապարսափահար կ'երթայ անտառին մէկ ծառին կը մագլցի, կը պահուըտի:

Բախտի չարէն, վագրն ալ կու գայ ճի՛շդ նոյն ծառին տակ կը պառկի: Նազարը, որ վագրը կը տեսնէ՝ լեղին ջուր կը կտրի, աչքերը կը սեւնան, ձեռքոտքը կը թուլնան, ու՝ թոր՛մբ՝ ծառէն կ'իյնայ ճիշդ գազանին կռնակին: Վագրը ապարսափած՝ տեղէն վեր կը թռի, կը սուրայ, բայց ի՞նչ սուրալ. խրտչած շրջարած՝ սար ու ձոր, գիւղ ու դաշտ չի հարցներ, ասդին-անդին կը զարնուի, Նազարը զարհուրած՝ գազանին մէջքին ու բաշերուն փակած...

Գիւղացիներ մէկ ալ կը տեսնեն Քաջ Նազարը վագրը հեծած կը քշէ.

— Հէ՛յ, հարայ-հուռայ, հասէ՛ք հա հասէք:

Սիրտ կ'առնեն, ամէնքը ամէն կողմէ կը յարձակին, թուրով-փայտով կու տա՛ն հա կու տան, շլմորած-շնչտտ անասունը կը զգետնեն, կը սպանեն:

Նազարը, որ ուշքի կու գայ.

— Ափսո՞ս, — կ'ըսէ, — ինչո՞ւ ըսպանեցիք. զօրով խեռով ձի մը շիներ էի, հեծեր...

Լուրը կը տարածուի, կը հասնի ամրոցը: Ժողովուրդը, հերոս, ծառայ, կին ու մանուկ՝ դուրս կը թափին, Նազարը կը տանին ուսամբարձ, վրան նոր երգ կը կապեն.

«Ահեղ վագրը քեզ ձի ըրիր,
Հեծար սարէ սար քշեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարէ դար,
Ազգի պաշտպան դուն Քաջ Նազար»:

Ու կը բերեն Քաջ Նազարը կը պսակեն հսկաներուն գեղեցիկ քրոջ հետ: Եօթը օր ու եօթ գիշեր հարսնիք կ'ընեն, կը գովեն հարսն ու փեսան.

«Լուսնակը նոր սարն ելաւ,
Այդ որո՞ւ նման էր.
Լուսնակը նոր սարն ելաւ,
Այդ Քաջ Նազարն էր»:
Արեգակ նոր շաղեշաղ,
Այդ որո՞ւ նման էր.
Արեգակ նոր շաղեշաղ՝
Այդ քաջի Նազ-եարն էր»:
Շնորհաւոր, շնորհաւոր,
Քաջ Նազարին շնորհաւոր,
Իր Նազ-եարին շնորհաւոր,
Ոչխարին աշխարհին շնորհաւոր»:

digitised by A.R.A.R.@

Զարը չլսէ, այդ գեղուհին ալ ուզած է եղեր հարեւան երկրին թագաւորը: Որ իմացաւ, թէ իրեն չեն տուեր, ուրիշի հետ են ամուսնացուցեր, զօրէ կը քաշէ ու կու գայ հօր-եղբայրներու դէմ:

Հսկաները կու գան Քաջ Նազարին, առջեւը գլուխ կը խոնարհեցնեն:

Պատերազմի խօսքը, որ կը լսէ՝ Նազար դուրս կը թռի, կ'ուզէ փախչիլ-պահուըտիլ: Մարդիկ կը կարծեն՝ ան կ'ուզէ հսկոյն յարձակիլ թշնամիին վրայ: Առջեւը կ'իյնան, թէ՝

— Տէ՛ր, առանց զենքի, զրահի դուն մինակդ ո՞ւր կ'երթաս այսպէս, գլուխդ վա՞զ են անցեր...

Լրտեսներ արդէն լուր կը հասցնեն թշնամիին, թէ Նազար ահա միա՛կը կու գայ...

Հսկաները Նազարին կը թերեն ահեղ ձի մը, զենքով-զրահով կը նստեցնեն վրան, զօրքն ալ հետեւէն.

— Կեցցէ՛ Քաջ Նազար, մա՛հ թշնամիին...

Բայց Նազարի տակի ձիայգը, որ կը զգայ, թէ վրան ի՛նչ անպէտ-անվարժ մէկը է նստած, կը խրտչի, գլուխը կ'առնէ ու կը թռի ուզիղ դէպի թշնամի բանակը... Զօրքը կը կարծէ ահա քաջը յարձակեցաւ...

Նազարը, որ կը տեսնէ չի կրնար ձիւն գլուխը զսպել, որպէսզի չիյնայ ձեռքը կը նետէ, կ'ուզէ ծառի մը փաթթուիլ: Դուք բախտ ըսէք, ծառն ալ փըստած է եղեր, գերանի չափ ճիւղ մը կը փրթի ու Նազարին ձեռքը կը մնայ...

Թշնամի զօրքը, որ Քաջին համբաւը լսեր էր, այս գործն ալ իրենց աչքով տեսնելնուն՝ ա՛լ փորերնին սիրտ չի մընար. երեսը դարձեցին կը խախչի.

— Փախի՛ր որ փախչիս, եթէ մարդ ես՝ գլուխդ ազատէ. ահա Քաջ Նազար ծառերը արմատահան ըրած կը սուրայ, կը յարձակի:

Այդ օրը կատաղուողը կը կատաղուի, ազէ մնացողը իր սուրը Քաջ Նազարի ոտքին առջեւ կը դնէ, կ'երդնու իր հպատակութիւնը:

Ու պատերազմի աւեղ դաշտին վերադարձին, ժողովուրդը յաղթական կամարներ կը կանգնէ, երգով ու պարով եւ ծաղիկներով ու նուագով Քաջ Նազարին առջեւ կը քաշին, առաջ-փառքով կը բերեն զայն եւ կը նստեցնեն գահին:

Քաջ Նազար կ'ըլլայ թագաւոր: Այդ հսկաներէն ամէն մէկուն կու տայ պաշտօն մը, եւ ամբողջ աշխարհը կ'առնէ իր ափին մէջ:

Ու կ'ըսեն, թէ մինչեւ այսօր ալ դեռ կ'ապրի ու կը թագաւորէ Քաջ Նազար: Ու երբ մարդիկ բաւութենէ ու խելքէ խօսք ընեն, ինք կը ծիծաղի ու կ'ըսէ.

— Ի՞նչ բաւութիւն, ի՞նչ խելք. բանը մարդուս բա՛խտն է: Բախտ ունի՞ս, էէփդ կու գայ քեզ կը գտնէ:

Ու պիտի իշխէ որքան ատեն որ մարդիկ խելքով չեն դատեր:

Ե.— ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԻԲՐԵՒ ԱՆՀԱՏ ՀԵՐՈՍ

Ահա գրոյցը, որուն դերակատարները են հերոսը, թշնամը, հոգեւորականը, ժողովուրդը եւ կենդանական աշխարհը, այսինքն՝ կեանքին բոլոր տարրերը: Նախ՝ վերջ առնենք հերոսին անձնական նկարագիրը:

Նազարը վախկոտ, թոյլ, ապիկար տարուած մը է, մարդոց շարքերէն դուրս մնացած մարդ մը: Իր գոյութիւնը միայն իր կնոջ փէշէն կապած է եւ գիւղի բնակիչներուն ծանօթ է միայն իր վախկոտ կոչումով: Եւ յարդ ոչ մէկ աշխատանք ըրած է, ո՛չ տունին մէջ, ո՛չ դաշտին: Ծոյլ-ծոյլ կը նստի կ'ուտէ: Իր առաջին անկախ գործը՝ զէմքին խոնուած ճանճերը հարուածելն է, յաջողութիւն մը, որ գինքն ալ կը զարմացնէ:

Գիտենք, որ այս նկարագիրը հայկական չէ, այլ՝ յատուկ է այն ժողովուրդներուն, որոնք ծոյլ-ծոյլ կ'ապրին երենց կիներուն շահածովը:

Եւ սակայն, հերոսին այս մեղկ նկարագիրը իր մէջ բնածին չէ, առացական

digitised by A.R.A.R.@

է։ Իր բնութեան խորը անիկա վայրագ արիւն կը կրէ, որ երբեմն կը խլրտի։ Լուսնակ գիշերուան տեսքը իր մէջ կ'արթնցնէ ո՛չ թէ քնքուշ հոգուերգութիւն, այլ ասպակութեան տենչ — երթալ շահին քարուանը կարելու։

Այս տեսակէտով, հերոսը մանուկի հոգեբանութիւն կը կրէ, դեռ չիրագործուած փափաքներով լի։ Մանուկն այ, երբ իր շուրջը կը դիտէ, կը տեսնէ ամէն մարդ կ'աշխատի, գործ առաջ կը բերէ, տուն ու ճամբայ կը շինէ, կառք կը քրշէ, կամ մեքենայ կը դարձնէ, կ'ուզէ ինքն ալ այնպէս ընել, բայց զուրկ է ու սահմանափակուած. ուստի՝ կը նստի ու իր երեւակայութեան մէջ կը շինէ տուն, կը քշէ կառք կամ կ'աշխատցնէ մեքենան։ Երեւակայութեան մակարդակի վրայ կը մասնակցի աշխարհի գործերուն։

Քաջ Նազարին նկարագիրը մնացած է իր մանկական վիճակին մէջ, չէ զարգացած, փթթած։ Կը նմանի ճուղած ,կըթկըտած պտուղի, որ իր սաղմային վիճակին մէջ մնացած է, չորցած։ Ցեղին յանդգնութիւնը ժառանգած է, բայց չէ կրցած աճեցնել , արդիւնաւորել զայն իր մէջ։

Կեղծ հերոսի նկարագրի ուրիշ մէկ գիծ, — Նազար իր ամէնէն աննշան մէկ յաջողութեան մէջ կը տեսնէ ապացոյցը իր բնատուր քաջութեան։ Ճանճերը, որ թափէց, կ'ըսէ. «Հահա այսքան չուն կենդանի մեռցուցի, ուրեմն ես ալ քաջ եմ»։ Եւ կ'ուզէ, որ ուրիշներ ալ իմանան, թէ ի՛նչ գործ կատարեց։ Գիւղի ատրտէրէն կը խնդրէ, որ արձանագրէ իր քաջութիւնը, ծանուցանէ աշխարհին։ Բայց ատրտէրը, օրէնքի ու սկզբունքի ներկայացուցիչ՝ ինք չի կատարեր այդ ունայնամիտ խնդրանքը, այլ՝ հոն հիւրարար ներկայ եղող անպատասխանատու քահանան է, որ կատակի համար լաթը կ'առնէ ու վրան կը գրէ. «Անմահ հերոս»։

Այդ է մարդկային տհաս բնութիւնը։ Մանուկի պէս, ապիկար մարդն ալ իր փոքրիկ մէկ գործը մեծ կը տեսնէ, եւ կ'ուզէ, որ ամէն մարդ հաւանի։ Մանուկը, որ անճոռնի բան մը գծեց, կը վազէ կու գայ.

— Մամա, տե՛ս, ի՛նչ աղուոր բան գծեցի։

Ու կը սպասէ, որ գովուի։ Նոյնպէս, Քաղի հերոս մը, որ փոքրիկ ծառայութիւն մը բրաւ, կ'ուզէ, որ աշխարհը իմանայ։ Պատահական նուիրատուութիւն մը, որ բրաւ, կ'ուզէ, որ բոլոր թերթեր արձագանգեն։ Ու եթէ չընեն, վա՛յ ապերախտ ազգ, կը գոչէ։

Եւ սակայն, հակառակ իր անշնորհք գոյութեան, Քաղ Նազար շատ խորամանկ է։ Գիտէ օգտուիլ պատեհ հանգամանքներէն։ Երբ ձորին մէջ պատրաստ թամբուած ձին կը գտնէ, վախը կը մոռնայ, հագուստ-կապուստ կը փոխէ, իշուն տեղ ձին կ'առնէ ու կը քալէ։ Երբ հարսնեւորները իրեն գովերգ կը հիւսեն, թոյլ կու տայ, որ զինք փառաւորեն։ Երբ կը տեսնէ, որ հսկաները զինք կ'ընդունին իրենց քաջերու քաջ, դողը կը դադրի, ինքզինք կը հաւաքէ ու կը ստանձնէ դերակատարութիւնը իրական քաջին։

Վերջապէս, իր արժանապատուութիւնը, որ թմրած կը թուէր, յանկարծ կ'արթննայ, երբ կինը զինք դուռնէն դուրս կը նետէ։ Փառասիրութիւնը կը շոյուի, երբ հարսնեւորն կը հրաւիրուի։ Կենցաղագիտութիւն ու պատշաճութիւն մէկդի կ'ընէ, ու կ'երթայ, հօփուր-հօփ, դրօշակով-թուրով կը նստի հարսանեկան սեղանին դլուխը, կը լափէ ուտելիք ու խմելիք։ Հերոսներու ամբոցին մէջ, որ գիրքի տիրացու, կը մոռնայ իր ծագումն ու կինը, հարս կ'ընդունի իշխանուհին։ Ինքնիրեն կարեւորութիւն տալու համար, կարեւորութիւն չի տար ուրիշներուն։

Զ.— ԲԱՆՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ «ՔԱՋ ՆԱԶԱՐ»Ի ՄԷՋ

Քաջ Նազար, սակայն, միայն անհատ-մարդու մը նկարագիրը չէ։ Մենք անոր մէջ կրնանք տեսնել նաեւ հաւաքական կեանքի նկարագիրը։ Եւ այս տեսակէտէն, ամէնէն յայտնի ժողովրդային մտայնութիւնը, որ ան կը մատնէ՝ բախ-

digitised by A.R.A.R.@

ոի ճամբով յաջողութեան կամ երջանկութեան հասնելու փիլիսոփայութիւնն է։ Քաջ Նազարը չատ հնասէրքրքրական մէկ նմոյշն է արեւելեան ճակատագրապաշտութեան։ Հեքիաթի եզրակացութիւնն է, իբրեւ թէ ոչինչ կ'արժէն քաջութիւն, խելք ու աշխատանք, այլ՝ վարող ուժը բախտն է։

Ահա այս եզրին վրայ իրարու կը բախին պաշտօնական բարոյագիտութիւնը եւ ժողովրդային բարոյագիտութիւնը։ Պաշտօնական բարոյագիտութիւնը՝ կրօնք, խմաստասիրութիւն, դաստիարակութիւն, ընկերաքանութիւն, պետութիւն, քարոզն ալ կը քարոզեն, թէ յաջողութեան ճամբան կազմակերպուած աշխատանքն է։ Այս է ընտանիքին, եկեղեցիին, դպրոցին եւ ընկերութեան յորդորը։ Եւ մարդիկ այս ճամբով է, որ կ'առաջնորդուին հասնիլ յաջողութեան ու երջանկութեան։ Բայց ասոր կ'ընդդիմախօսէ ահա ժողովրդային ճակատագրապաշտութիւնը. — Ո՛չ, բա՛խտն է, որ կը տիրէ կեանքին, եւ այդ բախտը մարդուն ձեռքը չէ երբեք, այլ կ'որոշուի իրմէ անկախ։ Տիրող օրէնքը դիպուածայինն է։ Ահա օրինակը անպէտ մարդու մը, որ դախտով կը տիրանայ աշխարհի գահուն։ Դուք թ'նչ կ'ուզէք քարոզեցէք, բայց ահա մեր վախկոտ Նազարը, բախտի իշխան։

Եւ ժողովրդային ասութեանց մէջ ալ, «բախտդ սիրեմ», կամ՝ «գուն քուն, բախտդ արթուն», կամ՝ «ճակատին այս էր գրուածն», կամ՝ «Զարիսը–Փէլէկին անիւը թէրս դարձաւ», կամ՝ «բախտին ո՞վ կը յաղթէ», կամ՝ «գնաց աշխարհի մէջ իր բախտը փնտռելու» եւ նման սոսրական խօսքեր կը յայտնեն, թէ ո՛րքան տարածուած է ճակատագրապաշտութիւնը մարդոց մէջ։

Բախտով առաջնորդուելու այս հաւատքը հին է մարդկութեան մէջ։ Հին արքաներ, պատերազմի ելլելէ առաջ՝ իրենց մոգերէն գուշակութիւններ կը փնտռէին իրենց կռուի ելլելն մասին։ Հին Ուխտի առաջին թագաւորը՝ Սաւուղ, երբ իր էշերը կորսնցուց, գնաց իբրեւ բախտագուշակի դիմեց Ծերունի Սամուէլի։ Հին մարդիկ բախտը ատուածացուցած ալ են, «Փէլէկ», «Փերիշատակ» եւ այլ անուններով։ Այսօր ալ կան մարդիկ, որոնք բախտով կ'ուզեն հարստանալ. Նոր Տարին «բախտ» կը փոփոխեն, վիճակահանութեան տոմսակ կ'առնեն, իրենց առողջութիւնը ճակատագրին կը թողուն։

Բախտասիրութեան այս հոգեբանութիւնը կը բացատրուի երկու կերպով։

— Նախ՝ ասով մարդ ինքզինք պատասխանատուութենէ զերծ կը տեսնէ։ Իր ձախորդութիւնները ասով կ'արդարացնէ։ Իր սիրտէն կը թէթեւցնէ բեռը, թէ ի՞նչ ընեմ, ես ամէն ջանք բրի, բայց բախտս անիւը թէրս դարձաւ եւ ա՛լ չրշոկուեցաւ։ Ինք չէ յաջողած, խոկ դրացին յաջողած է, որովհետեւ բախտը դացեր անո՛ր դուռը զարկեր է։

— Բախտ փիլիսոփայութիւնը ժողովրդային կը դառնայ նաեւ անոր համար, որ կեանքի ու բնութեան մէջ այնքան անբացատրելի երեւոյթներ կան, յանկարծակի պատահարներ, անակնկալ շրջումներ, զորս կարելի չէ հաշտեցնել որոշ դատաւորուած օրէնքներու տիրապետութեան։ Ինչպէ՞ս բացատրել, օրինակ, մշակը հին ուերակը մաքրած պահուն, հողին տակէն երեւան եկած ոսկիին կուժը։

Ահա այսպիսի անկարգութեանց մէջ ճանաչումը կայ Քաջ Նազարին մէջ։ Որքա՜ն մարդիկ կան, որոնք գրեթէ ոչինչէն կը բարձրանան, դիրք կը դրաւեն, աշխարհի կը տիրեն, ապշանքի մէջ ձգելով իրենց շուրջինները։ Գազտնի՞ քը. — բա՛խտ է սա։ Եւ ինչքա՜ն իրաւ արժանիքներ կան, որոնք շուքիրու տակ կը թառամին։ Գազտնի՞ քը. — բախտ է զարձեալ։ Է՜հ, աշխարհի մէջ կարգուսարք չկայ. անի՛ւ մըն է կը դառնայ. ե՞ր անի՞ վրան ելլողին, վա՜յ տակը դացողին։

Ինդիր է, սակայն, թէ այսպիսի բախտապաշտութիւն մը կարելի՞ է կեանքի վստահելի մէկ փիլիսոփայութիւնը դարձնել։ Կարելի՞ է բախտի այդ սկզբ-

digitised by A.R.A.R.@

բունքներով սերունդ դաստիարակել։ Կարելի՞ է բախտաւորութիւնը դարձնել կեանքի օրէնք, փոխանակ աշխատանքի, կազմակերպութեան ու զոհողութեան օրէնքներուն։ Կարելի՞ է մանաւանդ այդպիսի թոյլ փիլիսոփայութիւն մը հաստատելու հայ ժողովուրդի հոգեբանութեան հետ։ Հարցին պատասխան գտնելու համար, հարկ է տակաւին քննել ա՛յն պարագաները, որոնք կը յուզեն բախտը, բան Քաջ Նազարի։

Է.— ԻՆՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԿԸ ՆՊԱՍՏԵՆ «ՔԱՋ ՆԱԶԱՐՆԻ ԲԱԽՏԻՆ

Հեքիաթին ծալքերը քիչ մը եւս բանալով փնտռենք, թէ ի՛նչ պարագաներ կը դիւրացնեն բախտի ճամբան։

— Նախ՝ կայ արտաքին պարագաներու նպաստաւոր դասաւորումը, բոլորովին անկախ հերոսի կամքէն եւ արժանիքէն։ Առանց շնորհքի կամ ճիգի, հերոսը յանկարծ ինքզինք կը գտնէ պատահարներու բաբեղէպ զուգադիպութեան առջեւ։ Օրինակ, անտառէն անցած պահուն, բոլորովին պատահմունք է, որ նոյն ժամուն գիմացէն կու գար բեռնաւոր փերեզակ մը, որ գոռգոռումները չը-կարենալով բնական կերպով մեկնել՝ անոնց կու տայ իր վախերը անուշանող աւազակախումբի մը ներկայութեան մեկնութիւնը, եւ ձին կը ձգէ, կը փախչի։ Կամ՝ վագրին գալը եւ հիշդ Նազարին պահուրտած ծառին տակ պառկիլը, որ երբ տարօրինակ դիպուածով մը մարդը վրան կ'իջնայ՝ տարտափով տեղէն վեր կը թռի, շուար-մոլոր կը սուրայ։ Կամ՝ անծանօթ գիւղ մտնելուն, պատահումը, որ նոյն օրը այնտեղ հարսանիքի ու խնջոյքի հաւաքոյթ կար։

— Նաեւ, կայ անկասկած հանգամանքներուն նպաստաւոր մեկնութիւն տալու ժողովրդային արամադրութիւնը, որ կը բանայ բախտի ճամբան։ Օրինակ, վրան ծիծաղելու համար, մէկ գիւղի մարդիկ լաթի մը վրայ կը գրեն «Անմահ հերոս», միւս գիւղի մարդիկ լրջօրէն կ'ընդունին իբր քաջ(*)։ Կամ՝ եօթ եղբայրները կը տեսնեն, որ Նազարը կը դոզայ։ Ասիկա յայտնապէս աննպաստ երեւոյթ է։ Բայց քաջերը կը կարծեն՝ ահա ան բարկացաւ, հիմա կ'ելլէ մեզ բոլորս մէկ հարուածով կը սպաննէ։ Ու կ'իջնան ասիքեր, կը հպատակին։ Աննպաստ կացութիւնը փոխուեցաւ նպաստաւորի։ Կամ՝ Թագաւորին պատերազմի անունը լսելուն՝ պալատէն դուրս կը փախչի, կ'ուզէ պահուրտիլ. մինչդեռ չուրջինները կը մեկնաբանեն, թէ ահա մինակը պիտի յարձակի թշնամիին վրայ, եւ իրենք ալ սիրտ կ'առնեն, հուռռաներով բանակ կը կազմեն։ Կամ՝ երբ Նազար կ'ուզէ ծառին փարիլ-ազատիլ, ծառին փտած ճիւղը կը փրթի ու ձեռքը կը մընայ, ու դիմացէն թշնամի զինուորները կը կարծեն, թէ ահա անտառը արմատախիլ ըրած մեր վրայ կը խոյանայ, ու ետին կը դառնան ու կը փախչին։

— Երրորդ՝ զօրաւոր կերպով կ'ազդէ նաեւ միջավայրի հոգեկան հակազդումը։ Շուրջի մարդիկ իրարու ձայն տալով ամբոխային տրամադրութեամբ

(*) Այս տիպէն մարդիկ շատ կան, որոնք տրիշներու ծաղրանքը իրրեւ իրականութիւն կ'ընդունին։ Մեզի մէկ հատ ճանչցանք Անթիկասի մէջ. բնիկ լիբանանցի մը, որ ո՛չ մէկ գործ կ'ընէ, իր ֆոյթերուն եւ եղբայրներուն նկատմամբ կ'ապրի, բայց գիւղին մէջ մեծ ու փոքր ամէն ոք զինք կը կոչեն «Զախմ», Ադամ-փաշա։ Ո՛ւր որ ալ երթայ, կեղծ պատիւներ կ'ընծայեն իրեն, ոտքի կ'ելլեն, տեղ կու տան, ֆանտաստիկ լուրջ-լուրջ տեսութիւններ կը հարցնեն, իսկզ ալ կ'ընդունի այդ բոլորը։ Ընդամ մը ան իր մէջէն յայն կաշիէ գոտի ֆակեց ու ցոյց տուաւ, թէ վրան գրուած կան անունները Զրրյելի, Բազվէլիի, Այդընեանուրի...

— Դուն ի՞նչ կայ ուզես այս մեծ-մեծ մարդոց հետ, — հարցուցի իրեն։

— Ասոնք բոլորն ալ ինծի հետ կը թրթռացին, — ըսաւ ան հպարտ։

Եւ գրպանէն հանեց ու ցոյց տուաւ հասցեներու տրցակ մը։

Կատարեալ «Զախմ» մըն էր։

digitised by A.R.A.R.@

կը տարածեն դստարկ համբաւի մը փառքը։ Հարաւնիքին մէջ այդ յիմար պարծենկոտը, որ կը գոչէ.

— Օ՛, սա մեր Քաջ Նազարն է, ինչպէ՛ս ալ մէկ նայելուս չճանչցայ, այս որքա՜ն փոխուեր է, — կը յաւակնի այնպէս, իբրեւ թէ ստոյգ կը ճանչնայ զայն ու հեռը չատ գործ ու քէյֆ է ունեցած՝ կ'ուզէ ինքզինք ինկեր ցոյց տալ համբաւելին։ Այս տիպարէ մարդիկ չատ կը գտնուին, մեծ-մեծ մարդոց հետ նստածելած, խոր-խոր գազանիքներու տեղեակ փոլիթիկոսներ, որոնք անստոյգ լուրեր իրարու վրայ բարդելով՝ կը տարաձայնեն, կ'ըլլան նուիրեալ վկաները սուտքաներու։ Այսպէս են Նազարի անգոյ համբաւը գովերգող գուսանները, որոնք պատրաստ են ամեն-անարժան անուններ փառաբանելու։ Կամ՝ հարթած հարսնեւորները, որոնք կ'երթան ամէն կողմ կեղծին համբաւը կը հռչակեն, այնքան արագ, որ Նազարին անունը իրմէ առաջ կը հասնի հսկաներու պալատը։ Ու հրամաններն ալ, փոխանակ տրամաբանելու, թէ սա ի՛նչ մարդ է, որ մեր առջեւ կը գոռդոչայ, աւելի կը հաւատան անոր համբաւին, քան իրենց աչքի տեսածին։

Մարդկային է համբաւի ուժը ճանչնալու այս երեւոյթը։ Ծանօթ է, օրինակ, Կիլիկիոյ լեռներուն վրայ իշխող Գոզան-Օղլու ձորապետը, որուն հրամանքներն ու հարկահաւաքները սարսափ տարածած էին լեռնաբնակներու վրայ։ Օր մը, Գոզան-Օղլուն ի՛նք առանձին համբորդած ատեն, կը հանդիպի արածող հօտերու։ Կը մօտենայ, հովիւներէն դառնուկ մը կ'ուզէ։ Հովիւը բիրը քաշած՝ կը վռնտէ զայն։ Շամբորդը կ'ըսէ.

— Տուր, ծօ՛, ես Գոզան-Օղլուն եմ, ատո՛ւր ասկէ դառնուկ մը։

— Հայտէ գնա՛, — կը գոռայ հովիւը, — դուն ի՞նչ Գոզան-Օղլուն կ'ըլլաս. ես անոր հովիւն եմ, — ու վրան կը յարձակի, ուսին գաւազան մը կու տայ։

Կ'ըսեն, թէ այնուհետեւ Գոզան-Օղլուն անգամ մըն ալ մարդոց չէ երեւցած. միայն իր անունովը հարկահաւաքներ կը շրջէին...

Նոյնպէս, ահեղ Լենկթիմուրի պատմութեան մէջ կը կարդանք, որ երբ աշխարհակալը Հալէպ քաղաքը կը գրաւէ, այնքան արիւնհեղումներէ ու կործանումներէ ետք անդրադառնալով իր սարսափազդու անուան գազանիքին, դիշերով իր վրանին մէջ ամփոփուած՝ կ'ափսոսայ աշխարհին.

— Ո՞վ եմ ես. այսպէս ճղճիմ, ոտքըս կաղ, վատուժ մարդ, որ եթէ առանձինս ելլեմ՝ քիւրտի մ'իսկ դէմ չեմ կրնար կռուիլ. ինչպէ՞ս աշխարհ մ'ամբողջ իմ ոտքերուս տակ ինկեր է...

Իր համբաւը իրմէ զօրաւոր էր։

Բոլոր ժամանակներուն, ժողովուրդին մէջ կարելի է տեսնել այս տիպարները, որոնք աննպաստ երեւոյթները կը փրկեն նպաստաւոր մեկնութեամբ։ Մարդիկ, որոնք ո՛չ շնորհք ունին, ո՛չ կարողութիւն, բայց իրենց արտաքին ձեւակերպութիւնները, խարդախ միջոցներով ձեռք բերած դիրքը, ինքնավստահութեամբ տարածած համբաւը, հագուստկապուտը, շարժումը, խօսքի ճարպիկութիւնները կը նուաճեն շուրջինները, եւ ասոնք, առանց դատումի՝ հետերին կը վարուին յարգանքով ու հիացումով։ Այսպէս է, օրինակ, անկուտիներու փարթամ կեանք վարելը, կեղծ նշանաբ թեկնածուներու գործած կողոպուտը ազնիւ ընտանիքներու սեմէն ներս. տիպարներ, որոնք նիւթ հայթայթած են պատմուածքներու ու թատերգութեանց։

(Շար. 2 եւ վերջը յաջորդով)

Բ. ԵՂԻԱՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

•

Ա.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 20ՐԴ ԴԱՐՈՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Անցեալ 70 տարիները կարելի է բաժնել երեք մասի՝ 1900էն 1914, միջ-պատերազմեան շրջան, եւ 1940ին սկսող ժամանակաշրջանը։

Ա.— 1900էն 1914 ՇՐՋԱՆ

Շատ մը գրական քննադատներ ժթ. դարը կը վերջացնեն 1914ին, այսինքն՝ Համաշխարհային Առաջին պատերազմին սկսած տարին։ Անոնք գիտել կու տան, որ այդ ժամանակաշրջանը շարունակութիւնն է նախորդ դարու գրականութեան եւ հոն իշխող դէմքերը արդէն համբաւի տիրացած էին եւ կը գտնուէին իրենց հասունութեան մէջ։ Այս տեսակէտը ճիշդ է մասամբ՝ կարգ մը գրողներու եւ բանաստեղծներու համար միայն, որոնք բուսականացան վիպագրութեան եւ խորհրդապաշտութեան նուաճումներով։ Իրականութեան մէջ այդ 14 տարիներու ընթացքին է, որ ցանուեցան բոլորային հունտերը, որոնք պիտի ծլէին եւ ուռճանային ժամանակի ընթացքին։ եւ 20րդ դարու գրականութեան եւ, մասնաւորաբար, բանաստեղծութեան պիտի տային այն արտասովոր եւ այլազան դիմագիծը, որուն համայնապատկերը կը տարածուի այսօր մեր առջեւ։

Այդ շրջանին է, որ Շարլ Փեկի, Փօլ Քլոտէլ, Փօլ Վալէրի, Փրուստ եւ Անորէ Ժիտ պիտի տային իրենց ամէնէն յատկանշական գործերը բանա-

digitised by A.R.A.R.@

տեղծութեան եւ վէպի մարզերուն մէջ։ Այդ 14 տարիներու ընթացքին է, որ Կիյոմ Ապոլինէր, իր պոեմներով եւ յօդուածներով՝ համբան պիտի բանար բանաստեղծական այն յեղափոխութեան, որ զանազան հանգրուաններէ անցնելով պիտի յանգէր գերիրապաշտութեան, որ արդասաւորեց իր ժամանակի եւ մեր ժամանակներու բանաստեղծութիւնը։

Բանաստեղծական արտադրութիւնը առատ էր եւ այլազան, եւ բանաստեղծները կը վայելէին յարգանք ու պատիւ, ա՛նքան՝ որ աւանդութիւն դարձած էր ոեւէ գրագէտի համար իր ապարէզը օկսի ոտանաւորներով։

Դասական օրէնքներուն եւ քերթողութեան կանոններուն հետեւող գրագէտներու կողքին, լուսանցքի վրայ կը գտնէին բոլոր անոնք, որ կը փորձեն բանաստեղծութիւնը դուրս բերել իր աւանդական հունէն։ Ձեւական եւ ոճական դեղեցիներու վրայ արդէն վերջացած են փնտռտուքները, անյանգստող, առանց կէտադրութեան նախադասութիւններ, իմաստի տնորոշութիւն եւ պատկերներու արտասովորութիւն։ Այս մարդին մէջ պէտք է ըսել, որ հետագայ սերունդները ո՛չ մէկ նորութիւն բերած են, եւ այսօր իսկ Ապոլինէրի մը, Ֆանի մը կամ Ռիմբոի կերպի մը տողերը իրենց կառոյցով կրնան մրցիլ ամէնէն անելչխանական տողերուն հետ։

Խշխող վիպապաշտ եւ խորհրդապաշտ ներշնչումին կից, ծնունդ կ�triեառնեն նոր շարժումներ, որոնց գլխաւորները կը կոչուին բնութենապաշտութիւն (Naturisme), զոր պէտք չէ շփոթել նախորդ դարու բնապաշտութեան (Naturalisme) հետ, միասնապաշտութիւն եւ ապագայապաշտութիւն։

Բնութենապաշտ շարժումին հիմնադիրներն են թատերագիր եւ բանաստեղծ Էդմոնտ տը Գուհիլիէ եւ գրագէտ Մորիս Լը Գլոն։ Բնութենապաշտութիւնը բոլոր մրն է խորհրդապաշտներու վերացականութեան եւ նոր դասականներու մտաւորականութեան դէմ։ Բնութենապաշտութեան նպատակն է մարդը պահել իր բնական սահմաններուն մէջ եւ զայն տէր դարձնել աշխարհին։ Պէտք է յատակօրէն անջատել առարկան ենթակայէն, որպէսզի կարելի ըլլայ բնորոշել վայելքը։ Տարօրինակը հոն է, որ բնութենապաշտ տեսութեան իրագործումը կատարուած է երիտ հեղինակներու կողմէ, որոնք ոչ մէկ ազերս ունէին այդ շարժումին հետ։ Այդ հեղինակները կը կոչուին Անտրէ Ժիտ, որուն «Երկրային սնունդները» հանդիսացաւ այդ դպրոցին տեսութիւններու համապատասխանող ամէնէն արժէքաւոր գործը։ Նոյնը կրնանք ըսել բանաստեղծուհի Աննա տը Նոայի արտադրութիւններուն մասին։

Միասնապաշտ շարժումին տեսաբանը եւ ամէնէն վաւերական ներկայացուցիչը կը կոչուի Ժիւլ Ռոմէն՝ աւելի ծանօթ իբր վիպասան, քան բանաստեղծ։

Ի՞նչ են այդ շարժումին սկզբունքները եւ նպատակները։

Խօսքը տանք Ժիւլ Ռոմէնին.

«Միասնապաշտութիւն ըսելով կ'ուզեմ պարզապէս հասկնալ միասնական կեանքի արտայայտութիւնը, բազմութիւններու կեանքն ծնող այդ տարերային հոգին։ Հաւասարականութիւնները, փոդոցին մէջ երթեւեկող բազմութիւնները կ'ապրին ամբողջական կեանք մը, որուն հանդէպ բանաստեղծը կ'ունենայ խորհրդաւոր ու գերբնական զգացում մը։ Այդ զգացումը արտայայտելու համար անհրաժեշտ է անմիջական բանաստեղծութիւն մը, այսինքն՝ ուղղակի, անպանծոյն ու անշպար արտայայտութիւն մը։ Անմիջական արտայայտութիւնը կը հակադրուի տրամաբանական արտայայտութեան, որ բանական գաղափարներու յաջորդականութիւն մըն է։ Մինչ միասնապաշտ

digitised by A.R.A.R.@

բանաստեղծութիւնը պէտք է ըլլայ անկաշկանդ ցայտումը իրականութեան եւ հոգիին: Կը մերժենք կնամէին եւ մեր միջեւ գետեղել վերացական բանականութեան պաստառը: Կ'ուզենք միայն ցոյց տալ մարդկային ներկայութեան յուզականութիւնը»:

Ժիւլ Ռոմէնի հետեւեալ տողերը կը մեխին փաստել իր տեսութիւններեր հաւաքական հոգիին մասին, որուն մէջ կը լոգան առանձնութեան արշիպեղագոսներ.

«Անցորդները կը քալեն եւ ընտանիքը կը ջերմանայ.
Որպէսզի անոնք վերածուին ընդարձակուող զօտիի մը,
Միակտուր հոգիին շուրջ, որ կ'երգէ անոնց մէջտեղը,
եւ որպէսզի ան դառնայ աստուած մը մինչեւ քաղաքին պարիսպները
... Ու հեռուներէն ծնող խորհրդաւոր կոհակ մը,
Զուրերու դանդաղ ճահանջին հետ, իր ետին ձգէ հոգի մը,
Եւ ուրիշ մը, մինչեւ որ այդ ծամուն, երբ գիշերը կը սկսի,
Եւ ըլլամ այդ, մարմին մը, որ կը դողայ մահիճին վրայ»:

Ապագայապաշտութիւնը *բոլոր մրն է գրականութեան եւ արուեստի մէջ տիրող անցեալապաշտութեան դէմ, եւ ճիգ մը համընթանալու արդի քաղաքակրթութեան նուաճումներուն հետ, որոնք կը կոչուին մեքենայ, արագութիւն եւ շարժապատկեր, այսինքն՝ շարժում:*

Ապագայապաշտութեան քրմապետը կը կոչուի Ֆիլիփօ Մարինէթթի, իտալացի մտաւորական մը, որ «Լը Ֆիկարօ» թերթին մէջ կը հրատարակէր իր մանիֆեստը:

«Մենք կը հաւատանք, որ աշխարհի գեղեցկութիւնը հարստացաւ նոր գեղեցկութեամբ մը, — արագութեան գեղեցկութիւնը: Վագէի ինքնաշարժ մը, որ կը սուրայ ռոնալով, որ կարծէք կը խոյանայ գնդացիրներու հրետանիի մը դէմ, աւելի գեղեցիկ է, քան յունական արձան մը»:

Եւ Մարինէթթի կը քաջալերէ բոլոր յարձակողական շարժումները, ամբոխները, մղուած աշխատանքի, հաճոյքի կամ ըմբոստութեան տարերային ուժերէն, պատերազմը, որ աշխարհը առողջացնելու միակ միջոցն է, անիշխանականութեան քանդիչ գործունէութիւնը, դեղեցիկ գաղափարները, որ կը սպաննեն, եւ կին արարածին անտնսումը եւ արհամարհանքը:

Լեզուական գետնի վրայ, ապագայապաշտութիւնը կը պահանջէ շարահիւսութեան խորտակումը, բայերու անդէմ գործածութիւնը, կէտադրութեան ջնջումը, որպէսզի ոճը դառնայ աւելի կենդանի, եւ պատկերներուն պատահական շարքը...

Այս ծայրայեղութիւնը կը հեռապնդէր որոշ նպատակ մը. Իտալիան ձերբազատել հնութեան փոշիներէն եւ զայն նետել արդիականութեան շուրջպարին մէջ: Մարինէթթի կիսէր, որ իր ստեղծած շարժումը ժամանակաւոր դոյութիւն պիտի ունենար, տասը տարի միայն, եւ իր բարեկամները կը յորդորէր, որ իրենց կարելին ընեն՝ շուտով իրագործելու համար քանդումի իրենց առաքելութիւնը:

Եւ կը նախատեսէր, որ այդ ժամանակաշրջանէն ետք պիտի հասնէին նուաղուն նոր հրմիզներ, որոնք այդ շարժումը պիտի նկատէին հինցած կամ ժամանակավրէպ, եւ պիտի առնէին աւելի յանդուգն քայլեր...

Ապագայապաշտութիւնը ի գործ դրաւ գրաշարային նոր ձեւեր, որոնք կը բաղկանային նախնական գծագրութիւններէ եւ անկապ բառերէ,

digitised by A.R.A.R.@

Մարինէթթի մեծ դրագէտ կամ բանաստեղծ չէր, այլ լաւ գեկավար մը։ Ան իր կեդրոնատեղին հաստատեց Միլանօ քաղաքին մէջ եւ իր շուրջը հաւաքեց խումբ մը խոստմնալից երիտասարդներ, որոնք անհամբեր էին հանրութեան ուշադրութիւնը կեդրոնացնելու իրենց վրայ։ Այդ խումբին մէջ բանաստեղծներու կողքին կային նաեւ երաժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ եւ ճարտարագէտներ։ Մարինէթթիի գեկավարութեան տակ այս երիտասարդները կազմակերպեցին ապագայապաշտ երեւոյթներ, որոնք յեղաշրջեցին Իտալիոյ մշակութային եւ գեղարուեստական կեանքը եւ համակիրներ շահեցան եւրոպական մեծ մայրաքաղաքներու մէջ՝ ինչպէս Փարիզ, Լոնտոն, Պերլին եւ Նոյնիսկ Մոսկուա։

Տեղի ունեցան Նոյնիսկ կատաղի ճակատամարտներ ապագայապաշտներուն եւ իրենց հակառակորդներուն միջեւ։ Գրական հաւաքոյթի մը ընթացքին, Մարինէթթիի խմբակը մեկնեցաւ Ֆլորենս եւ խուժեց հանդիսասրահէն ներս, ուր տեղ առած էին իր վոչէ շարժումին անդամները եւ կռուեցան գինետան մը յաճախորդներուն պէս, բազմաթիւ վիրաւորեալներ մնացին տախտակամածին վրայ։ Այս ճակատամարտը ունեցաւ իր բարերար արդիւնքը, որովհետեւ հակառակորդ կողմերը շուտով անդրադարձան, որ իրենք ալ կը կռուէին նոյն գաղափարին համար։ Մթնոլորտը խաղաղեցաւ եւ նոր ուժեր մուտք գործեցին ապագայապաշտութեան շարքերէն ներս, պարզապէս որովհետեւ անոնք ալ դժգոհ էին իտալական դրական ու գեղարուեստական կեանքի անկեալ վիճակէն։ Անոնցմէ յիշենք մեծահամբաւ դրագէտներ՝ Ճիովաննի Փափինին եւ Ալտո Փալեզէքին, որոնց տաղանդը ոչ մէկ բան կը պարտի այդ շարժումին։

Ապագայապաշտ շարժումին գործունէութիւնը ընթացաւ կուակցական կազմակերպութեան մը ուղիով՝ մանիֆեստներ, յայտարարութիւններ, բանավէճեր, կռիւներ, եւայլն։

Թէեւ սկզբունքով ապագայապաշտութիւնը գրական շարժում մըն էր, սակայն պէտք է ըսել, որ անիկա չկրցաւ իր կնիքը դնել արժէքաւոր ա՛չ մէկ արտադրութեան վրայ եւ ծնունդ չտուաւ ոչ մէկ համբաւաւոր դրագէտի, ինչպէս իրմէ հաւ պիտի ընէր գերիրապաշտութիւնը։

Անոր լաւագոյն իրագործումները կը պատկանին գեղարուեստական մարդին, — նկարչութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն։

Ինչ որ ալ բլլան անոր ձեռք բերած արդիւնքները, ապագայապաշտութիւնը կը հանդիսանայ քաջներորդ դարու առաջին գեղարուեստական շարժումը, որ չբաւականացաւ դրասենեկային բանավէճով, այլ պայքարը փոխադրեց հրապարակներու վրայ, հանրութեան առջեւ եւ արթնցուց անոր ուշադրութիւնը։

Այս անկիւնէն դիտուած՝ անիկա հանդիսացաւ օրինակ մը, իրմէ անմիջապէս ետք հրապարակ իջնող տատայիզմներուն եւ գերիրապաշտներուն, որոնց գործունէութիւնը մղուեցաւ դանազան միջոցներով եւ դանազան ուղղութեամբ՝ աւելի մեծ համոզումով եւ յարատեւութեամբ։

Բ.— ՄԻԶԳԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆԸ (1918–1939)

Զորս տարի տեւող ահաւոր բախումներու հետեւանքով, տղիակիզուող քանի մը միլիոն մարդ էակներու շարքին, կը կարդանք հայ, ֆրանսացի, անգլիացի կամ ամերիկացի բազմաթիւ հանճարեղ դրագէտներու եւ բանաստեղծներու անունները։

digitised by A.R.A.R.@

Բայց արդէն սկսած էին ծիլ նեռել եւ ուռճանալ այն երիտասարդները, որոնք պիտի հանդիսանային գալիք օրերու մեծագոյն տաղանդները։

Համաշխարհային Առաջին պատերազմը հիմնայատակ բրած էր ամուր կարծուած բոլոր հարստութիւնները եւ արժէքները։ Արեւմտեան հազարամեայ քաղաքակրթութիւնը խորտակուած նաւու մը պէս կը ատառնէր փոթորկոտ ջուրերու վրայ, եւ վերապրողները չանթահարուած նաւաբեկեալներու պէս կը դիտէին այն դժոխքը, որուն մէջէն անցած էին։ Բանաստեղծ Փոլ Վալէրի կ'ընէր սրատեսիկ հետեւեալ ախտաճանաչումը.

«Մենք քաղաքակրթուած ազգեր, հիմա գիտենք, որ մեր քաղաքակրթութիւնը մահկանացու է»։

Այս ժամանակաշրջանը յատկանշական է նաեւ քաղաքական եւ ընկերային կառոյցի հակամարտութիւններով։ Թուրքոյ մէջ համայնավարութեան յաղթանակը կ'ունենայ իր խոր արձագանգները աշխարհի բոլոր երկիրներուն մէջ եւ, մանաւորապէս, աշխատաւոր դասակարգի խաւերէն ներս։ Զախակողմեան զօրաւոր կուսակցութիւններ բոյն կը դնեն այսպէս կոչուած ժողովրդական երկիրներու մէջ եւ կառոյցի պայքար կը մղեն հաստատուած կարգերուն դէմ, օգտուելով ազգատ խաւերու թշուառ կացութենէն։ Մեծ թիւով գրագէտներ եւ բանաստեղծներ, հմայուած համայնավարութեան տեսական սկզբունքներէն, կը դառնան անոր ջերմ համակիրները եւ իրենց գործերուն մէջ գովքը կը հիւսեն այդ հսկայ շարժումին, որ մարդկութեան կը խոստանար խաղաղութիւն եւ բարգաւաճութիւն, իսկ ընչաղուրկ մասսաներուն՝ արդարութիւն եւ հաւասարութիւն։

Այդ քսան տարիներու ընթացքին, գործաւորական սենեակները, կամայ թէ ակամայ, կ'ենթան համայնավար կուսակցութիւններու ազդեցութեան տակ, կուսակցութիւններ, որոնք ուղղակի կապ ունէին Մոսկուայի հետ։ Բոլոր երկիրներու մէջ տեղի կ'ունենան պետական հարուածներ, գոյցեր եւ գործադուլներ, որոնք կը մթին ընդհանուր յեղափոխութեան, թէեւ առաջ քշուած պատրուակը ընկերային անհաւասարութիւնն է։

Եւ իբր հակազդեցութիւն՝ կարգ մը երկիրներու մէջ կը ծնին ամբողջատիրական վարչակարգեր, որոնց կը տրուի ֆաշականութիւն կամ նացիականութիւն անունները։ Հակամարտութիւնները այնքան զօրաւոր են, որ կարգ մը երկիրներու մէջ կողմերը կը դիմեն զինեալ բախումի, ինչպէս Չինաստան եւ Սպանիա։

Գիտութիւնը կ'ընէ անհրեւակայելի նուաճումներ եւ գիւտերը իրարու կը յաջորդեն բոլոր մարզերուն մէջ։ Մեքենան կը դառնայ տիրող տարրը եւ քաղաքակրթուած երկիրները զարկ կու տան իրենց ճարտարարուեստին։ Մեքենական արտադրութիւնը պատճառ կը դառնայ, որ միլիակ դասակարգն իսկ առիթ ունենայ օգտուելու ճարտարարուեստի նիւթական բարիքներէն։ Սակայն այս վերելքը ճեղք մը կը բանայ մարդկային զանգուածներուն միջեւ եւ մէկտեղ կը բերէ ընկերային չեչտուոյ հակադրութիւն մը։ Ճարտարարուեստական երկիրները արագօրէն կը հարստանան, մինչ երկրագունտին բնակչութեան մէկ ճնշիչ տոկոսը կը դառնայ աւելի չքաւոր։

Գիտութեան թեքնիք յառաջդիմութիւնը կը ներկայանայ իբր երկսայրի սուր մը։ Անոր պարգեւած անժխտելի բարիքներուն կողքին, երեւան կու գան վտանգաւոր նախանշաններ։ Հիւլէին անջատումը, որ մարդկութեան պիտի հայթայթէր անսպառ ուժանիւթ, կը չեղի իր խաղաղասիրական հեռանկարներէն եւ կարգ մը երկիրներ կը փորձեն զայն վերածել ահաւոր զէնքի մը։

digitised by A.R.A.R.@

Գիտութիւնը կ'ընէ նաեւ կարգ մը յանդուգն իրագործումներ, մանելով կեանքի խորհրդաւոր խորանէն ներս։ Փորձեր կը կատարուին՝ քիմիական նիւթերու տարբերադրութեամբ առաջ բերելու համար կենդանի բջիջներ, որպէսզի հետագային իրագործուի ալքիմիագէտներու գերազոյն երազը, այսինքն՝ արուեստական ճամբաներով ծնունդ տալ մարդ արարածներու։

Եւ այսպէսով կը խախտի մարդոց հաւատքը այն դարաւոր արժէքներուն նկատմամբ, որոնք կը հանդիսանային մարդ էակին գոյութեան գրաւականները։ Գիտութիւնը կը դառնայ միակ ճշմարտութիւնը եւ անոր պատգամները կը հանդիսանան նոր կրօնքի հաւատոյ հանգանակը։ Հոգերանական, փիլիսոփայական, գերբնական եւ բարոյական արժէքները տեղի կու տան թիքնիքի շլացուցիչ իրագործումներուն առջեւ, եւ մարդկութիւնը, ծովամոյն եղող մարմնի մը պէս, մէկիկ-մէկիկ իր վրայէն կը նետէ այն բոլոր արժէքները, որոնց համար դարերէ ի վեր բոլոր ազգերը արիւն թափած են։

Մարդկութիւնը կը նախզգայ նաեւ դալիք ատոմալիզմը, այդ համաշխարհային երկրորդ պատերազմը, որ դժոխային ուժերի մը պէս վար պիտի նետէր մարդկութեան վերջին պատարանները։

Ահա այս մթնոլորտին մէջ է, որ կը ստեղծագործեն բանաստեղծները, վիպասանները եւ արուեստագէտները։ Կամայ թէ ակամայ՝ անոնք կը դառնան իրենց ժամանակին վկաները կամ խօսնակները։

Այդ նոյն շրջանին կը սկսի կատարելագործուիլ արտայայտութեան նոր ձեւ մը, որ ծնունդ առած էր դարուն սկիզբները. խօսքը շարժապատկերին մասին է, որուն ազդեցութիւնը անուրանալի է գրականութեան վրայ, ազդեցութիւն մը, որ եղած է քարերար եւ վնասակար միանգամայն։ Բարեբար՝ երբ կրցած է ապրեցնել եւ արժեւորել անցեալի կամ ժամանակակից հանճարներու արտադրութիւններ եւ մղած է հասարակութիւնը, որ կարդայ այդ գործը եւ ծանօթանայ անոր հեղինակին։ Վնասակար՝ երբ իր արտայայտութեան ձեւը պարտադրած է կարգ մը գործերու, անոնց տալով պարզ սենսաթիոնները կառոյցը, մինչդեռ այդ գործերը կրնային դառնալ մէկ-մէկ կոթող, եթէ հեղինակը բռնած չըլլար արտայայտութեան այդ դիւրին ճամբան։

Այս բոլորին հետ պէտք չէ մոռնալ մանաւանդ ազգային գրականութիւններուն փոխազդեցութիւնը, որուն տարողութիւնը սահման ու չափ չունի, տրուած ըլլալով հրատարակութեան, թարգմանութեան կամ հաղորդակցութեան դիւրութիւնները։

Ֆրանսական գրականութեան պարագային, միջազգային գետնի վրայ նուիրագործուած անուններ են նոպէլեան մրցանակաւոր հեռուեալ գրագէտները՝ Սիւլլի Փրիւտոմ, Ռոմէն Ռոլան, Անաթոլ Ֆրանս, Հանրի Պերկսոն, Ռոժէ Մարթէն Տիւ Կար, Անտրէ Ժիտ, Ֆրանսուա Մորիաք, Ալպէր Քամիւ եւ Սէն-Ժոր Փերս։ Միջազգային դէմքեր եղած են քանաստեղծներէն մանաւանդ Ապոլինէր, Փեկի, Գլոտէլ, Վալերի, Գրրթոն, Էլիւար, Տեսնոս, Սիւփերվիէլ, Միշօ, Էմմանուէլ, եւայլն, թատերագիրներէն՝ Պէքէթ, Ադամով, Իոնեսքօ, վիպասաններէն՝ Պերնանոս, Կրին, Մալրօ, Սէնթ Էքզիւփէրի, Յարթրը, Գոմուար, եւայլն, եւ նոր վէպի հեղինակներէն՝ Ռոպ-Կրիյէ, Նաթալի Սառոթ, Քլօտ Սիմոն, Միշէլ Պիւթոր, եւայլն։

Փոխադարձաբար, Ֆրանսական գրականութիւնը հետաքրքրուած է իր սահմաններէն դուրս ծնունդ առնող քաղաքական, ընկերային եւ փիլիսոփայական շարժումներով, ինչպէս նաեւ կարգ մը գրագէտներու արտադրու-

digitised by A.R.A.R.@

թիւններով։ Այստեղ կը բաւականանանք տալով հոգեվերլուծող աւստրիացի Սիգմունտ Ֆրէյտի, գոյութենապաշտ փիլիսոփայ գանիացի Քիէրքէկարտի, եւ գերմանացի Հայտեկէրի, անհնթեթի ռահվիրայ՝ չեխ Ֆրանց Քաֆքայի, եւ ներքին երկխօսութեան փարպետ իրլանդացի Ճէյմս Ճոյսի անունները։

Գալով վերոյիշեալ շրջանի ֆրանսական բանաստեղծութեան, որ մեր ուսումնասիրելիք նիւթն է, անիկա կը յատկանշուի գերիրապաշտ շարժումով, որուն մասին հարկ է տալ որոշ տեղեկութիւններ, որովհետեւ այս շարժումը կը հանդիսանայ այնպիսի յեղաշրջում մը գրականութեան եւ արուեստի մարզին մէջ, որ իրմէ զերազանց կը մնայ միայն վիպապաշտութիւնը։

Վիպապաշտութիւնը եւ գերիրապաշտութիւնը կը հանդիսանան միջագային եւ, մանաւանդ, ֆրանսական ժամանակակից բանաստեղծութեան ներշնչման երկու աղբիւրները։

Վաւերական քննադատներուն համար, գերիրապաշտութիւնը կը հանդիսանայ վիպապաշտութեան մայր միւղը, որ իր գերազոյն սահմաններուն հասցուցած է բանաստեղծին մտածելակերպն ու ստեղծագործութեան անոր ուղին՝ ազատագրման ճամբուն վրայ։

(Շար. 1) ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ե. ԿԱՐԱՊԵՆՑ

Նիգոս Գազանձագիսի "ՃԳՆՈՒԹԻՒՆ"ը ըստ Մարգար Շարապխանեանի

●

Հնագոյն գրութիւն մէջ խնդրոյ առարկայ դարձած Մարգար Շարապխանեանի թարգմանութիւնը պէտք է գրաւէր հայ գրողներուն ուշադրութիւնը եւ, ինչպէս պիտի տեսնէր, գրաւած է արդէն արժանաւոր լրջութեամբ մը: Խղճմտանքով խմբագրած իր խմբագրութեան մէջ՝ կարդացեալ թերեւս միայն մէկ բան պակաս ձգած է, սպառիչ ձեւով մը չէ անդրադարձած լեզուական ճրագարանային խնդիրներուն, որոնք, ինչ խօսք, չեն կրնար լուսանցքային նշանակութիւն մը ունենալ գրական այդպիսի լուրջ գործերու պարագային:

Որքան լաւ պիտի ըլլար արդարեւ, որ մեր լեզուին ոգին ու ջերմութեան հաւատարիմ մնացած Շարապխանեան իր աշխատանքին մէջ թոյլ տուած չըլլար որոշ անհարթութիւններ եւ հոմանիշ բառերէն ընտրէր տուեալ նախադասութիւններուն մէջ ունելի ճշտակայարմարը, ունելի նուրբը, գեղեցիկը: Օրինակ, չեմ գտեր «հակամարտաղ բոլոր զուանդերքն», երբ կայ ունելի գեղեցիկը՝ — *հակամարտ* բոլոր զուանդերը, երբ մէկ կախէն միւսը ընել կ'ուզեմ, հրամայականի տպաւորութիւն ձգող «դառնէ կախէն մէկդի կը ձգեմ եւ կ'ընեմ *կրկէ* կախ: «Վրան կը փարիտ» բառը մեր լեզուին մէջ *մէկու մը* կը փարիմ: Ցեռայ՝ «միջնապատէն անպարմանն ունելի լաւ է *միջնորմը*, «կենսատոր մոռնալիք բան է, երբ ունիմ բարեհաճ *կենսախոյսը*, *կաւեղէն* նախրնտրելի է «ցաւշեմեն եւ, վերջապէս, Նարբ Մեսրոպին ունելի դիւր պիտի գար կը կարծեմ, եթէ երբեմն «բաղադրութեան» փոխարէն *սերտաղործութիւնը* գործածեմ, «փախչելու» տեղ *խոյս տանք* մերթ եւ միանգամ ընդմիշտ հրաժարիմ «բարեվիճներէն»:

Գրախօսականէն հոգ, Շարապխանեանի այս արժէքաւոր թարգմանութենէն կը ներկայացնեմ հատուած մը, մեր կողմէ կատարուած լեզուական քերթ. սրբագրութիւններով:

«Հնագոյն ասացիք, որովհետեւ հարազատ թարգմանութիւնը թարգմանութիւն լինելուց առաւել՝ վերարտադրութիւն է բնագրի՝ երբեմն նոյնքան արժէքաւոր, որքան բնագիրը: Եղել են նաեւ դէպքեր, երբ թարգմանութիւնը ունելի յաջող է եղել, քան բնագիրը: Դասական ու ժամանակակից գրականութեան մէջ բազմաթիւ են օրինակները — լինի համաշխարհային թէ հայկական մակարդակների վրայ — երբ թարգմանիչը չուզի տակ է թողնում բուն հեղինակին:

Մեզ մօտ լոյսը ծագում է Ոսկեդարեան թարգմանիչներից, հեղգում դարերը, հանում Աբեւելքի եւ Արեւմուտքի սասանները, հայացնում Արիստոտել, Գազանձ, Կիկերոն, Թաբին, Բուռս ու Շաքսպիրեան եւ դեռ Բայրոն, Բալզաք, Շէյ-

(*) Մեմք նախընտրում ենք Նիկոս Գազանձակիս, սակայն յարգելով թարգմանչի իրաւունքը, այս գրութեան մէջ գոնէ ենք ասում Ցրա հնչեմական ձեւը:

digitised by A.R.A.R.@

ջջոփիր ու հոյլը համաչխարհային այլ սիրահներին։ Թարգմանչական գրականությունը եղել է գէպի Արևմտեան մշակը նոյդ մեր օգտաւոր պատուհանը։ Թարգմանչական գրականությունը անարժան ու լրացուցիչ մասն է կազմում մեր իմացական ու առեղծագործական ուղղութիւնների։ Այդ բնագաւառում լուրջ ջանքեր են թափւում Հայաստանում։ Սիսիանից գէպքում։ Վենետիկի ու Վենետիկի Մխիթարեանները սակաւին չարունակում են վառ պահել իրենց փոխանցուած բարձամեծ ջահը։ Այլապէս հայկական Սփիւռքը նոր է ոտքի կանգնում իր հաւաքական ու հոգեկան տեղագրանքի ալիքահարցրու գեղերումներից։ Երբ գրեթէ գերմարդկային հիպերով սանդուղել է յեռեղեռեան ինքուրոյն գրականութիւն, ապա Թարգմանչական մեր նկրտումները, ինչ վերաբերում է գեղարուեստական գրականութեան, տահմանափակուել են մի քանի հատորիկներով, այն էլ ենթակայ պատահականութեան թէ՛ որպէս արժէք եւ թէ որպէս բովանդակութիւն։

Ու յանկարծ հրապարակ է գալիս Թորոնթոյի նորարդարդ հայ գաղութի նորատեղ «Մարդ հրատարակչական» ասոցիացիան՝ ասոցիացիան ունենալով լոյս ընծայել համաչխարհային գրականութեան հին ու նոր արժէքներ եւ էլլիոտ թեմենդիր, ըլլալ դիմուտատեան եւ ջանալ, մա՛ռատանդ, բայլ պտեղ մեր ժամանակաշրջանի գրական եւ իմացական հայավայրին հետ։

Եւ առաջին հերթին Նիգոս Գազանճեանի «Ցնցումներ»։

Սակայն ինչո՞ւ «Ցնցումներ՝ այդ տեսակի բարձունքը։

Էվերեստ լեռան գագաթը նուաճած Հիլարին երբ հարց են տալիս, թէ ինչո՞ւ բարձրացաք կատարը, նա պատասխանում է՝ «Որովհետեւ գագաթը այնտեղ էր»։

Ճիշտ նրանոյնին, նոյն տարօրէն է ասրել Մարգար Շարապխանեանը, երբ գէմ յանդիման է կանգնել «Ցնցումներ»ը հայցնելու դարձին։

Գրական-իմաստասիրական որեւէ գործ վերարտադրելու համար նախապայման է, որ Թարգմանիչը լինի լեզուաբան, գրականագէտ, իմաստասէր, եւ բանաստեղծ, եւ պատմաբան, ու դեռ նաեւ արուեստագէտ։ Թարգմանիչը արդեւ չի Թարգմանում, այլ իւրացնում է հեղինակի անհատականութիւնը, Թափանցում նրա ներաշխարհի նալեքը եւ իր հայեցողութեան ատաղի մէջ քաշում նրա խոցերի Թաքուն նեկտարը։ Դեռ աւելին։ Նա երկունքի է նստում հեղինակի հետ, վերապրում երկի ամբողջ անգոհանքը եւ ջանքակ առ ջանքակ վերակերտում ու նաեւ ազգայնացնում ստեղծագործութիւնը։ Ազգայնացնում, օրովհետեւ ամէն լեզու ունի բառերի իր ազգային տարաղը, խոցի ընկալման իր իւրոյն հատկացութիւնը։

Երբ կարդում ենք Գազանճեանի հայացուած «Ցնցումներ»ը, մեզ թւում է, թէ հազարդակցում ենք Շարապխանեանի հետ։ Հեղինակը ներկայ է արդէն երրորդութիւն Թարգմանչի եւ ընթերցողի միջեւ։ Հրաւէրը Գազանճեանի՛ն է, սակայն մեր զգայարանքներով կապուած ենք մնում Շարապխանեանին։ Նա՛ է, որ մեզ փոխանցում է ասասանամյարդն մոլեգնած յոյնի մոգի ալաքներն ու հոգու խռովայոյզ լուսն։

Մենք յուսարդն քնարդի ծանօթ չենք։ Գէաք էլ չէ։ Ճախաներ խոցը փուլի պէս կը ցցուի, եթէ արդեղանը ամենշալուր չէ հոգի անգոյներ։ Շարապխանեանի Թարգմանած «Ցնցումներ»ը հասում է վարարած գեռ պէս։ Մոռանում ես, որ Թարգմանութիւն է։ Ընկնում ես յորմանքի մէջ եւ գալարում լինելութեան խորհուրդներում։ «Փարի չեմ, անմեղ չեմ, հանդարտ չեմ։ Երգանիկութիւնս եւ դժբախտութիւնս ամուսնանի են։ Լի եմ ամենայն ճայներով եւ խուսարով։ արցունքներով եւ արիւններով կը բռնալիմ միանգամ այս տամ մուրիմ մէջ»։

«Ցնցումներ»ը մարդու ահարկու մենութեան ազգագրի է, մահկանացուութեան յարատեւ ողբերգութիւնը ու նաեւ փրկութեան ազիզորմ հիլը։ Ամէն մի բառ դարձել է պատգամ։ Տողերը հերմրչանում են իրար։ Գազանճարներ պատերազմ է։ Զրացել է մարդը։ Զրացել է Աստուած։ Մոռացել է անհարագրելի բացը, որը լափում է սիներերը։ Սերմը նլում է հրաչքով, արմատանում եւ պեղում սառցերը։ Մարդը այլեւս մենակ չէ։ Անապատի չէ։ Անդարատ չէ։ Նա դիտէ, որ վերադառնալու է հողին, դառնալու մասը երկրի եւ անուշքալու վաղուայ սերունդներին։ Հեւք չէ, այլ անառանելի հարենդիւն։ Խոցերը մերթ ացնում են ողբալի, մերթ բացավառում եւ դեռ ինքնութիւն չտարացած՝ խորանալում բալացած նոր ալիքների հարուածից։ Սակայն նոյն կարգն ու օրենքը։ Մի պահ նոյ, Գազանճեանը քաղում է ոգի համայնութիւնը, ասանալոն անում արամարանութեան բոլոր սիւները եւ դուլ գեռում քառոսի երանում։ Ամ-

digitised by A.R.A.R.@

բոլշ գիրքը կիրք է։ Ցուն, սիրոյ, ատելութեան ու մահուան կիրք։ Եւ համառարար ժղմուանքում կանգնած է մարդը։ Գուցէ նա Աստուած է։ Գուցէ ուզում է աստուածանալ։ Երբ սահմանի ազատութիւն լինի, այլեւս ազատութեան պէտք չի լինի։ Այլեւս մարդիկ կը լինեն Աստուածներ։ Ազատութիւնը Աստուծոյ դիմաց է...

Գազանագիրը ալիարհն է ջնջել գանելու նը, ցեղը, Մարդկութիւնը եւ երկիրը։ Այդ փրանգուսաբարքի ճանապարհին նա յայտարարում է Ցարաբերութիւնը Աստուծոյ եւ Մարդու միջեւ, Ցարաբերութիւնը Մարդկանց միջեւ եւ Ցարաբերութիւնը Մարդու եւ Բնութեան միջեւ։ Եւ այդ բոլորը՝ յանուն Աստուծոյ գոյութեան ճշդմանը կամ, իր բնութագրումով՝ Ցայտրմակ Ազատութեան։ Իսկ երբ գանում է Աստուած, քարանում է նրան։ Ըստ դրքի յառաջաբանի հեղինակ Արա Գալեղեանի, Գազանագիրը մի անգամ հետեւեալն է գրել՝ «Ամբողջ կեանքիս ընթացքին միտքս պրկելու պայքարեցայ՝ փրթելու ատաքամա, միայն որ ճարմանդի պետ տա, որպէսզի կարենամ մեծ մտածում մը ասելիգործել, որ ձեր իմաստ կարենայ տալ կեանքին, ձեր իմաստ մը մահուան, եւ մթիրարի մարդկութիւնը»։

Սակայն բոլոր մեծ մտածողների նման, Գազանագիրը հակասում է իրեն։ Աստուած ուրանալով հանդերձ՝ Աստուած է փնտրում։ Եւ երբ հասնում է Նրան, երկրի կործանում է Նրան։ Բայց աստուածազանութիւնը նորութիւն չէ։ Մարդիկ զամանութեան վանդիկան չրջաններից սկսած չարունակ աստուած են ստեղծել, ապա ոչնչել նրան։ Եւ մարդիկ չարունակ ստեղծում են Մեծ Անորոյի ոգին։ Եթէ Գազանագիրը դրամած լիներ գազանիքը, չպիտի ճգնէր «ազգութիւնը դրելու։ Մարդկութիւնը ստեղծեն մեռցել է անմիջապէս։ Ինքը՝ Գազանագիրը՝ ուելի անմիջապէս։ «Դրանի՝ ինչ զարտուղղեցնում, ու ինչի հետ միացնում, Տէր, որ կ'ասեն — «ես եւ դուն մէ՛կ ենք»։ Ու երի՞ցս իրանի չկիսանելու, իրենց ուսերուն վրայ վերցնելու՝ ոչ մեծ մեծագոյն, վսեմ ու ստրատիպզու գաղանիքը — ու ոչինչակ այդ մէկը գայութիւն չուներ»։

Մարդոյ Շարագիտենանք կարդացել է վերարտադրել Գազանագիրի փոթորկոյդ ոչխարը՝ քայլ առ քայլ հետեւելով նրա շնչին, նոյնանալով նրան, ապրելով՝, մտքառելով՝, լուսաւորելով արահետները եւ փորձելով նոր ձեւ ու կերպարանք տալ մշանչենական քառին։

Գրքերը պիտի լինեն։

Այո գիրքը պիտի գրուէր։

«Ազգութիւնը պիտի հայացուէր, որպէսզի հայ գրականութիւնը մի նոր զարուստով ալ ուելի ծաղկէր, խորանար։

Շարագիտենանք լեզուն յատակ է՝ հակուած դատակնին։ Երկար մշակումի արդիւնք։ Ամենարդ հանդոյցում անգամ գիւրաս փայլում է։ Ոճը սեղմ է, գիւրահաղորդ ու անմիջական։ Ակնկալ է գիրը՝ պարզորէն արտայայտելու զարգացումը։ Իր նախադասութիւններում առկայ է ներքին լարումը, դաղուանութիւնը՝ արդիւնք ձեւի ու նիւթի համաչափման ճիգի։

Մէկ գիտութիւն ասկայ։

Նորից ըստ Գալեղեանի, Գազանագիրը յեղաշրջել է Ցունական լեզուն, անգամ բնիկ բարբառին վերադարձնելով՝ իր ունեցած հին օրերի ալիւսութիւնն ու վարկը։ Ասել է՝ հեղինակը իր գրականութեան մէջ մեծապէս օգտագործել է յունական անգամ բարբառները՝ ոչ ուելի կենդանութիւն պարգեւելու համար ոճին ու մթնոլորտին, քնչպէս մեզ մոտ այդ արել է Գարեգին Սեւակը։

Արդ՝ հազարամյարմար չէ՞ր լինի, եթէ Շարագիտենանք եւս համազասական խոսքերը թարգմանելիս ազատենք մեր այնքան հարուստ գաւառաբարբառին, որը միանգամայն թէ՝ գիտակ է եւ թէ գունեղ։ Բնական անաղարտութիւնը, ի հարկէ, զեղեցիկ է եւ ուզակի, երբ յարմար անգամ եւ յարմար պահին է գործածւում։

Ու նորից նոյն հարցը։

Ինչո՞ւ «ազգութիւնը» եւ ոչ թէ Գազանագիրի համեմատարար մաչելի մի այլ գործը, երբ ինքը՝ հեղինակը խոստովանում է, թէ «ազգութիւնը, անաւարտ, արիւնոտ ցիչ մըն է, որ պիտի լուսի մահէն ետք։ Ներկայիս, մարդիկ անոր բանաստեղծական տարազը կը հագցնեն միայն։ Բայց այս ճամանութիւններուն եւ ճնարակաց բացատրութիւններուն մէջ, լուսաւոր ծայրերով ու լրիւ հանդերձներով՝ յուսահատութենէն եւ յայսմէ տղ ազդեն, Աստուծոյ ազազայ գէմքը կը ցցուի...»։

Թերեւս գաղասիանը ասել է ինքը՝ հեղինակը։

Թերեւս «Մրսվհեանս գաղափը ամենագ է»։

Ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆԻԿՈՍ ԿԱԶԱՆԶԱԿԻՍ

ՍԱՆԴԽԱՄԱՏ ԵՐԿՐՈՐԴ

ՑԵՂԸ

•

ՀԱՅԱՑՈՒՑ

ՄԱՐԳԱՐ ՀԱՐԱՊԵԱՆԵԱՆ

Կանչը ֆուկդ չէ: Դուն չէ որ կը խօսիս, այլ՝ անհամար նախահայրերդ կը խօսին: Դուն չէ որ կը տեսնես, այլ՝ նախնիքներուդ անթիւ սերունդները քու արտովդ կը ցանկան:

Մեռելներդ չեն հանգչիր հողին տակ: Անոնք թռչուններու, ծառերու եւ հովերու վերածուած են: Անոնց հովանիին տակ նստելով, անոնց միսով կը սնանիս եւ անոնց շունչով ալ կը շնչես: Դաղափարներու եւ կիրքերու վերածուած են անոնք, որոնք կամքդ եւ արարքներդ կ'որոշեն:

Ապագայ սերունդները չեն խլրտար քեզմէ հեռու անտոյգ ժամանակին մէջ: Անոնք կ'ապրին, կը տեսնան եւ կը գործեն ապիքներուդ եւ արտիդ մէջ:

Այս շանթաժամ պահուն, երբ հոգ ընդլայնելով կը քալես երկրին վրայ, առաջին պարտականութիւնդ է՝ ապրիլ կարենալ, տեսանելի եւ անտեսանելի, անծայրածիր երթը անցիդ:

Մէկ չես դուն, մարմին մըն ես բանակներու: Դիմագծերէդ մէկը, վայրկեանի մը համար, արեւուն տակ կը լուսաւորուի: Ու անմիջապէս կը մարի. ետեւէն ուրիշ մը, քեզմէ աւելի երիտասարդ, շողշողալ կը սկսի;

digitised by A.R.A.R.@

Ցեղդ՝ անցեալի, ներկայի եւ ապագայի հսկայական մարմինն է: Դուն կարճատեւ արտայայտութիւն մըն ես, իսկ ան դիմագիծն է: Դուն ստուերն ես, իսկ ան՝ միսը:

Ազատ չես: Անտեսանելի բիւրաւոր ձեռքեր՝ ձեռքերէդ բռնած՝ կը շարժեն զանոնք: Երբ զայրանաս, նախահայրերէդ մէկը կը փրփրի բերանիդ մէջ. երբ սիրաբանիս, քարանձաւի նախնիքներէդ մէկը կը մռնչէ տարփալից. երբ քնանաս, դամբաններ կը բացուին յիշողութեանդ մէջ ու զանոնք կը լեցուի ուրուականներով:

Արիւնով լեցուն փոս մըն է զանկդ, որուն մէջ մեռնողներու ստուերները՝ անհամար հոտերով՝ կը հաւաքուին, խմելու եւ վերակենդանանալու համար:

«Մի՛ մեռնիր, որ մենք ալ չմեռնինք», կը պոռան մեռելները մէջդ: «Ժամանակ չունեցանք մեր ցանկացած կիները վայելելու, դո՛ւն վայելէ զանոնք, իրենց հետ պառկելով: Մեր գաղափարները գործի վերածելու չբաստաւք, դո՛ւն վերածէ զանոնք: Մեր յոյսին դիմագիծը ըմբռնելու եւ զայն ամրացնելու ժամանակ չունեցանք, դո՛ւն ամրացուր զայն:

«Լրացո՛ւր մեր գործը, աւարտէ՛ մեր աշխատանքը: Օր ու գիշեր, կա՛ւ գանք ու կ'երթանք մարմնիդ ընդմէջէն ու կը թացագանչենք: Ո՛չ, մենք չե՛նք մեկնած, չե՛նք բաժնուած մարմնէդ, հոգին մէջ չե՛նք իջած մենք: Մարմնիդ խորերուն մէջէն կը շարունակենք պայքարը: Ազատէ՛ մեզ:

Չի բաւեր մէջդ նախնիքներուդ ժխորը լսել: Չի բաւեր անոնց կրուիլը զգալ մտքիդ շեմին առջեւ: Բոլորն ալ կը խուժեն՝ կառչելու տամ ուղեղիդ, դարձեալ օրուան լոյսին թարձրանալու համար:

Բայց դուն պէտք է ուշադրութեամբ ընտրես, թէ ո՞ր մէկ նախահայրը պէտք է վերստին կործանի արիւնիդ խրամներուն մէջ. եւ թէ՝ ո՞վ պէտք է դարձեալ թարձրանայ լոյսին ու հոգին վրայ:

Անոնց հանդէպ կարեկցութիւն մի՛ զգար: Արքո՞ւն կեցիր սրտիդ անյատակ խորշին մէջ եւ ընտրէ: Պէտք է ըսես. «Այս ուրուականը խոնարհամիտ է ու մթին, անասունի մը պէս: Թող կորսուի: Այս մէկը լուսեաց է ու այրուող, ուժի կենսախայտ, քան ես: Թող ամբողջ արիւնս խմէ»:

Լուսաւորէ մութ անկիւնը նախնիքներուդ, անոնց կանչերը խօսքերու մէջ համադրէ, յստակացուր իրենց կամքերը, ընդլայնէ անոնց ճեղ ու անողորմ ճակատները: Ասիկա քու երկրորդ պարտականութիւնդ է:

Որովհետեւ, միայն ստրուկ մը չես դուն: Հազիւ ծնած՝ նոր կարելիութիւն մըն ալ ծնաւ հետդ, ազատ թաթխում մը փոթորկեց ցեղիդ անտեսուած սիրտը:

Ուզես կամ չուզես, կեանքի նոր կշռոյթ մը կը բերես հետդ: Նոր բաղձանք մը, գաղափար մը նոր, քարտ տխրութիւն մը: Ուզես կամ ոչ՝ նախահայրերուդ մարմինը կը հարստացնես:

digitised by A.R.A.R.@

Դէպի ո՞ւր պիտի ուղղուիս: Ինչպէ՞ս պիտի դիմագրաւես կեանքն ու մահը, առաքինութիւնն ու երկիւղը: Ամբողջ ցեղը կ'ապաստանի կուրծքիդ մէջ, հարցումներ կ'ուղղէ ու կը սպասէ տագնապալից:

Պարտաւորութիւններ ունիս: Այլեւս միայն պզտիկ ու անշնչաւոր գոյութիւնդ չէ, որ կը կառավարես: Նարտախաղի թուակիր փուլերու նետուածք մըն ես, որով, վայրկեանի մը համար, գրաւի կը դրուի ճակատագիրը ցեղիդ:

Արարքներէդ իւրաքանչիւրը կ'արձագանգէ հազարաւոր ճակատագիրներու ընդմէջէն: Երբ կը քալես, կը բանաս եւ կը ստեղծես հունը այն գետին, որուն մէջ պիտի մտնէ եւ պիտի ընթանայ հոսանքը գալիք սերունդներուդ:

Երբ կը վախնաս, երկիւղդ կը ճիւղաւորուի անհամար սերունդներու, ու անթիւ հոգիներ կ'անպատուես, ետիդ ու առջեւդ: Երբ կը բարձրանաս քաջարի արարքով մը, համայն ցեղդ կը բարձրանայ եւ կ'արիանայ քեզի հետ:

«Առանձին չեմ, առանձին չեմ»: Այս տեսիլքը քոզ ամէն վայրկեան այրէ քեզ:

Ոգորմելի ու կարեւատեւ մարմին մը չես դուն: Կաւեղէն ու անցաւոր դիմակիդ տեւ. հազարամեայ դէմք մը կայ՝ դարանամուտ: Կիրքերդ եւ գաղափարներդ աւելի հին են, քան սիրտդ ու միտքդ:

Մահացած նախնիքներդ եւ չծնած սերունդներդ անտեսանելի են: Ցեղիդ ապրող այրերը, կիներն ու զաւակները՝ տեսանելի մարմնիդ:

Եսի դժոխքէն կը ձերբազատուի միայն ա՛ն, որ խորապէս կը զգայ, թէ անօթի է, երբ իր ցեղին զաւակներէն մէկը ոչինչ ունի ուտելու եւ կամ իր սիրտը կը տրոփէ անհուն ուրախութեամբ, երբ իր ցեղէն այր մը ու կին մը գրկախառն կը համբուրուին:

Առնիք բոլորը անդամներն են քու մեծ ու տեսանելի մարմնիդ: Կը տառապիս եւ կ'ուրախանաս, ցրուած մինչեւ ծայրամասերը երկրի՝ հազարաւոր արենակիցներուդ մարմիններուն մէջ:

Ինչպէս որ կը կոռիս փոքր մարմնիդ համար, այնպէս ալ՝ կռուէ մեծ մարմնիդ համար: Կռուէ՛, որպէսզի այս բոլոր մարմիններդ զօրաւոր դառնան, վտիտ ու պատրաստակամ: Իրենց ուղեղները լուսաւորուին, իրենց սրտերը տրոփեն քոցավառ, քա՛ջարար ու անհանդարտ:

Ինչպէ՞ս կրնաս զօրաւոր դառնալ, լուսաւորուած ու քաջարի, եթէ այս բոլոր առաքինութիւնները չեն փոթորկեր քու լայնածիր ոգի մարմնդ: Ինչպէ՞ս կրնաս փրկուիլ, եթէ ամբողջ արիւնդ չփրկուի: Ցեղէդ մէկը երբ կորսուի՝ քեզ ալ իր հետը կը քաշէ: Մարմնիդ ու մտքիդ մէկ անդամը կը փտի:

digitised by A.R.A.R.@

Այս ինքնութիւնը խորապէս ապրէ, ոչ իբրեւ տեսութիւն, այլ իբրեւ միս ու արիւն:

Ցեղիդ մեծդի ծառին մէկ տերեւն ես դուն: Պէտք է զգաս հողը, որ կը քարձրանայ մութ արմատներէն եւ կը տարածուի ճիւղերուն եւ տերեւներուն վրայ:

Ի՞նչ է նպատակդ: Կռուիլ, անխախտօրէն կառչիլ ճիւղի մը՝ իբրեւ տերեւ կամ իբրեւ ծաղիկ, եւ կամ ալ իբրեւ պտուղ, այնպէս որ՝ ամբողջ ծառը կարենայ շարժիլ մէջդ, շնչել եւ վերանորոգուիլ:

Ցեղիդ հանդէպ կատարած ծառայութեանդ ընթացքին, առաջին պարտականութիւնդ է ներաշխարհիդ մէջ զգալ բոլոր նախահայրերդ: Երկրորդ պարտականութիւն՝ իրենց խոյանքը լուսաւորել ու շարունակել իրենց գործը: Երրորդը՝ յանձնել զաւկիդ քեզ գերազանցելու մեծ պատգամը:

Ցաղնապ մը կայ մէջդ: Մէկը կը կռուի քեզմէ փախչելու, միսէդ պոռակտուելու, քեզմէ ձերբազատուելու: Սերմ մը փորոտիքիդ մէջ, սերմ մը ուղեղիդ մէջ, չ'ուզեր այլեւս հետդ մնալ, այլեւս չի կրնար պարունակուիլ ընդերքիդ մէջ, ազատութեան համար կը կռուի ան:

«Հա՛յր, չեմ կրնար պարփակուիլ սրտիդ մէջ, խորտակել կ'ուզեմ զայն՝ անցնելու համար: Հա՛յր, կ'ատեմ մարմնիդ, կ'ամչնամ քեզի փակած ըլլալուս համար, կ'ուզեմ փախչիլ:

«Դանդաղ ձի մըն ես դուն հիմա, ոտքերդ չեն կրնար այլեւս սրտիս զարկերուն հետեւիլ: Կ'անապարե՛մ: Պիտի վազեմ, եւ ուրիշ մարմնի մը վրայ հեծնելով՝ պիտի թռչում քեզ ճամբուն մէջ»:

Եւ դուն՝ հայրը, կ'ուրախանաս որդիիդ արհամարհոտ ձայնը լսելով: «Ամէն ինչ, ամէ՛ն ինչ զաւկիս համար» կը պոռաս: «Ես ոչինչ եմ: Ես կապիկն եմ, իսկ ան՝ մարդը: Ես մարդն եմ, իսկ ան՝ մարդու որդին»:

Քեզմէ աւելի զօրաւոր ուժ մը մէջդ կ'անցնի, մարմնիդ եւ ուղեղդ խորտակելով ու կը պոռայ. «Գրաւի՛ դիր ներկան եւ ստոյգը, գրաւի՛ դիր գանոնք, ապագայի եւ անորոշութեան սիրոյն:

«Ոչի՛նչ վերապահէ: Կը սիրե՛մ վտանգը: Թերեւս կորսուինք, թերեւս ալ փրկուինք: Մի՛ հարցներ: Համայն աշխարհը, ամէն վայրկեան, վտանգի ձեռքերուն մէջ տեղատարէ: Ես, սե՛րմը գալիքին, ցեղիդ ընդերքը կը ճարակեմ ու կը պոռամ»:

ՆԻԳՈՍ ԳԱԶԱՆՃԱԳԻՆ

digitised by A.R.A.R.@

ՉԱՐԵՆՑԻՆ

●

Քեզ տիրեցի, եւ իմ սէրը դարձաւ մարմէ,
Եւ իմ սէրը դարձաւ վախ,
Իմ սրտում կար մի երկնային երգի ոգու,
Բայց դարձայ լաւ, գլխակախ:

Հաւատում եմ, հաւատում եմ, որ կը գայ մեծ
Քո յարութեան օրն արդար,
Եւ դու ճորից յաղթանակով կը յառնես,
Եւ ոսոխդ կ'ընկնի վար:

Որքա՜ն մարդիկ պիտի փութան ամպոցներդ՝
Ամայինը յուզուելով,
Եւ անիծեալ իրենց անցեալը օձեն
Ցիշատակիդ լոյսերով:

Բայց մենք կը գամէ դահլիճներով խուռներամ
Ու հայերով ամվնատ,
Եւ քո բոլոր դահիճներին անրագթի
Պիտի գտնենք պատէ պատ:

Եթէ ճոյնիսկ ես չեռանամ այդ օրուան,
Եթէ մնամ կէս ճամբին,
Վաղուայ փառքիդ շքամուտքով ներս կը գամ,
Աշակերտի պէս անդիմ:

1939 ԿԱՐԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ԱՆԻԾԵԱԼՆԵՐԸ...

●

Գրական ասպարէզ նոր թեւակոխած բազմաթիւ նորերու պէս՝ Խաչիկ Դաշտենց եւս վայելեց Չարենցի գուրգուրանքը եւ ապա ապրեցաւ այն տառապանքը, որ մեծ բանաստեղծին մահուան ներքակամ հանգամանքներուն հետեւանքով մորմոքեցաւ քիւր քիւրոց սրտերուն:

Ո՛րքան խոր է Չարենցի հանդէպ Դաշտենցի տածած սէրը նո՛յնքան եւ ոդբերգական են այդ զգացումին կերպարանափոխուած երեսները, ու ճիշդ՝ ճահատակ բանաստեղծին յարութեան հետեւող երեւոյթները գուշակող իր պատկերացումները: Իրականութիւնը իրապէս արդարացուց երեւակայութեան ուժով լուսաւորած Դաշտենցի պատկերները: Արդարեւ, յետ յարութեան Չարենցի անիծեալ անցեալի տէր ի՛նչ անիծեալներ փութացին իրենց «անցեալը օձել» յարուցեալին յուշերով:

Անիծեալներու պարագլուխներէն երկուքը, հայ մը եւ ռուս մը, Նայիրի Զարեան եւ Վալերի Կիրպոտին, ծայրագոյն կիրքով, Չարենց պիտի ըսէր՝ «յախուռն ցնծութեամբ» կատարեցին իրենց սեւ դերը երէկ եւ հետազային վարուեցան ճիշդ ու ճիշդ Դաշտենցի նախատեսած եղանակներով:

Զարեան ուրիշներուն վերագրելով յուդայական երկոյթները, ոդբաց.

Քո մահը իմ կորուստն է դառնակիզ:
Ես ողբացել եմ քեզ հազար անգամ:
Հապա՞ր ափսոս, որ դու կենդանի չես,
Իմ ախոյեա՛ն, վարպե՛տ եւ բարեկա՛մ:

Աւելի տխուր է իր անցեալը շնչական սառնասրտութեամբ մը մէկ կողմ դրած միւս անիծեալին, Հայաստանի գրողներու դահիճին նոր երկոյթը: Հինը՝ *«Նա սահեցնում է մի գիրք՝ «Գիրք ճանապարհի», որ ամբողջապէս գրուած*

digitised by A.R.A.R.@

է որպէս հայ գրականութեան զազգային յատկանիշների խտացման թէորիայի իլլուստրացիա»:

Ազգային յատկանիշները մահացու մեղմ համարոզ շրջանի մը (1937) այս տողերը գրող արարածը ստանձնիկց տարի եռամ ըսաւ բոլորովին ճոր բան: Նաբը՝

«Զարենցը անցեալին էր դիմում նրա համար, որպէսզի աւելի լաւ հասկանար այժմէականութիւնը եւ աւելի լաւ ընդգծէր նրա գաղափարների իրականութիւնը: Այն ժամանակ հայերի անցեալ թշուառութեան ու տառապանքների յիշատակումը որոշ չրջաններում համարւում էր պեսիմիզմի եւ քիչ մնար՝ նացիոնալիզմի նշան»:

«Եւ ի՞չ մնար»: Եւ ո՞վ էր արդիօք այդպէս համարոզները հրատարոզ դահիճը:

Երկար է այս խնդիրը: Ընդհատենք հոս եւ ըսենք ուրիշ բան, ա՛յն՝ որ իր անիծեալ անցեալին ծիրան ծառայող վալէրի կիրպոտինի վերջին հատատումը առնուած է Երեւանի մէջ 1961ին լոյս տեսած «Ցիշողութիւններ Եղիշէ Զարենցի մասին» անուն ստուար հատորէն, ուր, զարմանալի է հաստատել, տեղ չէ տրուած խալիկ Դաշտենցի «Ցիշողութիւններ Զարենցի մասին» խորագրեալ բովի գրութիւնն:

Դաշտենցի սոյն կտորը լոյս ընծայած «Գրական թերթ»էն ուրիշ յուշեր առնուած են հատորին մէջ, հետեւաբար կարելի չէ ըսել, որ խմբագիրները անծանօթ էին այս մէկուն: Այս անտեսումը չի կրնար նաեւ արժէքի հարց ըլլալ, քանի որ Դաշտենցի յուշերուն հետ համեմատութեան որեւէ եղր չունեցող արիւնոտ մարդերու եւ անարիւն ու անդէմ ուրիշներու սարքածներուն տեղ տրուած է հատորին մէջ: Ուրե՞մն:

«Հայրենական երգի եղերքին» ով գիտէ որքա՞ն անիծեալներ կան տակուրէն եւ դեռ անիծեալ ի՞նչ գործեր կը կատարուին հոն՝ հին ու նոր անիծեալներու միացեալ ոռնգութիւններով...

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

1934 Թուականի Ցունուարին, մի օր Զարենցը ինձ Գեահրատում տեսնելով ասաց՝

— Խաչիկ, էսօր եկ ինձ մօտ ասեն, միասին քո բանաստեղծութիւնների ժողովածուն խմբագրենք:

Խօսքը իմ մի փոքրիկ ժողովածուի մասին էր, որ լոյս տեսաւ այդ միեւնոյն Թուականի գարնանը:

Երեկոյեան ժամը ութին գնացի մօտը: Ամբողջ ճանապարհին մտածում էի, թէ Զարենցը ինչպէս է խմբագրելու իմ ժողովածուն, ես ինչպէս պէտք է ինձ պահեմ նրա ներկայութեամբ եւ առհասարակ ինչ է նշանակում որեւէ գիրք խմբագրել:

Հասայ թէ չէ, նա դարակից հանեց իմ ժողովածուն, ինձ նստեցրեց գրասեղանի մօտ, իր դիմացը եւ սկսեց խմբագրել:

Այդ տարին լրանում էր Զարենցի գրական գործունէութեան քսանամեակը, ուստի ես իմ ժողովածուի ճակատին դրել էի. «Գիրքս ձուիրում եմ Եղիշէ Զարենցին, նրա գրական քսանամեայ մեծ հանապարհին»:

— Շնորհակալ եմ, Խաչիկ, քո այդ

digitised by A.R.A.R.@

անկեղծ յիշատակութեան համար, բայց արի էս ձօնը հանենք, կարիք չկայ, — ասաց Զարենցը ու գրիչը վերցնելով ուզում էր ջնջել, երբ Նրա ձեռքը բռնելով ասացի.

— Խնդրում եմ ձեռք չտաք. այդ աշակերտի համեստ խօսքն է իր մեծ ուսուցչին, եւ ձեր խմբագրական պարտականութեան մէջ չի մտնում:

Իմ այս համարձակ խօսքը ազդեց բանաստեղծի վրայ: Նա նայեց ինձ շատ բարի աչքերով եւ ասաց.

— Իմ յոբելեանը երեւի չեն ուզում յիշատակել: Բայց երիտասարդներն աւելի անկեղծ են: Ինչպէս ուզում ես:

Այնուհետեւ նա անցաւ հիմնական նիւթին: Հերթականութեամբ բարձրաձայն կարդում էր իմ բանաստեղծութիւնները եւ երբ նկատում էր չեչտի կամ յանգի խախտում, կամ հանդիպում էր մի բառի, որ սխալ էի գործածել, ասում էր.

— Էստեղ կանգ առնենք:

Ամէն ինչ հարթ անցաւ, բացի մի «կանգառից», որ մեխուել է իմ յիշողութեան մէջ:

Դրանից մի տարի առաջ ես եղել էի Ղրիմում (Գուրզուֆ) եւ մի փոքրիկ բանաստեղծութիւն էի գրել Պուշկինի երեք նոճիների մասին, որն սկսւում էր այսպէս.

Շառաչում է քամին, տարուբերում ուժգին
Կիպարիսները բարձրահասակ,
Նրանք օրօրուելով շշնջում են՝ Պուշկին,
Մենք հասակ առած ծառեր դարձանք:

Զարենցն այստեղ գրիչը ցած դրեց եւ վառեց գլանակը:

— Գիտե՞ս ինչ, Խաչիկ, «ուժգին» բառի մէջ չեչտն ընկնում է երկրորդ վանկի վրայ (ուժգի՛ն), իսկ «Պուշկին» բառի մէջ չեչտն ընկնում է առաջին վանկի վրայ (Պո՛ւշկին), որովհետեւ այդ անունը ռուսական է, հետեւապէս «ուժգին» եւ «Պուշկին» բառերը իրար հետ յանգ կազմել չեն կարող, թէպէտ արտաքուստ թւում է, թէ յանգ յանգեր են, — ասաց Զարենցը ծուխը փչելով դէպի առաստաղը: — Առաջին անգամ Ազատ Վշտունին է գրանք չփոթել, կամենալով Յակոբ Յակոբեանին Պուշկինից աւելի ուժգին համարել, բայց վրիպել է:

Այստեղ Զարենցը քորեց քթի ծայրը եւ երկար ծիծաղեց:

Ես ասացի, թէ հայերէնում օտարազգի անունները ենթարկւում են հայերէնի չեչտագրութեանը:

— Կոչական խօսքի մէջ՝ երբեք, — ասաց Զարենցը:

Ձմարիտն ասած, ես չյանդգնեցի այլեւս հակառակել, որովհետեւ Զարենցի ամէն մի խօսքը ինձ համար, իբրեւ երիտասարդ դրողի, մեծ հեղինակութիւն էր: Եւ նա փոխելով այդ բառերը, քառատողը խմբագրեց այսպէս.

Շառաչում է քամին, տարուբերում երեք
Կիպարիսները բարձրահասակ,
Նրանք օրօրուելով շշնջում են, պոետ,
Մենք հասակ առած ծառեր դարձանք:

Երբ հերթը հասաւ իմ «Միածան» պոեմին, Զարենցն ասաց.

— Գեղեցիկ պոեմ է, բայց ափսոս, որ դու իրական տարրը խառնել ես անիրական տարրին՝ Նախչուանի Ծիածանի տակով անցնելու եւ բեկի տղային Ծնծեղու անհաւատալի հանդամանքի հետ: Բայց դու երիտասարդ բանաստեղծ ես եւ ես չեմ ուզում քո ինքնուրոյնութեանը դիպչել, թող մնայ այնպէս, ինչպէս գրել ես:

Խմբագրումը չատ սահուն անցաւ եւ աւարտուեց նոյն օրը ուշ երեկոյեան:

Զարենցը, որ բացառիկ հոգատարութիւն էր ցուցաբերում դէպի երիտասարդ դրողները, կամենալով իմ ժողովածուն ճաշակով հրատարակուած տեսնել, վերցրեց գրիչը եւ հետեւեալ նամակը գրեց Գեղհրատի նկարիչ Ցաճատ Խաչվանքեանին:

digitised by A.R.A.R.@

«Ցանցատ.

«Խնդրում եմ անմամբ հետեւես, որպէսզի խաչիկ Դաշտենցի գիրքը շընորհիմով տպագրուի՝ կազմիր տիտուլ, տուր տառերի սիստեմ (վերնագրեր, եւայլն), հետեւիր լուսանցքներին, որ չափսը տեղը լինի: Խաչիկը ասում է, որ դու գիրքը ձեւաւորել ես, մնում է որ հետեւես լաւ տպուի. Խաչիկը լաւ պռետ է եւ արժանի է, որ նրա գիրքը լոյս տեսնի խնամքով: Մնում է շապիկի հարցը: Շաւարշի նկարածը վատ է, ճորը թող նկարի, տուր նրան ցուցմունքներ. լաւ կը լինի, եթէ շապիկը լինի երկու գոյնի եւ տպուի ֆլիշէով, որ գործը չթարդացայ. կարծեմ Զոփուրը չի ուզում շապիկի խնդիրը բարդացնել. մնում է, որ դու իրրեւ ելէ նկարել տաս երկու գոյնի, թայց գեղեցիկ շապիկ եւ եթէ գործը լիտոգրաֆիայի չընկնի, դժուար թէ Զոփուրը դէմ լինի գրքի գեղեցիկ արտաքինին:

«Վիայոյս եմ, որ կ'անես հնարաւորը եւ կը փրկես խաչիկի գիրքը տխուր արտաքինից:

Զարենց»:

Այնուհետեւ նա մի երկտող էլ գրեց Պետհրատի գիրեկտոր ընկեր Զոփուրեանին, գարձեալ այդ հարցով, եւ ժողովածուն ինձ յանձնելով ասաց.

— Մի երկու օրից յետոյ բեր իմ ցընեմ ապարան:

Ուրախութիւնից ես ամբողջ գիշերը չկարողացայ քնել: Իմ ժողովածուն խմբագրել էր մեծ բանաստեղծ Զարենցը: Խմբագրել էր իմ ներկայութեամբ, տող առ տող կարդալով բոլոր բանաստեղծութիւնները:

Նրա երկու թղթերը, չգիտեմ ինչպէս եղաւ, մնացին մօտս: Նրանք մինչեւ այսօր էլ գտնւում են իմ արխիւում, որպէս Զարենցի ձեռագրերից մնացած թանկագին պատուիրներ, որպէս երիտասարդ գրողի հանդէպ ցուցաբերուած հոգատարութեան փայլուն օրինակ:

***

1935 թուականին ես ուսանում էի Մոսկուայում: Լսեցի, որ Զարենցը մի քանի օրով Մոսկուա էր եկել: Ես նրան հանդիպեցի Մոսկուայի Հայկական կուլտուրայի տանը: Մի օր յետոյ պէտք է վերադառնար:

Նա հարցուփորձ արեց, թէ ես ինչպէս եմ ապրում, ինչ եմ գրում:

Ցանկարծ մի բան յիշելով ասաց.

— Լա՛ւ, Խաչիկ, իմ «Խմբապետ Շաւարշ»ի թարգմանութիւնը տպագրուել է «Ակթիապը» ամսագրում: Կ'երթաս եւ հոնորարը կը ստանաս:

— Կը ստանամ եւ կ'ուղարկեմ ձեզ, — ասացի:

— Այ տղայ, գի՞ժ ես, ինչ է, — բարկացաւ Զարենցը, — ուսանող տղայ ես, երիտասարդ բանաստեղծ: Կը ստանաս եւ կը խրճես: Վերադարձին կ'ասեմ, որ քեզ Թոչակ նշանակեն Հայաստանից: Լաւ ես անում, որ լեզուներ ես սովորում: Բայց աւարտելուց յետոյ Հայաստան վերադարձիր: Վայ այն գրողին, որ իր մայրական հողից կտրւում է, մանաւանդ երիտասարդ հասակում: — Եւ նա անմիջապէս մի լիազօրագիր տուեց, որ «Խմբապետ Շաւարշ»ի հոնորարը ստանամ:

Այդ հոնորարը ես ստացայ մի քանի օրից յետոյ: Գորկու փողոցով անցնելիս ես կանգ առայ բուֆինիստական մի խանութի առաջ: Ցուցափեղկում դրուած էր Լենչի «Արմենիա» նշանաւոր աշխատութեան երկու հատորը անգլերէն լեզուով: Վաղուց որոնում էի: Երկու հատորն էլ անմիջապէս վերցրի եւ շտապեցի հանրակացարան: Հատորներից մէկը Արեւելեան Հայաստանն էր, իսկ միւսը՝ Արեւմտեան Հայաստանը: Առաջինը բացում էր Ս. Բարատի փառահեղ տեսարանով, իսկ երկրորդը՝ Վանայ լճի գեղատեսիլ պատկերով:

— Ա՛յ թէ որտեղ պէտք եկաւ «Խմբապետ Շաւարշ»ի հոնորարը, — ասացի ինքս ինձ երկու չքեղ հատորները ուսանողական գրասեղանիս վրայ դնելով:

digitised by A.R.A.R.@

⁂

1935 Թուականի ամրանը Զարենցն ընտանիքով եկել էր Մոսկուա եւ ապրում էր «Նացիոնալ» հիւրանոցում։

Օգոստոսի վերջին Երեւան վերադառնալու եւ ինձ հետ նուռ էի վերցրել ուսանող ընկերներիս համար։ Իմանալով, որ Զարենցը Մոսկուայումն է, մի քանիսը առայ եւ գնացի մօտը։ Մի չիշ էլ կոնեակ տարայ։ Ինձ հետ էին իմ երկու հայ ուսանող ընկերները՝ Գալուստ Աւետիսեանը եւ Մուրատ Վարդանեանը։

Այդ օրերին լոյս էր տեսել Զարենցի «Երկիր Նայիրի» վէպը ռուսերէն լեզուով՝ Մարիէտտա Շահինեանի առաջաբանով։ Նա անմիջապէս բացեց կոնեակը եւ մենք Հայաստանից բերած կարմրահատիկ նուռը ուտելով եւ կոնեակը խմելով շնորհաւորեցինք «Երկիր Նայիրի» վէպի ռուսերէն հրատարակութիւնը։ Նախապէս Զարենցը ամէն մէկիս նուիրեց մէկական օրինակ իր գրքից։

Այնուհետեւ իմ ազատ ժամերին ես մի քանի անգամ եղայ Զարենցի մօտ։ Միշտ դռնում էի նրան կորգալիս։ Շատ էր կարդում Զարենցը։ Նրա գիտելիքները բազմակողմանի էին եւ չափազանց հարուստ։ Յիշում եմ նա մի օր ինձ փող տուեց եւ ես Գորկու փողոցի բուկինիստական խանութը գնալով նրա համար գնեցի հետեւեալ գրքերը.

Ռուպրուք. «Մոնկոլոքոյէ կասուտարբոդվը», «Ռուսքիհ Փառնաս» եւայլն։

Մի անգամ մտայ տեսնեմ՝ Զարենցը տխուր նստել է բազմոցին եւ լրագիր է կարդում։

— Տեսնում ես, Խաչիկ, խեղճ հաբէշներին ինչպէս են ոչնչացնում թունաւոր գազերով եւ ռումբերով, փոքր երկիր է։ Մուսոլինիի զինուորները թափուել են վրան եւ յոչնչում են խեղճին։ Իդեալ է բոլոր անպաշտպան ժանր ժողովուրդների ճակատագիրը։ Մէկը չկայ հարցնի, թէ այ խուայցիք, բա ձեր պատուին վայե՞լ է, որ թոփով ու թֆանգով յարձակուել էք անմեղ հաբէշների վրայ։ Ասենք, ինչու եմ զարմանում։ Դրանց նախահայրերը երկու հազար տարի առաջ յարձակուեցին մեր Տիգրանակերտի վրայ եւ քարուքանդ արեցին այն։ Եթէ հայերը քաջաբար չդիմադրէին, նրանք մեր Արտաշատն էլ հող ու մոխիր կը դարձնէին։

Մի քանի օրից յետոյ, երբ նորից եկայ, տեսնեմ Զարենցը իրերը կապել է։

— Թէ՝ գնում եմ Հայաստան։

— Ե՞րբ։

— Հենց վաղը գնում եմ։ Ես առանց Հայաստանի չեմ կարող ապրել։ Ա՛յ որդայ, ես էլ իմ վրայ զարմացած եմ, թէ էս ամբողջ ամառը ինչպէ՞ս ապրեցի Մոսկուայում։ Մարդիկ ամառանոցներ են գնում, իսկ ես էկել նստել եմ Մոսկուայի չոգերի մէջ եւ այն էլ որտե՞ղ, «Նացիոնալ» հիւրանոցում։ Չէ՛, վաղը մեկնում եմ։ Ժողովրդի բանաստեղծը միշտ պէտք է իր ժողովրդի մէջ լինի։

Հետեւեալ օրը Գալուստ Աւետիսեանի հետ եկանք Զարենցին ճանապարհ դնելու։

Կայարանում նրան ուղեկցելու էր եկել Աշոտ Յովհաննիսեանը, որ այդ տարիներին ապրում էր Մոսկուայում։ Զարենցը մեզ ծանօթացրեց նրա հետ։

1936 Թուականի ամառային արձակուրդներին ես վերադարձայ Հայաստան։ Հետս ճանապարհին կարդալու համար վերցրել էի Լինչի երկրորդ հատորը։ Այդ տարի Մոսկուայի հայկական տպարանում լոյս էր տեսել իմ բանաստեղծութիւնների եւ պոեմների նոր ժողովածուն «Բաց» խորագրով, Ա. Աղոյեանի խմբագրութեամբ։

Լինչի հատորը եւ իմ գրքից մի օրինակ թեւիս տակ, Յուլիսի 17ին ես այցելեցի Զարենցին։

Ես նրան նուիրեցի իմ նոր ժողովածուն։ Նա սրտանց շնորհաւորեց ինձ եւ գիրքը դրեց իր գրասեղանի վրայ, որ յետոյ կարդայ։

— Իսկ էդ ի՞նչ գիրք է թեւիդ տակ, — հարցրեց Զարենցը։

— Լինչի հատորն է։ ուզո՞ւմ էք ձեզ նուիրեմ։

— Սիրով կ'ուզենամ, բայց որ անգլերէն չգիտեմ։

digitised by A.R.A.R.@

— Ոչինչ, — ասացի, — նկարներն էլ բաւական են, որ կողմնորոշուէք։ Սա Վանն է, սա Մ. Կարապետի ճանապարհն է։ Այսպէս դնում ենք դէպի Բինգիոլ, — եւ անմիջապէս դրքի վրայ «Համնամիծ բանաստեղծին՝ անմարելի սիրով» մակագրութեամբ հատորը յանձնեցի Զարենցին։

Երկրորդ անգամ ես Զարենցի մօտ եկայ մի հայ աղջկայ հետ, որ խօսում էր վեց լեզուով, բայց հայերէն չգիտէր։ Այդ օրիորդը ինստիտուտի Ֆրանսիական ֆակուլտետի ուսանողուհիներից էր եւ առաջին անգամ էր լինում Հայաստանում։ Ռուսերից օգտուելով ուզում էր տանել Զարենցին։

Ես Զարենցին տեսայ տրտաքնապէս զուարթ տրամադրութեամբ։ Նա մեզ հիւրասիրեց խաղողով եւ առաջարկեց բիլիարդ խաղալ։

— Զլինի՞ թէ դա այն աղջիկն է, որի մասին ստիխներ ես գրել քո նոր ժողովածուում, — հարցրեց Զարենցը։

Ես գլխով արեցի։

Երբ իմացաւ, որ օրիորդը հայերէն չէր իմանում, զարմացած հարցրեց.

— Իսկ ի՞նչ լեզուներ գիտէ։

— Ռուսերէն, Ֆրանսերէն, գերմաներէն, իսպաներէն, իտալերէն, չատիներէն, — թուրքերեն ես։

— Այդ բոլորը շատ լաւ է, բայց յանցագործութիւն է մայրենի լեզուն չիմանալը, — բարկացաւ Զարենցը ռուսերէնով,— այդ բոլորի կենտրոնում մայրենի լեզուն պէտք է լինի։ Ա՛յ մարդ, էս ե՞րբ պէտք է մեր հայ աղջիկները ազգային արժանապատուութիւն ունենան եւ սիրեն իրենց լեզուն։ Եկ, բիլիարդ խաղանք։

Մի քանի գնդակ գլորելուց յետոյ միասին դուրս եկանք։ Ասիճանների վերայ Զարենցն ասաց.

— Շատ սիրուն թուխ աղջիկ է, արժէ դրա մասին ստիխներ գրել, բայց որ հայերէն չգիտէ...

Այնպէս պատահեց, որ մի քանի օրից յետոյ ես վերադարձայ Մոսկուա, իսկ այնտեղից էլ նորից Երեւան։ Այս անգամ հետս վերցրի Լենինի առաջին հատորը։

Ես Զարենցի մօտ գնացի վերջին օրը, երբ պէտք է չասպ մեկնէի Մոսկուա, որովհետեւ պարապմունքները սկսւում էին։

Դուռը բացեց կինը։

— Տա՞նն է, — հարցրի ես։

— Եղիշէն հիմա կը դայ, — ասաց նա ինձ ներս հրաւիրելով։

Այդ խօսքի վրայ լսուեց Զարենցի ոտնաձայնը։ Նա ներս մտաւ ատամիկ ջղագրգիռ։ Գլխարկը եւ վզնոցը արագօրէն դցեց կախիչին վրայ եւ հարցրեց.

— Ո՞վ կայ տանը...

— Խաչիկն է, — ասաց կինը։

— Բարեւ, Խաչիկ, մենա՞կ ես։

— Մենակ եմ, — ասացի։ Մենք մը-տանք իր ուխտատեղը։

— Իզաբելլա՛, անկողինս բաց արա։

Կինը անկողինը բացեց բազմոցի վերայ։

— Ների ինձ, Խաչիկ, ես պէտք է պառկեմ, յոգնած եմ։ Զգիտեմ ինչ է կատարւում հետս։ Գլուխս ատամիկ ցաւում է։ Նստիր մօտս մի քիչ խօսենք։

— Ես եկել եմ մնաս բարեւի, Զարենց, — ասացի, նստելով նրա կողքին։

— Ո՞ւր ես գնում։

— Մոսկուա։ Եկայ, որ յանձնեմ Լենինի առաջին հատորը եւ հրաժեշտ տամ ձեզ։

— Ե՞րբ ես մեկնում։

— Հենց հիմա պէտք է կայարան գընամ։ — Ես ցոյց տուեցի նրան իմ ուղեւորմանը։

— Երանի քեզ, Խաչիկ։ Որքա՞ն կ'ուզէի ես էլ քեզ հետ գալ։ Ես պէտք է մեռնեմ Հայաստանը շատ սիրելուց։ Աղասին մի քանի անգամ ինձ ասաց, թէ եկ մի քանի ամսով գնա արտասահման բուժուելու՝ չգնացի։ Հայաստանի կարօտից չըգնացի։ Այդ ամբողջ ժամանակ նա խօսում էր գլուխը բարձին դրած, ձախ ձեռքը՝ ճակատին։

— Ասում ես սա Լենինի առաջի՞ն հատորն է, — հարցրեց նա վերմակի վրայից վերցնելով գիրքը։

digitised by A.R.A.R.@

— Երկրորդ վերադարձին հետս բերեցի։ Ձեր հոնորարով եմ առել, Զարենց, «Խմբապետ Շաւարշի» հոնորարով։ Երկրորդ հատորը նուիրել եմ, առաջինն էլ կը նուիրեմ, որ լրիւ լինի։

— Իզաբելլա, — յանկարծ դուշեց նա գլուխը թեքելով դէպի կողքի սենեակը։

Կինը ներս մտաւ։

— Որտե՞ղ է Լինչի երկրորդ հատորը, որ Խաչիկը բերել էր մէկ ամիս առաջ։

— Դարակի վրայ է, Զարենց։

— Բեր տեսնեմ։

Իզաբելլան գնաց, որ հատորը բերի։

— Լաւ, կարիք չկայ, որ դարակի վրայ է, կարիք չկայ. կարծեմ այնտեղ է դրուած, — գլխով դիմացի պատը ցոյց տալով ասաց Զարենցը, — այդ այն հատորն է, որ ներկայացնում է Արեւմտեան Հայաստանը։ Դրա կապոյտ լեռների վրայ եմ ես յղացել «Դանթէական առասպել»-ը. դա Մեսրոպ Մաշտոցի, Խորենացու եւ Սիամանթոյի ծննդավայրն է։ Թող մնայ, թող մնայ դարակի վրայ։ Իսկ այս հատորի մի զգալի մասը կոչւում է Սովետական Հայաստան, — ասաց Զարենցը Լինչի առաջին գիրքը բաց անելով եւ երկար նայելով Մասիսի նկարին։ — Ա՞յ, այստեղ է Ղարսը, — ասաց նա եւ գիրքը դրեց բարձի տակ։

Յանկարծ նա վերմակը քաշեց գլխի վրայ եւ ոչ մեռքը վերմակի տակից երկարեց ինձ։

— Բարի ճանապարհ, Խաչիկ։ Ներիր ինձ, ես պէտք է քնեմ։

— Բարի գիշեր, Զարենց, ասացի ես եւ նրա մեռքը սեղմելով, դուրս եկայ բանաստեղծի մօտից։

Մէկ եւ կէս տարի յետոյ Մոսկուայում սոսկալիով լսեցի մեծ բանաստեղծի մահը։ Ես բաց արեցի իմ ուսանողական տետրը եւ, արցունքներս հալչելով, գրեցի այնտեղ.

Տանը մնամ այս երեկոյ,
Դուրս չգնամ այս երեկոյ,
Ցուշերիս հետ, գիշերիս հետ
Մենակ լինեմ այս երեկոյ,
Մեծ Զարենցին լիշեմ ու լամ,
Ու հեկեկամ այս երեկոյ։

***

Ահա մօտաւորապէս ամէնը, ինչ որ ես յիշում եմ Զարենցի մասին։ Անմոռանալի ուսուցիչ, ես առայժմս ուզեցի միայն մի քանի կայծեր փրկել քո մեծ եւ հիասքանչ կեանքից։ Այն ժամանակ, երբ մեր հոգիները անխառն մտերմութեամբ հիւսւում էին իրար եւ դնալով ամրապընդւում էր մեր բարեկամութիւնը, դու բաժանուեցիր մեզանից։ Ես քո մասին կը գրեմ յետոյ, երբ ժամանակը նպաստաւոր կը տայ։

Այժմ դեռ բաւական թարմ է քո յիշատակը եւ շատ ծանր են մեր սրտերը կորստիդ հանդէպ։

(«Գրական թերթ», 1957, թիւ 36) ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

digitised by A.R.A.R.@

Նկատուներ

ՄԵՐ ՏԻԿԻՆՆԵՐԷՆ ՈՒ ՊԱՐՈՆՆԵՐԷՆ ԱՌԱՋ...

Աշխարհի մէջ ժողովուրդներուն կարգին, մասնաւորապէս չափազանցութիւններ ունեցող մեր ժողովուրդի խաւերուն եւս ծանօթ է Ալեքսանդր Սոլժենիցինի պարագան, համայնավար աշխարհին մէջ մարդկային դիմագծով կեանք մը ստեղծելու ձգտումով մղած իր դժնդակ պայքարէն մինչեւ իշխանութիւններուն կողմէ կարժիր գծից դուրս դրուելու ողբերգութիւնը:

Թէ՛ պայքարի ծանր տարիներուն եւ թէ իր հայրենիքէն բռնօրէն դուրս դրուած շրջանին, Սոլժենիցին, ապա աշխարհի մասնաւորապէս կարգին՝ համարումը վայելեց նաեւ կարժիր գծէն ներս գտնուող մեծահռչակ ռուս գրագէտներու եւ մասնաւորապէս՝ որոնց մէջ, Սախարովէն եւաք, աչքի զարկաւ յատկապէս «Հորիզոնային Մթութեան ուղղափառ խօսնակը» համարող բանաստեղծ Եւգենի Եւտուշէնկօ, իշխանութիւններուն ուղղած իր «Ցաց նամակ»ով, որ Մոսկուայի մէջ շրջապատելէ եւաք, հասաւ արտասահման եւ երեւցաւ Լոնտոնի «Թայմզ»ի եւ Փարիզի «Լը Նուվէլ օպզէրվատէօր»ի մէջ:

«Բագին»ի այս տարուան Մարտի համարին մէջ լոյս տեսած «Քնար ճինպաչեանի «Ռուսիան զրկուած է իր ամէնէն գեղեցիկ ձայնէն» անուն գրութիւնը մատնանշած էր Եւտուշէնկոյի նամակէն հատուած մը, զոր կ'արժէ կարդալ երկրորդ անգամ.

«Կուլակ Արշիպեզագոս»ի մէջ Սոլժենիցինի որդեգրած թագմաթիւ ասպէկտներուն համաձայն չեմ ես ինքս: Համաձայն չեմ, ի մասնաւորի, զօրավար Վլասովի մասին գրածներուն: Բայց այս գիրքին մէջ կայ ստալինեան ոճիրներուն մասին վաւերագրային սահմռկեցուցիչ էջեր: Որքան ալ մեծ թլլան Սոլժենիցինի մեղքերը, չեն կրնար հասարակաց եզրեր ունենալ ստալինեան ժամանակաշրջանի արիւնոտ դատաստանութիւններուն հետ»:

Իր մարդկային բաղձանքներուն համար քաղաքացիութենէ զրկուելու չափ մեծ անարդարութիւններու ենթարկուած գրագէտ իր եղբօր ի նպաստ Եւտուշէնկոյի բռնած դիրքը քաղաքացիական քաջութեան փաստ մըն է եւ իբրեւ օրինակ վաղը անպայման պիտի արձանագրուի ռուս գրականութեան պատմութեան մէջ, հակադրաբար այն վաստակներուն, որոնք չտպեցին ցուցադրել իրենց լրջուկ բնոյթը:

Լրագրողներուն շարքերը եկան խառնել նաեւ մեր հայրենիքի շարքային գրողներէն ոմանք, դիւաւորութեամբ անկանգնելի խոտանի մը, Հմայեակ Սիրաս, որուն հետեւեցան Ազատին, Միքայէլ Շաթիրեանը եւ... դժբախտաբար, երրորդ մը, փայլուն առակագիր Արշաւիր Դաբրնի, մե՛ղք...

Մեղք՝ ա՛յն պատճառով, որ ամբարիշտներուն աչքին հանոյ դառնալու համար՝ խաչակրութեան ենթարկուած լուսաւոր դէմքերուն դէմ արժանաւորները չեն մոլեգնիր, նման ծառայամտութիւններու կ'ընդառաջին ժառանգաւորկնե՛րը միայն:

Մեր յոյսերդ թիւով իւրաքանչիւրէն պիտի ներկայացնենք հատուած մը եւ առանձնաբար քանի մը խօսք պիտի ըսենք քառասուն տարիներէ ի վեր նման առիթներու բնորոշ անմտութիւններ հանդիսացող ու երբեք չխրատուող Հմայեակ Սիրաս կոչուած այդ անպիտան դպիրին մասին...

digitised by A.R.A.R.@

●

Մայրս ոչ մէկ գնով կ'ուզէր, որ ես գրող դառնայի:

Ատիկա բանաստեղծութեան հանդէպ պակսող ճաշակի մը հետեւանքը չէր: Ան պարզապէս համոզուած էր, որ բանաստեղծը անհաստատ մէկն էր, չարչարուած, իր թափառական կեանքին մէջ միշտ վշտահեղձ: Ան գիտէր, որ ռուս բանաստեղծներու ճակատագիրը գրեթէ միշտ եղերական եղած է: Պուշկինն ու Լերմոնտովը մենամարտի մէջ սպանուած էին. Ալեքսանդր Պլոք քիչ առ քիչ փճացուցած էր իր կեանքը մթին ծուխերու մէջ, յանգելով անձնասպանութեան: Եսենին ինքզինք կախեց: Մայակովսկի՝ գանկին մէջ գնդակ մը մխրճելով մեռցուց ինքզինք:

Մայրս, բնական է, չխօսեցաւ ինծի այս բոլորին մասին, բայց ան կը ճանչնար իր սերունդի բանաստեղծներէն շատ մը ուրիշներ, որոնք ոչնչացուեցան ստալինեան կեդրոնացման ճամբարներուն մէջ: Ան կը զարհուրէր ուրիշն այն մտածումէն, որ ես կրնամ ճոյն ուղին ընտրել: Ան բզիկ-բզիկ կ'ըներ իմ բանաստեղծութիւններուս սնտրակները: Ան անընդհատ կը խնդրէր ինծմէ, որ հետամբրուիմ «լուրջ» բանով մը:

Բայց, ինծի համար, «լուրջը» ճիշդ ու ճիշդ ա՛յդ էր՝ բանաստեղծութիւնը:

Առաւօտեան ժամը 7ին խլեցի ցրուիչի մը ձեռքէն առաջին օրինակը *«Մոսքուական սիրոր»* թերթին եւ, վերցուցէ, տպուած տեսայ իմ անունս բանաստեղծութեան տակ:

Գետինը կը դղրդար ոտքերուս տակ: Ինքզինքս հանգարեցի կը կարդէի:

Կրպակէ մը գնեցի շուրջ չիսուն օրինակ եւ, յոգեպանծօրէն պարզելով զանոնք՝ շտապեցի տուն: Երր մօրս ցոյց տուի գործս, ան գտաւ սա փաղաքշական խօսքը միայն.

— Զաւա՛կս, անուսնիկ հիմա դուն վերջնականապէս կորսուած ես:

Իրաւո՞ւնք ունէր արդեօք:

(«Կանխահաս ինքնակենսագրութիւն»)

ԵՒԳԵՆԻ ԵՒՏՈՒՇԵՆԿՈ

ԵՒՏՈՒՇԵՆԿՈՅԻ ՄԱՅՐԸ, ՏԷՄԻՐԱԻՊԱՇԵԱՆԻ ՄԱՅՐԸ ԵՒ ՄԱՐՔՍԻՆ ՄԱՅՐԸ...

●

Նախորդ էջին վրայ յիշատակուած «Բաց նամակ»ը կը յայտնէր, որ Եւտուշէնկոյի քսան տարիներու վաստակին նուիրուած եւ 16 Փետրուարին յայտարարուած երեկոյթը չեղեալ համարուած է, անհուն վիշտ պատճառելով բանաստեղծին:

Եւտուշէնկոյի վիշտը յիւեցուց մեզի իր մօր խօսքը:

Եւտուշէնկոյի մօր խօսքը՝ Եղիա Տէմիրճիպաշեանի մօր գուշակութիւնը:

Եղիա Տէմիրճիպաշեանի մօր գուշակութիւնը՝ Մարքսի մօր հաստատումը:

Եւտուշէնկոյի տպագրուած առաջին բանաստեղծութիւնը տեսնելով՝ մայրը.

— Զաւա՛կս, անուսնիկ հիմա դուն վերջնականապէս կորսուած ես:

Եղիա Տէմիրճիպաշեանի մայրը.

— Տղա՛ս, գրող եղար, ոճօքի պիտի մեռնիս:

Մարքսի մայրը.

— Քարլը աւելի լաւ ըրած պիտի ըլլար, եթէ Քափիթալի մասին գիրք մը գրելու փոխարէն՝ քափիթալ կուտակէր:

Ով գիտէ ինչե՛ր ըսած են դիմացի էջին վրայ Էնթընի Պըրկէսի կատարած ախտահանաչումներուն ծանօթ անգլիացի մայրերը, Տայլըն Թոմասի մայրը, Ճորճ Օրուէլի մայրը, Ուայթի մայրը:

Մենք, որ մեր գրականութիւնը լրջեալ գոյքի վերածելու հակամէտ եղած ենք միշտ ու մեր մայրերը շատ գոհ չեն մնացած իմացական արկածախնդրութիւններու մէջ նետուած իրենց զաւակներուն ընթացքէն, Եւտուշէնկոյի եւ Պրկէսի կազմած տոմարներուն հետ բաղդատած՝ աւելի բաց ճակատով կրնանք ներկայանալ աշխարհին: Ի հարկէ, մայ-

digitised by A.R.A.R.@

բերուն զգացական պատնէշները խորտակած ու արուեստի մարզերուն կարկառներ ժեւացուցած մեր արժանաւորները դլխու վրայ չենք պահած, ոմանք հալածած ենք նոյնիսկ ամօթալի մոլեգնութեամբ, քիչերը՝ անօթի ձգած, բայց ոեւէ մէկը չենք մեռցուցած, մեռածները մե՛նք չենք մեռցուցած, թշնամի ուժեր մեռցուցած են զանոնք, ներքինի Ադամմէզները, թալատինները, Բերիաները, մինչ տարբեր է ուրիշներուն պարագան։ Ռուսիոյ մէջ առաջ իշխանութիւններու օրօք «առաջ բանաստեղծներու ճակատագիրը գրեթէ եղերական եղած է», իսկ «Անգլիա լաւ չէ վարուած իր գրագէտներուն հետ։ Նոյնիսկ կը կարծեմ, որ եթէ կարենար զանոնք սպաննել, կը սպաննէր»։

Այս գժնդակ վերաբերումներուն ծանօթ՝ մայրերը միշտ հակազդեցութեան դիմեցին, բայց որդիները, բարեբախտաբար, չկրցան դիմանալ իրենց ներքին սատանաներուն սարքած փորձութիւններուն, անսովորը նուաճելու կոչին եւ նեռուեցան կրկէս։

Ահաւոր պիտի ըլլար աշխարհը, դատա՛ր, եթէ մայրերու բաղձանքներուն հաշտ հեռանկարներով մեծնային որդիները։ Զգացական նման մթնոլորտներուն մէջ ոսկոր ու հոգի կազմած տիպարը անծանօթ չէ աշխարհին, տնտեսական ծանօթ կենդանին է, ան՝ որ նիւթական միջոցներ ձեռք ձգելու օրէնքները կը սերտէ, կը տիրապետէ հանգամանքներուն, անօթի չի մնար՝ Տէմիրճիպաշեանին պէս, կորստեան չի մատնուիր՝ Եւտուշենկոյի պէս, կ'ապրի կուշտ եւ անխոով, կը տեսէ իր հաշուոյն ու կը չգանայ անշուք։

Բայց կեանքին պերազանցապէս պէտք եղողները միւսներն են, ըմբոստութեան առաջին դրօշակը մայրերուն դէմ ծածանող ընտիրները, անո՛նք, որ իրենց երկունքին ու տառապանքներուն ոսկին կ'ընծայեն մարդոց, ինչ փոյթ, որ այս վերջինները ըմբոստութեան անոնց վերջին արարը արիւնով կնքեն...

●

Անգլիա ինձ լաւ չէ վարուած իր գրողներուն հետ։ Նոյնիսկ կը կարծեմ, որ եթէ կարենար զանոնք սպաննել, կը սպաննէր։ Ասոր մէջ, Անգլիա շատ պարկեշտ է, որովհետեւ զանոնք կը նկատէ քանդիչներ։ Կամ քանի մը տխրաշուք պարագաներ։ Օրինակ, Տայլրն Թոմաս, որ անմնասպան եղաւ, որովհետեւ ելեւմտական նախարարութիւնը գրաւեց դրամատան իր գումարը եւ այլեւս ան դրամ չունեցաւ վճարելու իր տղուն կրթաթաշակը։ Կայ պարագան Ճորճ Օրվէլի, որ թոքախտէ մեռաւ, որովհետեւ աշխատաւորական կառավարութիւնը մերժեց յատկացում ընել՝ զայն Զուիցերիա դրկելու համար։ Կամ պարագան Թ. Մ. Ուայթի, որ տարիներ շարունակ գրելէ ու շատ քիչ դրամ շահելէ ետք, յանկարծ 80·000 սթերլին ստացաւ Արթիւր թագաւորի մասին գրուած գործի մը համար, որմէ պատրաստուեցաւ «Համլետ» երաժշտական թատերախաղը։ Հակառակ իր բոզոհներուն, ելեւմտական նախարարութիւնը տուրք դրաւ տարուան իր շահերուն վրայ եւ 75-000 սթերլին առաւ իրմէ։ Ուայթ մեռաւ առանց դահեկանի։

Խորհին մէջ, ատիկա ցոյց կու տայ թերեւ վերաբերում մը գրականութեան հանդէպ։ Կը յիշեմ գրագիտուհի մը, որ, քանի մը տարի առաջ, Արուեստներու Ազգային Խորհուրդէն ստացաւ կրթաթաշակ մը եւ երջանիկ էր, որովհետեւ այդ յատկացումին շնորհիւ պիտի կրնար «համառ քրիքէթի մրցումները տեսնելու երթալ ամէն կէսօրէ ետք»։ Այս վերաբերումը կը յատկանշէ անգլիական *ամաթէօրիզմը* գրականութեան մարզին մէջ։ Որովհետեւ, արհեստով գրողը կէսօրէ ետքերը կ'աշխատի։ Նուագախումբի խմբավարներ ասպետ կը դառնան, *հաքիներ՝* բրիտանական Կայսրութեան Կարգի հրամանատար, Մէրի Քուէնք շքանշան կը ստանայ *մինիժիւպը* նեարած ըլլալուն համար, բայց գրագէտները դիտումնաւոր կերպով կ'անտեսուին։

ԷՆԹԸՆԻ ՊԸՐԿԷՍ

digitised by A.R.A.R.@

ԼԱՒ ՉԷՐ, ԼԱՒ ՉԸՐԻՆ...

«Բագինի» ներկայ համարին առաջին էջին վրայ Համօ Սահեանի ուղղուած բարի գալուստի խօսքերը տպուած էին, երբ հրատարակող միութեան կողմէ կազմակերպուած բանաստեղծին 60ամեակի հանդիսութիւնը տեղի ունեցաւ քաղաքիս Գալուստ Կիւլպէնկեան թատերասրահին մէջ։ Բանաստեղծը ներկայացնելու համար խօսք տրուած էր Վահէ Վահեանին, Անդրանիկ Մանուկեանին եւ Գառնիկ Ադալեանին։

Ոչ մէկ խօսք այն մասին, որ յիշեալները ի վիճակի են նման առիթներով լրիւ կատարելու իրենց ստանձնած պարտականութիւնները։ Ներկաները լսեցին, բացականները կարդացին արտասանուած գնահատանքները։ Արդար էր ամէն բան եւ ոչ մէկ առարկութիւն կայ այդ կապակցութեամբ։

Բայց...

Այո՛, սոխպուած ենք գործածել այս պոռնիկ բառը՝ բա՛յց...

Մորհրդային Հայաստանէն կու գայ Սահեան, որուն կազմութիւնն ու ստեղծագործական առաջին ասոնմամեակը բարեդէպ չրջաններու չզուգադիպեցան, եւ ինք, ներսէն ու դուրսէն արձակուած ահաւոր մրրիկներուն մէջ, ուրիշներու կարդին՝ օրուան համարեա՝ բոլոր կարգախօսներուն արձագանգից յանդով ու շափով, Լենինը յանախ տուն-տեղ եղաւ իր բանաստեղծութիւններուն մէջ, պարտիան բացակայ չմնաց, Նոյեմբերը եկաւ, Հոկտեմբերը չգնաց, ընթերցողը տեսաւ նոյնիսկ կրեմլի պարիսպները եւ ասոնց աղգակից սառուցեալ ուրիշ «հարանցուներ», այսուհանդերձ ամբողջ հայութեան, ա՛նգամ նման նիւթերու հետ ըստ էութեան որեւէ առընչութիւն չունեցող հատուածներուն համարումը կը վայելէր ան, անո՛ր համար մանաւանդ, որ բանաստեղծութիւնը

Այդ-տրեան եռմն է իմ երակների,
Խռիերիս խորհուրդն ու խտացումն է,
Այդ-կրկնութիւնն է իմ անկրկնելի
Եւ իմ գոյութեան փոխհատուցումն է։

Դժբախտաբար, յորելինական հանդիսութեան միակողմանի գունաւորումը սոխպեց, որ հատուածներէն ամէնէն ատուարը չկարենայ հանդիսութեան օրը իր ներկայացուցչական անձնաւորութիւններով ու զանգուածով իր յարգանքը մատուցանել բանաստեղծին։

Աւելի նպատակայարմար չէ՞ր ըլլար արդեօք, որ գաղափարական նոյն թմբուկը զարնող երեք խօսողներէն մէկը դուրս մնար յայտագրէն եւ գիմացի ճակատէն ուրիշի մը խօսք տալով համահայկական բնոյթ մը տրուէր «Հայաստանում» այս բանաստեղծին նուիրուած երեկոյթին։

Հայրենի բանաստեղծ մը, մա՛նաւանդ Համօ Սահեանի որակով արժանաւոր մը հրատարակելը արժանաւոր գործ է, հիւրընկալները սակայն պէտք է նախանձախնդիր ըլլային անոր համայքին տարածման եւ չդնէին զայն միակողմանի այնպիսի՛ կացութիւններու մէջ, որոնցմէ ըստ բաւականին կուշտ կրբնայ ըլլալ ենթական։

Սպասուած վերաբերումը այս չէր։ Ընդհանրական ապրումներ բիւրեղացուցած բանաստեղծի մը շուրջ հաւաքական կշռոյթով պահ մը կարենալ ապրելու հնարաւորութիւնը նաեւ այլ նշանակութիւն ունի մեր ժողովուրդին համար ու պատեհ առիթներուն ներելի չէ մեզի հայուն չառնել այդ հանդամանքը։

Համօ Սահեան ամէնուն բանաստեղծն էր իր առնը դառնուած միջոցին, սակայն հոս, մեզի հետ եղած ատեն, հիւրընկալները պաշտօնական հանդիսութեամբ մը պաշտօնապէս կողմի մը բանաստեղծը ըրին զինք, ու լաւ բան մը չըրին վատահաբար։

digitised by A.R.A.R.@

ԹԵԼԱԴՐԱՆՔ

«Բագին» գրական ամսագրի աշխատակիցներէն եւ բաժանորդներէն կը խնդրեմ, որ այս յայտարարութենէն ետք, իրենց գրական եւ մտաւորական աշխատանքները ուղղեն Պօղոս Սնապեանին, իբրեւ պատասխանատու խմբագրի:

Իսկ վարչական եւ նիւթական խնդիրներու համար դիմել Ս. Արարատեանին, իբրեւ ամսագրին վարչական պատասխանատուն:

Մասնաւորաբար կը խնդրեմ, որ «Բագին»ի վերաբերող *չէք* չղրկուի իմ անունին:

Տարիքիս բերումով այլեւս պատասխանատու աշխատանքներուն չեմ կրնար հասնիլ: Բայց իմ գրական աշխատակցութիւնս պիտի շարունակեմ «Բագին»ին, իբրեւ հարազատ բեմի մը:

Կ. ՍԱՄՈՒՆԻ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

●

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ԶԱՐԹՕՆՔԻ ՇՐՋԱՆ, 1850–1885), Մ. Իշխան, Պէյրութ, 1973

ՑՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԶԷՆԿԻՒԼԷՐԻ ՀԱՅՈՑ (Ցուշեր), Սոնա Տէրէպէյեան, Փարիզ, 1973

---

digitised by A.R.A.R.@

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	20 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	4 Լ. ՈՍԿԻ

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

•

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՄՆԱՑԵԱՆ

Հեռաձայն՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN

Rue Selim Boustani

Beyrouth – Liban

digitised by A.R.A.R.@